21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

6 (82)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **6 (82), 2018**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)
Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.
Արամ Սաֆարյան
«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, բ.գ.թ.
Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն,
ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, բ.գ.թ.
Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)
Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր
Հրանուշ Հակոբյան
Իրավաբանության դոկտոր
Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)
Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ
Ջորջ Կոստոպուլոս
Կիբեռանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)
Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.
Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)
Վահագն Ագլյան
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Վարդան Հարությունյան
Տնտեսագիտության թեկնածու

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 6 (82), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մանուկյան
Հասարակարգի ընկալումը և դասակարգային գիտակցությունը Հայաստանում 4

Վահրամ Հովյան
Պետականություն և ինքնություն. հայ ինքնության կառուցվածքը սփյուռքում 21-րդ դարում 17

Արմեն Ղալեչյան
Տեղեկատվական ներազդման օպերացիաներ 30

Արման Մանասերյան
Խոշորացման գործընթացները տնտեսությունում և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմինների խնդիրները 40

Գայանե Հարությունյան
Արդյո՞ք ՀՀ-ում առկա են էկոլոգիական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրմանը նպաստող պայմաններ 53

Գայանե Զոբանյան
Սալաֆիականությունը/վահաբականությունն Ադրբեջանում 63

Լևոն Ռուխկյան
Նեոազատականություն հասկացությունը, գաղափարական հիմքերը 85

Հուշագիր հեղինակին 93

ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սամվել Մանուկյան*

Բանալի բառեր ՝ուսանողություն, ամբողջ հասարակություն, հասարակարգ, քաղաքական ռեժիմ, կոնտենտ անալիզ, հասարակագիտական գիտելիք։

Խնդիրը

«Հայաստանում երիտասարդական շարժումների զարգացումների շուրջ» հոդվածում[1] դիտարկվել է Հայաստանի ուսանողության շրջանում արդի հասարակարգի հիմնադրույթների վերաբերյալ գիտելիքի առկայությունը, գնահատվել են դրա մակարդակը, դիրքավորվածությունն ռուսանողության տարբեր շերտերում, ազդեցությունն արդի հասարակական շարժումների բնույթի վրա, ինչպես նաև կանխատեսվել են Հայաստանի ապագա վերնախավերի աշխարհընկալման որակը և դրանից բխող սոցիալական հակասությունները։ Ուսանողների հետազոտության դաշտային փուլը տեղի էր ունեցել 2014թ. դեկտեմբերին։

Ներկայացվող հոդվածում դիտարկվում է նույն խնդիրը Հայաստանի ամբողջ հասարակության մասշտաբով, ինչը թույլ է տալիս ընդլայնել ուսանողական հետազոտության արդյունքների շրջանակը՝ դրանք տարածելով Հայաստանի ամբողջ հասարակության վրա և մասնավորապես ստանալ հետևյալ հարցերի պատասխանները.

- ինչպիսի՞ն է արդի հասարակության հիմնադրույթների վերաբերյալ գիտելիքի մակարդակը հասարակության տարբեր շերտերում,
- ի՞նչ փոփոխություն է այդ գիտելիքը կրել ժամանակի ընթացքում,

---

* «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, սոց. գ. թ.։

[1] *Մանուկյան Ս.Ա.,* Հայաստանում երիտասարդական շարժումների զարգացումների շուրջ, 21-րդ ԴԱՐ, N5 (63), 2015, էջ 41-52։

- ինչպիսի՞ն է Հայաստանի կրթական համակարգի ազդեցությունն այդ փոփոխության վրա:

Ներկայացվող հոդվածում դիտարկվել է նաև Հայաստանի հասարակության մեկ այլ կարևոր բնութագիր, որն ունակ է էապես ազդելու հայաստանյան բոլոր քաղաքական և հասարակական զարգացումների վրա՝ **դասակարգային գիտակցության** առկայությունը և բնույթը հասարակության տարբեր շերտերում:

Հիշենք, որ Կ.Մարքսը դասակարգը սահմանել էր որպես մարդկանց մեծ խմբեր, որոնք տարբերվում են աշխատանքի միջոցների նկատմամբ սեփականության և աշխատանքի բնույթի տեսակետից:

Հետազոտության տվյալները հավաքագրվել են 2017թ. հունվարին համահայաստանյան ներկայացուցչական հետազոտության ընթացքում[1]:

Ի՞նչ հասարակարգ է այսօր Հայաստանում

Ինչպես 2015թ. ուսանողության, այնպես էլ 2017թ. Հայաստանի ամբողջ հասարակության շրջանում արդի հասարակության հիմնադրույթների վերաբերյալ գիտելիքի առկայությունը գնահատվել է «Ի՞նչ հասարակարգ է այսօր Հայաստանում» բաց հարցի[2] միջոցով: Հարցի ճիշտ պատասխանն է՝ «կապիտալիստական»: Տվյալների մշակման ընթացքում ճիշտ պատասխաններ են համարվել նաև 20-րդ դարի ընթացքում «կապիտալիզմ» տերմինի գաղափարախոսական փոխարինողները[3], մասնավորապես՝ «լիբերալ», «ազատական», «շուկայական», «ազատ շուկայական», «ձեռնարկատիրական»:

Հետազոտական կանխադրույթն այն է, որ եթե անձը չգիտի արդի Հայաստանի հասարակարգի անունը, ապա, շատ մեծ հավանականությամբ, չգիտի նաև այդ հասարակարգի բնույթը, օրինաչափությունները, զարգացման տրամաբանությունը, հակասությունների բնույթը և այլ հիմնարար դրույթներ, որոնք միանգամայն անհրաժեշտ են արդի աշխարհում Հայաստանի տեղի և դերի ճիշտ նույնականացման, Հայաստանի զարգացման խոչընդոտների ճիշտ սահմանման, ինչպես նաև Հայաստանի հասարակական

[1] «Կյանքի որակը Հայաստանում 2016»:

[2] Սոցիոլոգիական հետազոտություններում «Բաց» է կոչվում այն հարցը, որը տրվում է հարցվողներին՝ առանց որևէ հուշման: Հարցվողն ինքն է ձևակերպում պատասխանը: Հետազոտողները հետագայում ուսումնասիրում և դասակարգում են ստացված պատասխանները: Արդի սոցիոլոգիայում այդ մշակումը հաճախ իրականացվում է կոնտենտ անալիզի միջոցով:

[3] Տե՛ս *Гелбрайт Дж. К.,* Экономика невинного обмана: правда нашего времени, М., Издательство «Европа», 2009, 88 с.

պրոբլեմների ճիշտ ընկալման համար: Մյուս կողմից, կարևոր է նշել, որ եթե անձը ճիշտ գիտի, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում, ապա դրանից չի բխում, որ նա գիտի նաև վերը նշված դրույթները:

Այսինքն՝ վերը նշված հարցին տրված ճիշտ պատասխանների քանակը հասարակության այն շերտի ծավալի **վերին սահմանի գնահատականն է**, որը հնարավոր է, որ ունակ է ադեկվատ ընկալելու արդի իրականությունը: Հակադարձաբար, այդ հարցի ճիշտ պատասխանը չիմացողների քանակը Հայաստանի հասարակության այն շերտի ծավալի **ներքին սահմանի գնահատականն** է, ովքեր մեծ հավանականությամբ ունակ չեն ճիշտ հասկանալու արդի իրականությունը, որի հետևանքով հեշտությամբ կարող են ենթարկվել քաղաքական և հասարակական մանիպուլյացիաների:

Ուսանողների (2015թ.) և Հայաստանի հասարակության (2017թ.) պատկերն արդի հասարակարգի վերաբերյալ տեղեկացվածության տեսակետից տրված է Գծապատկեր 1-Ա-ում: Տվյալները ցույց են տալիս, որ արդի հասարակարգի անունը 2015թ. ճիշտ գիտեր ուսանողների 7%-ը, իսկ 2017թ.՝ հասարակության 6%ը: Հետևաբար, հիմնվելով վերոնշյալ չափանիշին՝ կարելի է առաջ քաշել այն դրույթը, որ.

Հայաստանի հասարակության շրջանում հասարակագիտական գիտելիքի մակարդակը շատ ցածր է: Հասարակության 94%-ը կարող է վերածվել քաղաքական և հասարակական տարաբնույթ մանիպուլյացիաների օբյեկտի:

Գծապատկեր 1





Ուսանողների և ամբողջ հասարակության գիտելիքի բնույթի հիմնական տարբերությունն այն է, որ ուսանողների սխալներն առավելապես բխում են արդի համալսարանական հասարակագիտական առարկաների ուսուցման բնույթից՝ **նրանք չեն տարբերում հասարակարգը քաղաքական**

ռեժիմից: Այս է պատճառը, որ Հայաստանում քաղաքական ռեժիմի փոփոխությունները, որոնք կարող են լինել ընտրությունների, քաղաքական շարժումների կամ վերնախավային հեղաշրջումների արդյունքում, կարող են ներկայացվել որպես **հեղափոխություն,** այդ հասկացության դրական բովանդակային տարրերի հետագա շահարկմամբ՝ դրական սպասելիքների ձևավորմամբ, որոնք նպաստում են նոր քաղաքական ռեժիմի հասարակական լեգիտիմության երկարաձգմանը:

Ընդ որում, հաշվի առնելով ուսանողների հասարակագիտական գիտելիքների շեղված բնույթը՝ ուսանողությունը և հասարակության կրթված հատվածը կարող են ենթարկվել մանիպուլյացիաների՝ նրանց ներարկելով արդիականության շեղված պատկերները ներկայացնող քաղաքագիտական տեսություններ:

Կրթության ազդեցությունը և բնույթը հասարակության շրջանում հասարակագիտական ադեկվատ գիտելքի ձևավորման հարցում

Գծապատկեր 1-Բ-ի տվյալները ցույց են տալիս, որ արդի հասարակության մասին գիտելիքի ձևավորման հարցում կրթությունն ունի չնայած փոքր, սակայն նկատելի ազդեցություն: Կրթամակարդակի աճը բարձրացնում է հասարակագիտական գիտելիքի մակարդակը: Եթե միջնակարգ և ավելի ցածր կրթամակարդակով անձանց շրջանում 3.6%-ը գիտի, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում, ապա միջնակարգ մասնագիտական կրթությամբ անձանց շրջանում ցուցանիշը 5.7% է, իսկ բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում՝ 9.1%: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում անտեղյակությունը, թե ինչպես է կոչվում արդի հասարակարգը, խիստ անբավարար է:

Մյուս կողմից՝ նույն Գծապատկերից երևում է, որ արդի հասարակարգի մասին տեղեկացվածությունը ժամանակի ընթացքում (տարիքի նվազմանը զուգընթաց) նվազում է: Ավագ տարիքի մարդկանց շրջանում (60 և ավելի տարեկան) այն 8.6% է, իսկ 18-29 տարեկանների շրջանում՝ 2.6%: Ակնհայտ է, որ այս երևույթը կապված է ոչ միայն կրթական համակարգի բովանդակության և որակի, այլև այն ինֆորմացիոն դաշտի բովանդակային առանձնահատկությունների հետ, որն առկա է արդեն ավելի քան քառորդ դար:

Վեր հանված ընդհանուր օրինաչափություններն ավելի ակնառու են դիտվում Գծապատկեր 2-ի տվյալներում, որտեղ ներկայացված են առան-

ձին հասարակական խմբերում դիտարկվող գիտելիքի մակարդակի ժամանակային շարքերը:

Բարձրագույն կրթության ոլորտում հասարակագիտական գիտելիքի խարխլման ինտենսիվությունն ակնառու է բարձրագույն կրթություն ունեցող անձանց տարիքային խմբերում դիտարկվող գիտելիքի առկայության մակարդակների փոփոխության համատեքստում (Գծապատկեր 2, վերևի չորս կապույտ սյուները): Բարձրագույն կրթությամբ 60 և ավելի անձանց շրջանում դիտարկվող գիտելիքի մակարդակը 15.3% է, որը մոտ 4.5 անգամ ավելի բարձր է, քան բարձրագույն կրթությամբ 18-29 տարեկանների շրջանում (3.5%): Ավելին՝ այն 5.3 անգամ ավելի բարձր է, քան 18-29 տարեկան ուսանողների (դեռ չունեն բարձրագույն կրթություն) շրջանում, որը հավասար է 2.9%-ի: Ընդ որում, եթե 2017-ին ուսանողության ցուցանիշը համեմատենք 2015թ. ուսանողական ցուցանիշի հետ՝ 7.0%, ապա այն նվազել է 2.5 անգամ: Այդ նվազումը բացատրվում է ոչ միայն ժամանակի ազդեցությամբ[1], այլև դիտարկվող սոցիոլոգիական երկու հետազոտություններում ուսանողական ընտրանքի առանձնահատկություններով: 2015թ. հետազոտությունում ուսումնասիրվել են **առկա ուսուցմամբ պետական բուհերի ուսանողները,** որոնց գիտելիքների մակարդակը քանիցս գերազանցում է **հեռակա ուսուցմամբ,** ինչպես նաև **մասնավոր բուհերի** ուսանողների գիտելիքները: 2017թ. ուսանողների ընտրանքում ընդգրկված են և՛ հեռակա ուսուցման, և՛ մասնավոր բուհերի ուսանողները:

Գիտելիքի մակարդակի անկումը դիտվում է նաև նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցող անձանց շրջանում (տե՛ս Գծապատկեր 2, ուսանողների տվյալներին անմիջապես հետևող կապույտ սյուների խումբը): Եթե 60 և ավելի տարեկան նախնական և միջին մասնագիտական կրթությամբ անձնաց շրջանում դիտարկվող գիտելիքի մակարդակը 8.0% է, ապա համանման կրթամակարդակով 18-20 տարեկանների շրջանում՝ 0% (!):

Դիտարկենք տնտեսական ակտիվության մակարդակի և տարիքի համատեղ ազդեցությունը դիտարկվող գիտելիքի մակարդակի վրա: 60 և ավելի տարեկան գործազուրկների շրջանում այն 18.2% է (ամենաբարձր ցուցանիշների շարքում է հետազոտության ընթացքում դիտարկված կրկնակի և եռակի փոխազդեցությունների համատեքստում), 46-60 տարեկան

[1] Հեղինակը դասավանդում է բուհերում և անձամբ դիտարկում է ժամանակի ազդեցության ինտենսիվացումը: Ուսանողների ընդհանուր գիտելիքների մակարդակը տարեցտարի ակնհայտորեն նվազում է:

գործազուրկների շրջանում ցուցանիշն ունի կտրուկ անկում մինչև 6.2%: Իսկ երիտասարդ՝ 18-29 տարեկան գործազուրկների շրջանում ցուցանիշը 1.9% է:

Գծապատկեր 2



Դիտենք ցուցանիշի դինամիկան տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբում, մասնավորապես՝ տնային տնտեսուհիների տարբեր տարիքային խմբերում: 60 և ավելի տարեկան տնային տնտեսուհիների շրջանում ցուցանիշի արժեքը 9.1% է, իսկ 18-19 տարեկանների շրջանում՝ 1.3%:

Ցուցանիշի [համեմատաբար] բարձր արժեքներ են դիտարկվել տնտեսապես ակտիվ բնակչության մի քանի մասնագիտական խմբերում: Մասնավորապես՝ ինքնազբաղված մասնագետների շրջանում (*freelancer*)՝ հաշվապահ, տնտեսագետ, դիզայներ, ճարտարապետ և այլն, այն կազմել է 11.2%, գործատուների շրջանում՝ 16.7%: Սակայն ցուցանիշն ամենաբարձրն է բարձրագույն կրթությամբ գործատուների շրջանում՝ 20.0%: Այս փաստն օրինաչափ է, քանի որ բարձրագույն կրթությամբ գործատուները կազմում են այն խումբը, որի անդամներն առավելագույնս գիտակցում են արդի հասարակարգի բովանդակային միջուկը՝ տնտեսվարման նպատակը շահույթի ստացումն է (այլ ոչ թե հասարակական պահանջմունքների առավելագույն բավարարումը[1]):

Դիտարկված համատեքստում արժե կատարել մի քանի կուրիոզ համեմատություններ: Մասնավորապես՝ դիտարկվող գիտելիքը 60 և ավելի տարեկան տնային տնտեսուհիների (տատիկների) շրջանում ավելի բարձր է, քան բարձրագույն կրթությամբ 18-29 տարեկանների, առավել ևս՝ ուսանողների շրջանում, 60 և ավելի տարեկան գործազուրկների շրջանում ավելի բարձր է, քան ինքնազբաղված [բարձրակարգ] մասնագետների շրջանում: Կուրիոզ համեմատությունների շարքը կարելի է ավելացնել:

Հայաստանի հասարակության վերաբերմունքի բնույթն արդի հասարակարգի նկատմամբ

2017թ. հարցման ընթացքում ստացված սխալ և ոչ ադեկվատ պատասխանների բովանդակային ուսումնասիրությունը, բոլոր պատասխանների համադրումը երկրի արդի վիճակի տարբեր բաղադրիչներից (ընդամենը 31 բաղադրիչ) բավարարվածության մակարդակների հետ, թույլ է տվել վեր հանել Հայաստանի հասարակության վերաբերմունքի բնույթը (դրական, չեզոք, բացասական) Հայաստանի արդի կապիտալիստական հասարակարգի նկատմամբ: Պատասխանների բաշխումը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

[1] Սակայն խնդրահարույց է, թե արդյոք հայաստանյան գործարարները տեղյակ են, որ կապիտալիզմում հաջողությունն ուղեկցում է նրանց, ովքեր հակված են մաքսիմիզացնել շահույթը ոչ թե «անմիջապես», այլ երկարատև ժամանակահատվածում:

Գծապատկեր 3

Հասարակության վերաբերմունքի բնույթը Հայաստանում առկա հասարակարգի նկատմամբ: Տոկոսները հաշվարկված են հասարակարգի վերաբերյալ որևէ պատասխան տված անձանցից (հարցվածների 49%-ը)



Գծապատկեր 4



Տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների այդ խմբում Հայաստանի արդի կապիտալիստական հասարակությանը բացասական է վերաբերվում 69%-ը: Բացասական վերաբերմունքն աճում է տարիքի աճին զուգահեռ և 60 և ավելի տարեկանների խմբում հասնում է 76%-ի: Բացասական վերաբերմունը հանրապետական միջինից բարձր է նաև Երևանում և ցածր բարեկեցությամբ խմբում:

Հետազոտության տվյալների բազմաչափ մեթոդներով կոնսոլիդացումը թույլ է տվել Հայաստանի հասարակության սեգմենտավորումն ըստ աշ-

խարհայացքային խմբերի: Առանձնացվել են երեք սեգմենտներ՝ «մաքուր սոցիալիստներ», որոնք կազմել են հասարակության չափահաս բնակչության 72%-ը, «մաքուր լիբերալներ»՝ 8%, և «միջանկյալ տիպեր»՝ 20%:

Դասակարգային գիտակցության տիպաբանության դիրքավորվածությունը

«Հասարակարգ» հասկացության հետ սերտորեն կապված է «դասակարգ» հասկացությունը: Մարքսիստական քաղաքագիտությունում և սոցիոլոգիայում առանձնացվում են «ինքնապարփակ դասակարգ» հասկացությունը, երբ դասակարգը դեռ չի գիտակցել իր առանձնահատուկ և օբյեկտիվորեն պայմանավորված շահերը և «դասակարգն՝ իր համար» հասկացությունը, երբ դասակարգն արդեն գիտակցել է այդ շահերը:

Հետազոտությամբ գնահատվել է, թե արդյոք Հայաստանի հասարակությունում առկա է դասակարգային գիտակցությունը, և եթե այո, ապա ի՞նչ ծավալ են կազմում դասակարգային գիտակցություն կրող շերտերը: Դրա համար տրվել է բաց հարց[1]. «Ո՞ր դասակարգին եք Դուք պատկանում»:

Գծապատկեր 5



Պատասխանների բաշխումը (Գծապատկեր 5) հուշում է, որ Հայաստանում դասակարգային գիտակցությունն առկա է բնակչության 9.7%-ի շրջանում: Ընդ որում, այն առավելապես դիրքավորված է բանվորների շրջանում: Որպես բանվոր իրեն նույնականացրել է հարցվածների 5.8%-ը: Երկրորդը մտավորականությունն է, որպես մտավորական իրեն նույնա-

[1] «Կյանքի որակը Հայաստանում 2016»:

կանացրել է հարցվածների 2.5%-ը: Հարկ է հատուկ նշել, որ ներկայացված թվերն այդ դասակարգի և խավի իրական ծավալները չեն, այլ նրանց, ովքեր իրենց նույնականացրել են (առանց զրուցավարի կամ հարցաթերթի հուշման) որպես այդպիսին: Վերապահումներով կարելի է այս խմբերը համարել համապատասխան «դասակարգն իր համար» շերտերի ծավալ:

Գծապատկեր 6



Հայաստանի հասարակության 30.3%-ը չունի դասակարգային, կամ խավային, կամ որևէ այլ տիպաբանությանը պատկանող ձևավորված գիտակցություն, կամ՝ չեն հասկացել հարցը:

Հայաստանի հասարակության ամենամեծ սեգմենտում՝ 60.2%, առկա է «ուղղագիծ հիերարխիկ» գիտակցություն, երբ մարդն իրեն դիրքավորում է առօրեական պարզ և հասկանալի հասկացություններով կառուցված «բարձր - ցածր» սանդղակի որևէ հատվածում, որն ըստ էության մոտ է դասակարգային/խավային գիտակցության բացակայությանը: Այդ մարդկանց 47.8%-ը իրեն անվանել է «միջին [դասակարգ]», 1.0%-ը՝ «բարձր», իսկ 11.3%-ը՝ «ցածր»:

Ինչպես և արդի հասարակարգի անվան դեպքում, դասակարգային գիտակցությունն առավելապես ձևավորված է (կամ, ավելի շուտ՝ պահպանված) բարձր (60 և ավելի տարեկան) և միջին (46-60 տարեկան) տարիքային խմբերում, բարձրագույն տարիքային խմբում, Երևանում և քաղաքներում:

Եզրակացություններ

Հայաստանի հասարակության շրջանում հասարակագիտական գիտելիքի մակարդակը շատ ցածր է՝ հասարակության 94%-ը տեղյակ չէ արդի հասարակարգի էությանը, զարգացման շարժիչ ուժին և դրա բնույթին, զարգացման օրինաչափություններին և հակասությունների առաջացման հիմնական պատճառներին: Դրա հետևանքով Հայաստանի հասարակությունը, ժամանակակից մանիպուլյացիոն տեխնոլոգիաների բարձր զարգացածության պայմաններում, հեշտությամբ վերածվում է քաղաքական և հասարակական տարաբնույթ մանիպուլյացիաների օբյեկտի:

Հայաստանի հասարակության բացարձակ մեծամասնությունը՝ մոտ 70%, բացասական է ընկալում Հայաստանի արդի հասարակարգը[1]: Բացասական վերաբերմունքի ո՞ր հատվածն է պայմանավորված բուն հասարակարգին ներհատուկ առանձնահատկություններով և ո՞ր հատվածը՝ վատ կառավարմամբ՝ մնում է խնդրահարույց և հանդիսանում է հետագա ուսումնասիրությունների խնդիր:

Հայաստանի հասարակության 72%-ն ուներ «մաքուր սոցիալիստական» աշխարհայացք, որը, սակայն, այդ շերտի անդամների բացարձակ մեծամասնության մոտ ձևավորված չէր որպես քաղաքական գաղափարախոսություն: Երկրում «մաքուր լիբերալ» աշխարհայացքով սեգմենտի ծավալը մոտ 8% է, իսկ հասարակարգային հարացույցի նշված երկու իդեալական տիպերի միջև գտնվող «միջանկյալ աշխարհայացքներ» կրող սեգմենտի ծավալն է մոտ 20%:

Հայաստանի հասարակությունում դասակարգային գիտակցությունը, համեմատած խորհրդային շրջանի, հետզարգացում է ունեցել: Դասակարգային գիտակցությունն առկա է հասարակության չափահաս հատվածի մոտ 10%-ի շրջանում, մասնավորապես՝ մտավորականության (որը շարունակում է իրեն գիտակցել որպես առանձին խավ) և բանվորների: Բանվոր դասակարգին պատկանելու գիտակցությունն առկա է Հայաստանի չափահաս բնակչության 5.8%-ի շրջանում, սակայն պարզ է, որ այդ գնահատականը Հայաստանում բանվորների թվաքանակը չէ:

Դասակարգային/խավային գիտակցության թերզարգացածությունը կարևոր գործոններից է, որը խոչընդոտում է Հայաստանի քաղաքական

[1] Հիշենք, որ հետազոտությունն իրականացվել է 2017թ. հունվարին: Հաշվի առնելով 2018թ. ապրիլյան իրադարձությունները, որոնք հանգեցրին իշխանափոխության, այս գնահատականն անհրաժեշտ է նորից հաշվարկել, սակայն հետհեղափոխական էյֆորիայի և դրական ակնկալիքների կտրուկ աճի ազդեցության հանդարտացումից հետո:

համակարգի զարգացմանը: Ձևավորված դասակարգային/խավային գիտակցությամբ հասարակության համապատասխան շերտերն ունակ չեն հստակ ձևակերպել իրենց պահանջները քաղաքական համակարգին: Դրա հետևանքով արդյունավետ կուսակցական գործունեության և գաղափարախոսության են վերածվում պոպուլիզմն ու պատեհապաշտությունը (օպորտունիզմը):

Մյուս կողմից՝ դասակարգային/խավային գիտակցության խարխլմանը նպաստող և ձևավորմանը խոչընդոտող հիմնարար պատճառ է Հայաստանի թույլ տնտեսական համակարգը, որն ունակ չէ հասարակության անդամներին առաջարկել եթե ոչ կայուն աշխատանք, ապա գոնե կայուն կարգավիճակ:

Նոյեմբեր, 2018թ.

ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հայաստանի հասարակության շրջանում հասարակագիտական գիտելիքի մակարդակը ցածր է՝ հասարակության 94%-ը տեղյակ չէ արդի հասարակարգի էությանը, զարգացման շարժիչ ուժին և դրա բնույթին, զարգացման օրինաչափություններին և հակասությունների առաջացման հիմնական պատճառներին: Դրա հետևանքով Հայաստանի հասարակությունը, ժամանակակից մանիպուլյացիոն տեխնոլոգիաների բարձր զարգացածության պայմաններում, հեշտությամբ վերածվում է քաղաքական և հասարակական տարաբնույթ մանիպուլյացիաների օբյեկտի:

ВОСПРИЯТИЕ ПОЛИТИЧЕСКОГО СТРОЯ И КЛАССОВОЕ СОЗНАНИЕ В АРМЕНИИ

Самвел Манукян

Резюме

У армянской общественности низкий уровень обществоведческих знаний: 94% населения не в курсе сути нынешнего политического строя, его движущей силы и ее характера, закономерностей развития и основных причин возникновения противоречий. Вследствие этого общественность Армении, в условиях высокой развитости современных манипуляционных технологий, легко превращается в объект разнообразных политических и общественных манипуляций.

PERCEPTION OF THE SOCIAL ORDER AND CLASS CONSCIOUSNESS IN ARMENIA

Samvel Manukyan

Resume

The social science knowledge in the Armenian society is low: about 94% is not aware of the modern social order's essence, driving force and nature, development patterns and main causes for conflicts. Due to this the Armenian society is an easy target for various political and social manipulations, especially in the current conditions of modern manipulative technologies.

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վահրամ Հովյան[*]

Հոդվածը նվիրվում է հայոց պետականության
վերականգնման 100-ամյակին

Բանալի բառեր ՝ սփյուռք, ինքնություն, պետականություն, ապակենտրոնհորիզոնական կառուցվածք, կենտրոնաձիգ-ուղղահայաց կառուցվածք։

Ազգային ինքնության ներկա վիճակը սփյուռքում

Հայկական սփյուռքի առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկը ինքնության կորուստն է, քանզի ազգերը մեռնում են ոչ թե ֆիզիկապես, այլ հոգեպես։ Անգամ խոշորամասշտաբ կոտորածների ու ցեղասպանությունների միջոցով հնարավոր չէ ֆիզիկապես ոչնչացնել որևէ ժողովրդի ամբողջությամբ։ Թե՛ հայերը, թե՛ հրեաները և թե՛ ցեղասպանության ենթարկված այլ ժողովուրդներ, չնայած ահռելի մարդկային կորուստներին, այնուամենայնիվ, չեն վերացել աշխարհից։ Փոխարենը վերացել են այն ժողովուրդները, որոնք, թեև չեն ենթարկվել ցեղասպանության, բայց դատապարտվել են հոգևոր մահվան, այն է՝ կորցրել են ազգային նկարագիրը և ձուլվել այլ ժողովուրդներին։

Հայ ինքնությունը սփյուռքում տասնամյակներ շարունակ[1] հիմնված է եղել լեզվի, կրոնի, ազգային մշակույթի, ցեղասպանության հիշողության,

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

[1] Չնայած դարերի ընթացքում հայրենի երկրից հայերի արտագաղթին և արտերկրում հայկական գաղթօջախների բազմադարյա գոյությանը, այնուամենայնիվ, գիտական շրջանակներում ընդունված է այն տեսակետը, որ հայկական սփյուռքը ցեղասպանության հետևանք է։ Համարվում է, որ նախքան ցեղասպանությունը եղել են պարզապես հայկական գաղթօջախներ հայրենիքից դուրս, իսկ սփյուռքը՝ որպես բովանդակ ամբողջություն, ձևավորվել է ցեղասպանության հետևանքով։

հայկական ավանդական ընտանիքի պահպանման գաղափարների վրա, որոնք էլ հանդես են եկել որպես ազգային ինքնագիտակցության բաղադրիչներ: Սակայն բոլոր այս բաղադրիչներն էլ ժամանակի ընթացքում նահանջ են ապրել: Նրանց թուլությունն ու խոցելիությունն ակնհայտ երևում են ժամանակի ու տարածության մեջ:

Ժամանակային առումով հայ ինքնության բաղադրիչների կորուստն ակնհայտ իրեն ցույց է տվել դեռևս հայկական սփյուռքի ձևավորման վաղ փուլում՝ 1920-30-ական թթ., երբ սփյուռքը կազմում էին ցեղասպանության ենթարկվածների առաջին սերնդի ներկայացուցիչները, ինչի մասին ահազանգել են ժամանակի հայ մտավորականներն ու հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչները: Օրինակ, ազգային խնդիրներով մտահոգ Շահան Նաթալին դեռևս 1920-ական թթ. գրում է. «Չենք կարծեր, որ ռեւէ մէկը յաւակնի Ֆրանսիայի մէջ գտնուող Հային միայն մէկ տասնեակ տարի յետոյ ֆրանսերէն լեզուին փոխարէն հայերէնը խօսիլ տալ» [1, էջ 38]: Իսկ Գարեգին Նժդեհը նույն խնդրի առնչությամբ 1930թ. գրում է. «Կասկածէ դուրս է եւ այն, որ հայութեան տարագիր կէսի համար – եթէ օր առաջ չհոգեփոխուեց – սակաւաթիւ տարիներ են պէտք, որպէսզի նրա կեանքում մահուան տրագիզմը տեղի տայ հոգեւոր ինքնասպանութեան առջեւ, որպէսզի հայ homo-ն դառնայ homunculus եւ մեռնի ապազգայնացմամբ» [2, էջ 464]:

Տարածության մեջ հայկական ինքնության բաղադրիչների կորուստն ակնհայտ երևում է այն բանում, որ նույնիսկ սփյուռքի ամենաավանդական համայնքներում՝ Մերձավոր և Միջին Արևելքում, դրանք ակնհայտ նահանջ են ապրում: Դա դրսևորվում է ինչպես խառնամուսնությունների աճով, այնպես էլ հայկական դպրոցներ հաճախողների թվաքանակի նվազմամբ, լեզվի տիրապետման, մշակութային հաղորդակցության նահանջով և ազգային ինքնագիտակցության ձևափոխմամբ:

Այսպիսով, կյանքը ցույց է տվել, որ ազգային ինքնության ավանդական հենասյուները, թեև ժամանակի ընթացքում որոշակիորեն կարողացել են ապահովել հայ ինքնության պահպանումը սփյուռքում, այնուամենայնիվ, ներկայում միայն դրանց միջոցով այլևս հնարավոր չէ լուծել սփյուռքում ազգային ինքնության պահպանման խնդիրը: Հետևաբար, առաջ է գալիս նոր մոտեցումների հրամայականը:

Հայոց պետականությունը՝ սփյուռքում ազգային ինքնության առանցք

21-րդ դարում սփյուռքահայության շրջանում ազգային ինքնության հենասյուն կարող է դառնալ հայոց պետականության գաղափարը: Վերջինս ընդհանուր առմամբ հանգում է հզոր հայրենի պետություն կերտելու գաղափարին՝ որպես համայն հայության հարատևման ու զարգացման երաշխիք, քանի որ «Ինքնիշխան պետականությունը հայրենի հողի վրա ազգի ֆիզիկական ու հոգևոր գոյատևման ու բարգավաճման, ազգային ինքնությունը պահպանելու գլխավոր երաշխիքն է» [3, էջ 33]:

Այն, ըստ էության, հանգում է անգամ պետականակենտրոնության գաղափարին, քանի որ այդ դեպքում պետության շահը, նրա անվտանգության ու զարգացման հարցերը վեր են դասվում անհատական, խմբակային, կուսակցական և այլ շահերից [մանրամասն տե՛ս 4, էջ 53-59]: Յուրաքանչյուր հայ անհատի, խմբի, կուսակցության և այլնի (լինի սփյուռքում, թե հայրենիքում) մտահոգության թիվ մեկ առարկան դառնում է Հայաստանի՝ որպես համայն հայության ազգային պետության հզորացումը:

Հզոր հայկական պետականության կերտման գաղափարախոսությունը՝ որպես սփյուռքում հայ ինքնության պահպանման հենասյուն, ունի առավելություններ ինքնության այլ բաղադրիչների նկատմամբ: Առաջին հերթին, դա նրա միավորիչ հատկությունն է: Վերջինս բխում է այն հանգամանքից, որ հզոր հայրենիքի գաղափարը չի ենթադրում շերտավորումներ կամ մասնատվածություն:

Ինչպես հայտնի է, սփյուռքը միատարր հանրույթ չէ: Այն տարբեր չափորոշիչներով՝ լեզվական, կրոնադավանանքային, կուսակցական, տարածքային և այլն, բաժանվում է բազմաթիվ խմբերի.

- *Լեզվական* չափորոշիչով սփյուռքը բաժանվում է հայախոսների և ոչ հայախոսների: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են այն լեզուներով խոսող հանրույթների, որոնց տիրապետում են որպես առաջին լեզու (անգլիախոսներ, ֆրանսախոսներ, ռուսախոսներ և այլն):
- *Կրոնադավանանքային* հիմքով սփյուռքը բաժանվում է նախ՝ քրիստոնյա հայերի և հիմնականում իսլամացված հայերի սերունդների: Իսկ քրիստոնյա հատվածն իր հերթին բաժանվում է տարբեր հարանվանությունների՝ դավանանքային ուղղությունների պատկանող հայերի (հիմնականում՝ հայ առաքելականներ, կաթողիկեներ, ավետարանականներ):

- *Կուսակցական* չափորոշիչով սփյուռքը բաժանվում է դաշնակցական, հնչակյան և ռամկավար ազատական շերտերի՝ ՀՅԴ, ՍԴՀԿ և ՌԱԿ կուսակցությունների անդամների և համակիրների, ինչպես նաև անկուսակցականների՝ որևէ կուսակցության չպատկանող և չհամակրող հայերի:
- *Տարածքային* չափորոշիչով սփյուռքը բաժանվում է տարբեր տարածաշրջանների ու երկրների հայ համայնքների, որոնք, իրենց վրա կրելով տարբեր լեզվական և քաղաքակրթական ազդեցություններ, այդ կերպ տարբերվում են միմյանցից: Տարբեր տարածաշրջանների ու երկրների հայ համայնքները կարող են միմյանցից տարբերվել նաև աշխարհաքաղաքական կողմնորոշումների առումով (օրինակ՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի հայ համայնքները):

Հայ ինքնության ավանդական հենասյուներից միակը, որը չի ենթադրում ներքին տարաբաժանումներ, ցեղասպանության հիշողությունն է: Սակայն վերջինս սփյուռքում, հայ ինքնության փոխակերպման հետ մեկտեղ, ինքն էլ է ենթարկվում փոխակերպման՝ դիտվելով որպես տվյալ երկրի պատմության մի մաս:

Արտերկրի հայ համայնքների ներկայացուցիչները, խորապես ընդելուզվելով իրենց երկրների հասարակությունների մեջ, կրում են ինքնության փոփոխություն, օրինակ՝ *ամերիկաբնակ կամ ֆրանսաբնակ հայից* վերածվելով *հայկական ծագմամբ ամերիկացու կամ ֆրանսիացու*: Եթե առաջինի դեպքում անձի ազգային ինքնությունը հայ լինելն է, իսկ ամերիկաբնակ կամ ֆրանսաբնակ լինելը՝ սոսկ հատկանիշ, որը ցույց է տալիս նրա բնակության վայրը, ապա երկրորդի պարագայում անձի ինքնությունն արդեն ֆրանսիացի կամ ամերիկացի լինելն է, իսկ հայկական ծագումը կրկին սոսկ հատկանիշ է, որն այս անգամ բնութագրում է նրա արմատները: Այս երևույթը հատկապես բնորոշ է արևմտյան երկրների հայ համայնքներին, որտեղ անձի ազգային ինքնության որոշման հարցում գերակայությունը տրվում է քաղաքացիական՝ տվյալ պետությանը պատկանելության, այլ ոչ թե էթնիկ բաղադրիչին:

Ինքնության փոխակերպումը տեղի է ունենում ոչ միայն հայ համայնքի ներկայացուցիչների ինքնընկալումներում, այլև ընդունող հասարակության ընկալումներում: Հատկապես արևմտյան (ամերիկյան, ֆրանսիական և այլն) հասարակությունները, որտեղ պետությունը վարում է քաղաքա-

ցիական հիմքով էթնիկ խմբերի կլանման քաղաքականություն, դիտում են ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ հայ համայնքներին, նախ և առաջ որպես ամերիկացիներ, ֆրանսիացիներ և այլն՝ անկախ իրենց էթնիկ պատկանելությունից:

Միացյալ Նահանգներում, օրինակ, դա արտացոլվում է երկրի նախագահների, այլ պետական գործիչների՝ հայ համայնքին ուղղված ուղերձներում, որոնք հիմնականում առնչվում են ցեղասպանությանը: Բերենք որոշ օրինակներ.

- ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ կրտսերը 2008թ. ապրիլքսանչորսյան ուղերձում ասում է. «Մենք երախտագետ ենք այն բազմաթիվ ներդրումների համար, որ *հայկական ծագմամբ ամերիկացիները* (ընդգծումը հեղինակինն է- *Վ.Հ.*) կատարել են մեր պետության մեջ» [5, էջ 116]:
- Նույն թվականի հունվարի 19-ին նախագահի թեկնածու Բարաք Օբաման նախընտրական արշավի շրջանակներում հայտարարում է. «Ես հպարտ եմ իմ հաստատուն դիտարկումներով այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են Միացյալ Նահանգներում բնակվող մեկ և կես միլիոն *հայկական ծագմամբ ամերիկացիներին* (ընդգծումը հեղինակինն է- *Վ.Հ.*)» [5, էջ 117]:
- 2009թ. ապրիլի 24-ին արդեն նախագահ Բ.Օբաման նշում է. «Ամերիկայի Միացյալ Նահանգները հարուստ երկիր է մեծապես *հայկական ծագում ունեցող շատ ամերիկացիների* (ընդգծումը հեղինակինն է- *Վ.Հ.*) շնորհիվ, ովքեր իրենց ավանդն են ունեցել մեր հասարակության մեջ ...» [5, էջ 159]:
- 2010թ. ապրիլի 24-ին Բ.Օբաման նշում է. «*Հայկական ծագումով ամերիկացիների սերունդները* (ընդգծումը հեղինակինն է- *Վ.Հ.*) հարստացրել են մեր համայնքները, խթանել են տնտեսությունն ու ամրապնդել ժողովրդավարությունը» [5, էջ 160]:

Հայ ինքնության հիշյալ փոխակերպման հետևանքով ցեղասպանության պատմական հիողությունն էլ է ենթարկվում փոխարկման՝ ներծծվելով այդ երկրների պատմության մեջ և դիտվելով որպես ԱՄՆ-ի, Ֆրանսիայի կամ այլ երկրների պատմության մի մաս (հայոց պատմության մաս լինելուն զուգահեռ կամ նույնիսկ՝ դրանից առավել): ԱՄՆ հայ համայնքի օրինակով այս երևույթը ցույց է տվել ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հ.Մարությանը [տե՛ս 6, էջ 47-54]:

Եվ ինչպես ինքնության, այնպես էլ ցեղասպանության պարագայում սույն փոխակերպումը տեղի է ունենում ոչ միայն հայ համայնքների ինքնընկալումներում, այլև ընդունող հասարակության կամ երկրի ընկալումներում, ինչի դրսևորում է այն, որ Հայոց ցեղասպանության մասին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի 2015թ. ապրիլյան «...ուղերձում բացակայում է անդրադարձ Հայաստանին և աշխարհի հայությանը, ինչպես նաև Թուրքիային: Ցեղասպանության հիշատակումը ներկայացված է որպես *ներամերիկյան խնդիր* (ընդգծումը հեղինակինն է- *Վ.Հ.*)» [5, էջ 79]:

Պետականակենտրոնության կամ հզոր հայրենի պետության գաղափարախոսությունը շահեկանորեն տարբերվում է ազգային ինքնության վերոհիշյալ ավանդական հենասյուներից հետևյալ հատկանիշների շնորհիվ.

1. Նախ, ինչպես արդեն նշվեց վերը, այն չունի բաժանարար հատկություն: Հակառակը՝ միավորում է տարալեզու, տարադավան, տարբեր կուսակցությունների պատկանող կամ համակրող, տարբեր տարածաշրջաններում ու երկրներում ապրող հայերին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:
2. Ի տարբերություն ցեղասպանության պատմական հիշողության, այն զերծ է այլ ժողովուրդների պատմական հիշողության մեջ ներծծվելու, այլ երկրների պատմության մաս դառնալու վտանգից:

Ներքին և արտաքին նախադրյալները

Հայ ժողովրդի պարագայում պետականակենտրոնության կամ հզոր պետություն կերտելու գաղափարախոսության՝ ազգային ինքնության հենասյուն դառնալու համար առկա են և՛ ներքին, և՛ արտաքին նախադրյալներ: Ներքինն այն է, որ ներկայի հայկական զույգ պետությունները՝ ՀՀ-ն և ԱՀ-ն, առավելագույնս են համապատասխանում ազգային պետության նկարագրին՝ հաշվի առնելով նրանց բնակչության առավելագույն էթնիկ միատարրությունը: Ասել է թե՝ սա այն դեպքն է, երբ ազգ և պետություն հասկացությունները գրեթե նույնանում, դառնում են հոմանիշներ:

Ամերիկյան քաղաքագիտության հսկաներից Սեմյուել Հանթինգթոնն առանձնացնում է ազգային ինքնության երկու տեսակ՝ քաղաքացիական և էթնիկ [տե՛ս 7, p. 29]: Հայաստանն այն դեպքն է, երբ ինքնության հիշյալ երկու տեսակները ոչ միայն հակադրության մեջ չեն մտնում միմյանց հետ, այլև ներդաշնակ համատեղվում են: Շնորհիվ ՀՀ և ԱՀ էթնիկ միատարրության և հայ ժողովրդի մոտ պատմականորեն ձևավորված ու ամրապնդված

բարձր ազգային ինքնագիտակցության, ինչպես անհատական, այնպես էլ հավաքական ընկալումներում ինքնության քաղաքացիական-տարածքային (պատրիոտիզմ) և էթնիկ-ծագումնաբանական (նացիոնալիզմ) [տե՛ս 7, p. 29] ձևերը միաձուլվում են՝ կազմելով մեկ ամբողջություն։

Ինչ վերաբերում է արտաքին նախադրյալներին, ապա դրանք վերջին շրջանում միջազգային ասպարեզում, մասնավորապես՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ նկատվող միտումներն են։ Ելույթ ունենալով ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի 73-րդ նստաշրջանում (2018թ. սեպտեմբեր)՝ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ը հրաժարվում է գլոբալիզմից և նախապատվությունը տալիս է պատրիոտիզմին[1]։ Չխորանալով մանրամասների մեջ (թեմայից չշեղվելու նպատակով)՝ նշենք միայն, որ հիշյալ հայտարարությունն իր արտացոլումը գտնում է նաև գործնական քաղաքականության մեջ։

Եթե ԱՄՆ-ի նման մեծ տերությունն է գիտակցում պատրիոտիզմի, այն է՝ հզոր պետություն ունենալու անհրաժեշտությունն իր բնակչության բարեկեցությունն ու հարատևությունն ապահովելու համար, ապա Հայաստանի պես երկրներն առավել ևս պետք է տեղ տան այդ գաղափարին։ Եվ եթե ԱՄՆ-ը գնում է այդ ճանապարհով, ապա այլ երկրները, այդ թվում՝ Հայաստանը, կարող են որդեգրել նույն սկզբունքը։

Հայրենադարձության գործոնը

Հզոր ազգային պետականությունը կարող է լինել սփյուռքում հայ ինքնության պահպանման առանցք նաև հայրենադարձության գաղափարախոսության տեսանկյունից։ Չէ՞ որ որևէ ժողովրդի պարագայում արտերկրում ազգային ինքնության պահպանումն ինքնանպատակ չէ։ Դրա վերջնանպատակը վերադարձն է հայրենիք։ Եթե չկա հայրենիք վերադառնալու խնդիր, ապա ինքնության պահպանումն էլ մեծ հաշվով զրկվում է իմաստից։

Մենք հեռու ենք հայրենադարձությունը պարզ միգրացիայի հանգեցնելու գայթակղությունից, երբ մարդիկ աղքատ և անապահով երկրներից տեղափոխվում են հարուստ և անվտանգ երկրներ։ Հասկանալի է, որ հայրենադարձության պարագայում՝ ի տարբերություն պարզ միգրացիայի, կարևոր դերակատարություն ունի հոգևոր-գաղափարական գործոնը՝ հայրենիք վերադառնալու ներքին մղումը[2]։

[1] Ելույթի տեսագրությունը տե՛ս https://www.youtube.com/watch?v=KKrpEuyEHqc

[2] Դա ապացուցվել է ինչպես հայրենի, այնպես էլ միջազգային փորձով, ինչի վրա, թեմայից չշեղվելու նպատակով, չենք ծանրանում՝ հարցի քննությունը թողնելով այլ պատեհ առիթի։

Դրանով հանդերձ, հարկ է հաշվի առնել, որ ներկայում սփյուռքահայությունը կազմում է ցեղասպանության ենթարկվածների ու տարագրվածների չորրորդ սերունդը, որի ազգային ինքնագիտակցության մակարդակը համեմատաբար նվազել է: Հետևաբար, բացի հայրենասիրական մղումներից, մեր օրերում հայրենադարձության համար կարևոր գործոններ են նաև հայրենի պետությունում անվտանգության և բարեկեցության մակարդակը, ինչը կրկին հանգում է վերջինիս հզորության գաղափարին:

Հզոր պետականություն և ազգային ինքնություն

Այսպիսով, կայացած ու հզոր ազգային պետականությունն ունի բոլոր նախադրյալները սփյուռքում դառնալու հայ ինքնության հենասյուն: Ասվածը բնավ չի նշանակում, որ այն իրենով պետք է փոխարինի ինքնության մյուս բաղադրիչներին՝ լեզու, կրոն, մշակույթ, պատմական հիշողություն և այլն: Այն պարզապես պետք է լինի սփյուռքահայի ազգային ինքնագիտակցության առանցքում՝ իրենով սնելով և ուժեղացնելով նաև հայ ինքնության մյուս բաղադրիչները:

Իսկ դրա իրականացման եղանակը հետևյալն է: Հզոր հայրենի պետականությունը.

1. ազատում է սփյուռքահայությանը պետականազուրկ ժողովրդի բարդույթից,
2. ներշնչում է ազգային հպարտության (հայությանը պատկանելու հպարտության) զգացում,
3. մղում է ամրապնդելու և ավելի վառ կերպով արտահայտելու հայությանը սեփական պատկանելությունը, ինչն էլ իր հերթին մղում է սփյուռքահային առավել նախանձախնդիր լինել հայոց լեզվի, քրիստոնեական հավատի, հայ մշակույթի, պատմական հիշողության պահպանման և ամրապնդման հարցում,
4. մղում է նաև մասնակից լինել հայրենի պետականության (ՀՀ և ԱՀ) շարունակական զարգացումն[1] ու հզորությունն ապահովելու գործին:

[1] Մեր օրերում բավական շատ է օգտագործվում «մարտահրավեր» հասկացությունը: Կարծում ենք, 21-րդ դարում յուրաքանչյուր պետության և ազգի համար ամենալուրջ մարտահրավերներից մեկը սեփական երկրի շարունակական զարգացման ապահովումն է: Այստեղ «զարգացում» հասկացությունն օգտագործվում է ամենալայն իմաստով՝ տնտեսական, գիտակրթական, տեխնոլոգիական, մշակութային, ռազմական, ժողովրդագրական և այլն: Առանց շարունակական և համապարփակ զարգացման ցանկացած պետություն դատապարտված է հետամնացության և վերջնարդյունքում՝ գաղութացման զարգացած պետությունների կողմից: Պատահական չէ, որ հաճախ «անվտանգություն» և «զարգացում» հասկացությունները դիտվում են որպես հոմանիշներ, քանզի առանց ցարգացման անհնար է ապահովել, անգամ պատկերացնել որևէ երկրի անվտանգությունը:

Այսպիսով, ձևավորվում է յուրահատուկ «փակ շրջան», սակայն ոչ թե բացասական, այլ դրական իմաստով: Մի կողմից՝ հզոր ազգային պետականությունն է ապահովում ազգային ինքնագիտակցության վերելքը սփյուռքում, իսկ մյուս կողմից՝ բարձր ազգային ինքնագիտակցությունը մղում է սփյուռքին գործուն մասնակցություն ունենալ հայրենի պետության զարգացմանը՝ ապահովելով վերջինիս հզորությունը: Այս կերպ հզոր հայկական պետականությունը և բարձր ազգային ինքնագիտակցությունը սփյուռքում դառնում են միմյանց փոխլրացնող և միմյանց գոյությունն ապահովող մեկ ամբողջի՝ հայության կամ հայկական աշխարհի (հանրության) երկու անկապտելի բաղադրիչներ (տե՛ս *Գծապատկեր 1*):

Գծապատկեր 1

Հզոր պետականության և ազգային ինքնության միասնականությունը



Հզոր հայկական պետականության՝ որպես 21-րդ դարում սփյուռքի ազգային ինքնության հենասյան մասին դրույթը հիմնավորվում է նաև միջազգային, մասնավորապես՝ հրեական փորձով: Հակառակ հրեական սփյուռքի նախանձելի հնարավորություններին, դժվար է պատկերացնել, թե ինչ վիճակում կլիներ այն այսօր, եթե չլիներ Իսրայել պետությունը՝ իր տնտեսական, գիտատեխնոլոգիական, ռազմական, կրթական և այլ հզորությամբ: Չմոռանանք այս համատեքստում, որ հրեությունը 20-րդ դարի սկզբին՝ նախքան Իսրայել պետության ձևավորումը, իր ողջ ֆինանսական և կազմակերպչական ներուժով հանդերձ, որպես էթնիկ ընդհանրություն գտնվում էր անհետացման եզրին:

Սփյուռքում հայ ինքնության կառուցվածքը կամ՝ ամփոփման փոխարեն

Ամփոփելով սույն աշխատանքը՝ հարկ ենք համարում առանձնացնել սփյուռքում հայկական ինքնության կառուցվածքային երկու տարատեսակ.

1. Ապակենտրոն-հորիզոնական, երբ ինքնության առանձին բաղադրիչները, որոշակի փոխադարձ կապի մեջ լինելով հանդերձ, այնուամենայնիվ, պահպանում են իրենց ինքնուրույնությունը: Նրանք հարաբերականորեն անկախ են միմյանցից: Կարելի է առանձնացնել չորս այդպիսի հիմնական բաղադրիչ՝ լեզու, կրոն, մշակույթ՝ լայն իմաստով, և պատմական, այդ թվում՝ ցեղասպանության հիշողություն (տե՛ս *Գծապատկեր 2*):

Գծապատկեր 2

Սփյուռքում հայ ինքնության ապակենտրոն-հորիզոնական կառուցվածքը



2. Կենտրոնաձիգ-ուղղահայաց, երբ ինքնության բաղադրիչները գտնվում են աստիճանակարգային (հիերարխիկ) հարաբերակցության մեջ: Այս դեպքում ինքնությունը խարսխված է կենտրոնական գաղափարի վրա, որն էլ կազմում է նրա առանցքը կամ առաջին աստիճանի բաղադրիչը: Այս առանցքային բաղադրիչից բխում է (են) երկրորդ աստիճանի գաղափար-բաղադրիչ(ներ)ը, որ(ոնց)ից էլ բխում է (են) երրորդ աստիճանի գաղափար-բաղադրիչ(ներ)ը: Եվ այսպես շարունակ: Այս կառուցվածքում, ըստ էության, յուրաքանչյուր վերին բաղադրիչ-գաղափար(ներ)ը առանցք են հանդիսա-

նում իրենցից անմիջականորեն ցածր գտնվող գաղափար-բաղադրիչ(ներ)ի համար. առաջին աստիճանում գտնվող(ներ)ը երկրորդում գտնվող(ներ)ի համար, վերջին(ներ)ս՝ երրորդում գտնվող(ներ)ի և այսպես շարունակ:

Սփյուռքահայի ազգային ինքնության կենտրոնաձիգ-ուղղահայց կառուցվածքը կարող է լինել եռաստիճան, որի առաջին աստիճանում կամ առանցքում պետք է լինի հզոր պետականության գաղափարը, որից բխելով՝ հայրենադարձության գաղափարը և վերջինիցս էլ բխելով՝ լեզուն, կրոնը, մշակույթը՝ լայն իմաստով, և պատմական, այդ թվում՝ ցեղասպանության հիշողությունը (տե՛ս *Գծապատկեր 3*):

Գծապատկեր 3

Սփյուռքում հայ ինքնության կենտրոնաձիգ-ուղղահայաց կառուցվածքը



Հայ իրականության մեջ մինչ օրս գործել է սփյուռքահայի ազգային ինքնության առաջին՝ ապակենտրոն-հորիզոնական կառուցվածքը, որը, լավ

թե վատ, նպաստել է սփյուռքում հայ ինքնության պահպանմանը: Անկախ պետականության առկայության պայմաններում, սակայն, այն այլևս ժամանակավրեպ է: Ներկա փուլում նպատակահարմար է անցում կատարել կենտրոնաձիգ-ուղղահայց կառուցվածքին, որը կլինի ավելի արդյունավետ:

Նոյեմբեր, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Նաթալի Շ.,* Թուրքերը եւ մենք, Եր., 2015:
2. *Նժդեհ Գ.,* Բաց նամակ Մայքլ Արլէնին, Հատընտիր, Եր., «Ամարաս», 2006:
3. *Հակոբյան Հ.Վ.,* Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ասողիկ», 2002:
4. *Հովյան Վ.,* Պետականակենտրոնությունը՝ Հայրենիք-Սփյուռք միասնականության առանցք, «Գլոբուս», 2017, թիվ 1, էջ 53-59:
5. *Զոլյան Ս.,* ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խուսանավող դիսկուրսի իմաստա-գործաբանական վերլուծություն), Եր., «Լիմուշ», 2015, էջ 116:
6. *Մարության Հ.,* Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2013:
7. *Hantington S.P.,* Who We are? America's Great Debate, New Delhi: Penguin Books, 2004.

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Հայ ինքնության ավանդական բաղադրիչները ժամանակի ընթացքում կայուն նահանջ են ապրել սփյուռքում: Ներկայում միայն դրանցով այլևս հնարավոր չէ լուծել հայապահպանության խնդիրն արտերկրում: Հետևաբար, առաջ է գալիս նոր մոտեցումների հրամայականը, որոնք հայ ինքնությունը, ավանդական բաղադրիչներից բացի, կհարստացնեն նոր հենասյուներով և կառաջարկեն ինքնության կերտման նոր սկզբունքներ:

21-րդ դարում սփյուռքահայի ինքնության ապակենտրոն-հորիզոնական կառուցվածքը նպատակահարմար է փոխարինել կենտրոնաձիգ-ուղղահայաց կառուցվածքով, որի առանցքում կլինի հզոր ազգային պետությունը: Նրանից

կբխի հայրենադարձության գաղափարախոսությունը, իսկ վերջիններից էլ՝ լեզուն, կրոնը, մշակույթը, պատմական հիշողությունը:

ГОСУДАРСТВЕННОСТЬ И ИДЕНТИЧНОСТЬ: СТРУКТУРА АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ В ДИАСПОРЕ В XXI ВЕКЕ

Ваграм Овян

Резюме

Компоненты армянской идентичности в диаспоральной среде со временем претерпели определенный регресс. Сегодня только их недостаточно для решения задачи сохранения армянского идентитета за рубежом. Следовательно, на первый план выступает императив разработки новых подходов, которые, помимо имеющихся компонентов, обогатят армянскую идентичность новыми краеугольными камнями и выдвинут новые принципы формирования идентичности.

В XXI веке целесообразно заменить децентрализованно-горизонтальную идентичности армян диаспоры централизованно-вертикальной структурой, основу которой должно составлять мощное национальное государство. Из этого последует идеология репатриации, а оттуда уже – армянский язык, религия, культура, историческая память.

STATEHOOD AND IDENTITY: THE STRUCTURE OF THE ARMENIAN IDENTITY IN DIASPORA IN THE 21ST CENTURY

Vahram Hovyan

Resume

The traditional elements of the Armenian identity had consistently regressed in the Diaspora. Currently, they are no longer sufficient to preserve Armenian identity in the Diaspora. Therefore, there is an imperative of new approaches that would enrich the traditional elements of the Armenian identity with new cornerstones and offer new principles of identity building. In the 21st century the decentralized/horizontal structure of the Diaspora Armenian identity needs to be replaced with a centralized/ vertical structure focused on the powerful nation-state. The ideology of repatriation would stem from that followed by language, religion, culture and historical memory.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԵՐԱԶԴՄԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ

Արմեն Ղալեչյան*

Բանալի բառեր ՝ներազդման գործողություններ, տեղեկատվական օպերացիաներ, տեղեկատվական հնարքներ, ռազմական քարոզիչներ, աշխարհի տեսապատկեր:

Քսաներորդ և քսանմեկերորդ դարերում համաշխարհային աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ազգային տարաբնույթ ներազդման գործողությունների փորձերը և դրանց արդյունքների գնահատման ակտուալությունը կտրուկ աճել են: Մասնավորապես՝ քսաներորդ դարն ասպարեզ հանեց գաղափարական նոր հենքերի վրա ծնված պետություններ, որոնք կառուցվեցին այլոց հիմնարար գաղափարների ժխտման *գաղափարախոսության վրա*[1]: Իսկ քսանմեկերորդ դարը՝ «նոր որակի տեղեկատվության» ստեղծմամբ, սոցիալական մեդիայի շնորհիվ տրանսֆորմացրեց *գաղափարախոսության* ներկայացման (տեղեկատվության տրման) ողջ համակարգը՝ *բոլորին տրամադրելով «ելույթ ունենալու»՝ արտահայտվելու պոտենցիալ հնարավորություն:* Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը ռազմավարական առաջնահերթություն տված առաջադեմ պետությունները հաստատուն քայլերով սլանում են դեպի ապագա, իսկ հետադեմ հայացքներով պարուրված պետությունները «զարմացած» հետևում են նրանց գործունեությանը[2]: Արդյունքում՝ այդ հետադեմ երկրների ինտելեկտուալ պոտենցիալն իրեն տեսնում է զարգացած երկրներում և ամեն կերպ փորձում ինտեգրվել առաջատար պետություններում, այդ թվում նաև բազմաբնույթ ներազդման օպերացիաների շնորհիվ: Ոչ վաղ անցյալում մարդկության համար

* Գնդապետ, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի հրամանատարա-շտաբային ֆակուլտետի ռազմարվեստի ամբիոնի (տեղեկատվական պայքար առարկայի) ավագ դասախոս:

[1] Օրինակ՝ կապիտալիզմ – կոմունիզմ:

[2] *Ա.Ղալեչյան,* Ժամանակակից (տեղեկատվական) աշխարհի ղեկավարման թաքնված հնարքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 7 (96), 2018թ., էջ 34:

գիտելիքը բացարձակ արժեք էր, իսկ հաջողության գրավականը ինտելեկտուալ մարդն էր, սակայն այսօր, չգիտես ինչու, այսպես կոչված ներազդման տարբեր գործողությունների (համամարդկային արժեքային համակարգի խաթարման) շնորհիվ առօրյայում և աշխատանքում «վեր բարձրանալու» համար մարդկանց հետաքրքրում են միանգամայն այլ որակներ…

Այսօր աշխարհը լրջորեն պատրաստվում է անդրադարձնել սպասվելիք մոլեգնող նոր ներազդման օպերացիաները (գործողությունները), որոնց առաջին շարքերում կանգնած են սոցիալական հարթակները: Ներազդման օպերացիաների շնորհիվ մենք ղեկավարվում ենք ավելի լուրջ և խորքային, քան մեզ թվում է, քանի որ այդ ներազդման ալգորիթմները մեր մեջ սերմանվում են դեռ մանկությունից, երբ մեր վարքագծում առաջին անգամ ներմուծվում է այդ ներազդվելու (ենթարկվելու, հարմարվելու և այլն) հոգեբանությունը: Այդ իսկ պատճառով դրանք մեր մեջ շատ խորն են ներմուծվում և արմատավորվում:

Ներազդման գործողությունները տեղեկատվական տիրույթում տարաբնույթ տեղեկատվական գործողությունների համադրման միջոցով, մասնավորապես՝ վերնագրերի, ուղերձների, տեղեկույթի շնորհիվ հասարակությունների տեղեկացման հատուկ խնդիրների լուծմանն ուղղված, թիրախային լսարաններին ուղղորդված ազդեցության, որոշակի տեղեկատվական հնարքների համախումբ են: Ի տարբերություն ներազդման գործողությունների, տեղեկատվական օպերացիաներն ունեն կառուցման ավելի բարդ սխեմա, որի մշակումը պահանջում է բազմակողմ և խոր մասնագիտական գիտելիքներ և մոտեցումներ: Մինչդեռ տեղեկատվական ներազդման գործողությունների իրականացմանը մասնակցում են նաև տեղեկատվական ոլորտում մասնագիտական գիտելիքներ չունեցող անձինք, օրինակ՝ բլոգերները, անհատները, սոցիալական խմբերը և այլն[1]: Սոցիալական տեղեկատվական հզոր հոսքերը կարող են խոցել և ոչնչացնել ամեն ինչ՝ շրջանցելով ցանկացած տիպի պաշտպանություն: Ինչպես պարզվում է, գաղտնի ղեկավարվող «ինդուստրիալ» ներազդեցությունը կարող է խառնվել (միջամտել) ցանկացած սոցիալական պրոցեսի մեջ: Ներկայում բոլորս հիմնվում ենք տեղեկատվական հարձակողական և պաշտպանողական օպերացիաների ներազդեցությունների կուտակված արդի փորձի վրա: Սակայն ներազդման օպերացիայի առանձնահատկություններից են դրանց բնույթի անկանխատեսելիությունը և անսպասելիությունը, քանի որ դրանք մշտապես թարմացվում են և ենթարկվում բազմապիսի փոփոխությունների:

[1] *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 50:

Ներազդման օպերացիան դասակարգվում է որպես «փափուկ» օպերացիայի ձև, որն իրականացվում է հատուկ ձևերով ու միջոցներով, և սփռված է ժամանակի մեջ: Այդ օպերացիան լավ մտածված և ծրագրված գործողությունների համակարգ է, որում կարող են ներգրավված լինել մեծ քանակությամբ մարդիկ և կառույցներ: Ներազդման օպերացիաների իրականացումն անհամեմատ դյուրին դարձավ սոցմեդիայի ի հայտ գալով, քանի որ հեշտացան պետական հաղորդագրությունների հասցման հնարավորությունները մեծաքանակ մարդկային զանգվածներին, որոնք նույնիսկ չեն կասկածում, որ իրենք ուրիշի խաղադաշտում հանդես են գալիս «զինվորիկի» դերում: Հետագայում, արդեն խորանալով այդ խաղի մեջ, հենց իրենք են ինքնակամ տարածում (դառնալով համապատասխան գործիք) անհրաժեշտ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հստակեցնել տեղեկատվական օպերացիայի և ներազդման օպերացիաների տարբերությունները: Հիմնական տարբերությունը, որից բխում է մնացյալը, բաղկացած է տարաբնույթ ներազդեցության օբյեկտներից: Տեղեկատվական օպերացիաներն ազդում են անհատական գիտակցության, իսկ ներազդման օպերացիաները՝ զանգվածային գիտակցության վրա: Քանի որ տեղեկատվական օպերացիան «զորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների, համակցված հնարքների համաձայնեցված կիրառումն է»[1], այստեղից կարելի է ենթադրել, որ տեղեկատվական օպերացիաների գլխավոր պատվիրատու կարող են լինել զինված ուժերը (զինվորականները), իսկ ներազդման օպերացիաներինը՝ «պետությունը» (քարոզիչները, քաղաքական գործիչները, քաղաքական կուսակցությունները): *Սակայն լինում են իրավիճակներ, երբ այդ դերակատարների տեղերը փոփոխվում են, և որպես հետևանք մենք ունենում ենք ռազմական քարոզիչներ, որոնք առավելապես աշխատում են երկրի բնակչության հետ*[2]*:*

Համացանցի, այնուհետև՝ սոցիալական մեդիայի ստեղծմամբ ողջ աշխարհը կանգնել է բարդ խնդրի առջև՝ «*խափանվել է*» հասարակության կողմից տեղեկատվության ստացման համակարգը: Իրականացվել է տեղաշարժ՝ օբյեկտիվ տեղեկացումից դեպի ուղղորդված (գնահատողական և վերլուծական) տեղեկացում, ինչի հետևանքով մենք ներկայում մեր շրջապատը տեսնում ենք այն մարդկանց աչքերով, ովքեր մեզ պատմում են շրջապատող մարդկանց և իրադարձությունների մասին: Աշխարհն այն չէ, ինչ տեսնում ենք մեր առջև, այլ այն է, ինչ մեզ պատմում են նրա մասին:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 78:

[2] Օրինակ՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Ս.Օհանյանը և այլք:

Ուստի, ստեղծվել է պարադոքսալ իրավիճակ, օրինակ՝ իշխանությունները պայքարում են նրանց դեմ, ովքեր իրենց քննադատում են պետական վարկային դրամական միջոցներն աննպատակ վատնելու մեջ, այլ ոչ թե նրանց դեմ, ովքեր այդ միջոցները պետք է ծախսեին ի շահ պետության:

Այդ նախախնամությունը նպատակ ունի ծառայել քաղաքական, տնտեսական և ռազմական ներազդման ուժեղացմանը, քանի որ տեղեկատվությունն ընկալվում է որպես կարևոր գործոն հիբրիդային պատերազմի (ներազդման) ոլորտում: Օնլայն (*Live*) տեղեկատվական բաղադրիչի նպատակներից է վեճերի և վիճաբանությունների հրահրումը, որպեսզի ավելացնեն հասարակության բևեռվածությունը: Եվ այդ նպատակին հասնելու համար աշխատեցնում են անհրաժեշտ բոլոր «տաք»՝ քննարկվող թեմաները[1]:

Զարգացող երկրների որոշ ռազմական ղեկավարներ վերջապես հասկացել են, որ տեխնոլոգիական զարգացումը լուրջ հետևանքներ է ունեցել զարգացած պետությունների այնպիսի զգայուն ոլորտի վրա, ինչպիսին ռազմական ոլորտն է[2]: Տեխնոլոգիական զարգացման հետևանքներից *(«բացասական արդյունքներից»)* է այն, որ աշխարհն այնս այն չէ, ինչ մենք տեսնում ենք, այլ այն հորինված (երևակայական) մտապատկերը, ինչը մեզ «հարկադրաբար սերտել» է տալիս վիրտուալ իրականությունը, արդյունքում՝ աշխարհը մեր ժամանակներում ղեկավարվում է աշխարհի «տեսապատկերով»: Աշխարհի արդի տեսապատկերի կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները մանրակրկիտ ուսումնասիրվում են նաև ժամանակակից բանակների (զինվորականների) կողմից: *Ժամանակակից բանակների (զինվորականների) համար աշխարհաքաղաքական փոփոխություններում, հատկապես տեղեկատվական տարածությունում ներգրավվածությունը մեր պրոֆեսիոնալ գործունեության մի մասն է, քանի որ այդ փոփոխությունները մեզ կարող են ապահովել իրական հաղթանակ:* Դրա վերաբերյալ գոյություն ունի ԱՄՆ ռազմաօդային ուժերի գնդապետ Ջոն (Ռիչարդ) Բոյդի տեսությունը[3], այսպես կոչված՝ Բոյդի «շրջանը», որը ներառում է հետևյալ քայլերը՝ դիտարկում, կողմնորոշում, որոշում, գործողություն և սեփական տեղեկատվական օպերացիաներում հակառակորդի ռեֆլեկտիվ

[1] Օրինակ՝ ռուսական հեռուստատեսությամբ ամեն օր ուղիղ եթերով հեռարձակվող «Время покажет» և «60 минут» լրատվական վերլուծական հեռուստահաղորդաշարերը:

[2] Օրինակ՝ ԱՄՆ, ՉԺՀ, ՌԴ և այլ պետությունների առաջադեմ բանակներում ստեղծվել են տեղեկատվական (կիբեռ) պատերազմների վարման զորքեր և ստորաբաժանումներ, բազաներ, իսկ վերջինը (ՌԴ-ն) պաշտոնապես հայտարարել և ձեռնամուխ է եղել *տեղեկատվական գործողությունների զորատեսակի* ստեղծմանը:

[3] *Макаренко С.И.,* Информационное противоборство и радиоэлектронная борьба в сетецентрических войнах начала XXI века. Монография, СПб., Наукоемкие технологии, 2017, с. 240.

ղեկավարում[1]: Մենք (զինվորականները) մեծ ուշադրություն ենք դարձնում, թե ինչպես կընկալի հակառակորդը կոմունիկատորի կողմից (յուրային զորքերից, ուժերից) տրամադրված իրադրությունը, քանի որ այդ ընկալումը հաճախ լինում է իրավիճակին ոչ համարժեք: Ինչպես տեսնում ենք, մենք պետք է ունենանք ոչ միայն մեր սեփական թշնամին, այլև պետք է նրան ներկայացնենք (դարձնենք) սարսափելի հրեշ[2]: Տեղեկատվա-սոցիալական համակարգերում այդպիսի թշնամու առկայությունը նշանակում է մարդկային մեծ զանգվածների համախմբում (հավաքում), հետևաբար՝ այդ զանգվածների ծածուկ կամ ակնհայտ ղեկավարում: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ թեկուզ այդ համակարգը կորցնում է իր դեմոկրատական սկզբունքները, սակայն այն արտաքին թշնամու հանդեպ դառնում է ավելի համախմբված և ուժեղ: Հենց թշնամու առկայությունն էլ ապահովում է վերոնշյալ համակարգի նկատմամբ այդ արտաքին ազդակները: Բացի այդ, մենք հակառակորդի համար տեղադրում ենք որոշակի թակարդներ, որպեսզի «օգնենք» նրան թույլ տալ բազմաթիվ սխալներ: Դրանցից հիմնականներն են[3]՝

- ***Խայծը.*** հակառակորդը նկատում է իր համար հարմար իրավիճակ, որն իրականում ավելի նպաստավոր է հենց յուրային կողմի համար: *Օրինակ՝ «կանխամտածված տեղեկատվության արտահոսքի» արդյունքում հակառակորդը «հայթայթում» է տեղեկատվություն, որի մասին ինքն անպայման կցանկանա կիսվել ուրիշի՝ մեզ համար հարմար իր դաշնակցի հետ:*
- ***Կրկնությունը,*** որի ժամանակ ոչ վտանգավոր գործողությունները կրկնվում են, որպեսզի շեղեն հակառակորդին վտանգավոր գործողություններից, իսկ առաջին տարբերակից տարբերությունն այն է, որ առաջին տարբերակում հակառակորդն իրականացրել է ինչ-որ քայլեր, իսկ այս տարբերակում նա պետք է խուսափի քայլեր կատարելուց: *Օրինակ՝ մեր կողմից պարբերաբար իրականացվող տեղեկատվական բացասական «արտահոսքերի» արդյունքում հակառակորդի մոտ պատրանք է ստեղծվում, որ մեզ մոտ «արմատական*

[1] *Ա.Ղալեչյան*, Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 56: «Հակառակորդի նկատմամբ ռեֆլեկտիվային վերահսկողությունն այն է, որ հակառակորդն ընդունի կոմունիկատորի տեսանկյունից ճիշտ որոշում, որն անհրաժեշտ է ոչ թե հակառակորդին, այլ կոմունիկատորին»:

[2] *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվության՝ որպես հզոր զենքի թերընկալման հետևանքները, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս», թիվ 2 (91), 2018թ., էջ 35:

[3] http://ms.detector.media/monitoring/advocacy_and_influence/feyki_i_dezinformatsiya_kak_ manipulyativnyy_instrumentariy/

փոփոխություններ» են իրականացվում, ինչը ձեռնտու է հենց իրենց, և հարկավոր է սպասել մինչև դրա ավարտը:

- ***Չմտադրված սխալը.*** հակառակորդը պետք է հավատա, որ այն արժեքավոր տեղեկատվությունը, որն իր ձեռքն է ընկել, պատահաբար է: *Օրինակ՝ հակառակորդի հատուկ ծառայությունները սոցցանցերի օգնությամբ «պատահական» օգտատիրոջից «մեծ դժվարությամբ հայթայթում» են գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, որը շատ արժեքավոր է:*
- ***Կանխատեսվող որոշումը*** տրամադրվում է կեղծ տեղեկատվություն կանխատեսվող որոշման օգտին, որպեսզի թաքցնեն իրական որոշումը: *Օրինակ՝ սոցցանցերի և մեդիայի օգնությամբ կեղծ լուրերի տարածմամբ «գրգռում» են թշնամի երկրի քաղաքական գործիչներին՝ մղելով նրանց «սեփական նախաձեռնությամբ» առաջին ընթերցմամբ ընդունել «համապատասխան» օրենքի նախագիծը:*
- ***Անհաջողությունը***. հակառակորդը չի կարողանում բացատրություն տալ թույլ տրված սեփական անհաջողությանը (որովհետև *չմտադրված սխալի*՝ օգնությամբ հայթայթված «արժեքավոր» տեղեկատվությունը կեղծ էր), քանի որ գործողությունների հիմքում ընկած տեղեկատվությունը սխալ էր:

Հետաքրքիր է, երբ առաջարկվում է տեղեկատվությանը վերաբերվել տեղեկատվական պատերազմի համատեքստում, որտեղ տեղեկատվությունը կարող է հանդես գալ որպես զենք և կամ՝ որպես թիրախ[1]: Իսկ հակառակորդը, ստանալով տեղեկատվությունը, պետք է ընտրություն կատարի, թե որն առավել ձեռնտու կլինի հարձակվող կողմի համար: Այսինքն՝ նրան են կապում (ստիպում սերտել) այն աշխարհի մոդելը, որը մի կողմի համար նպատակահարմար է և հետևաբար՝ անհարմար մյուս կողմի համար: Բնականում իրականությունը (իրականը, ռեալը) միշտ գտնվում է առաջին տեղում, տեղեկատվությունը՝ երկրորդ: Սակայն այսօր մենք հաճախ բախվում ենք այնպիսի (ֆորսմաժորային) իրավիճակների հետ, երբ տեղեկատվությունը գրավում է առաջին տեղը, իսկ իրականությունը՝ երկրորդ[2]: Ականատես ենք մի հետաքրքիր իրավիճակի, որտեղ պատկերների (նկարների) տեսքով տեղեկատվությունն ավելի մեծ ներազդեցություն է գործում

[1] *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվության՝ որպես հզոր զենքի թերընկալման հետևանքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 2 (91), 2018թ.:

[2] *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 57:

մարդկանց վրա[1], մասնավորապես՝ հակառակորդի կողմից ցուցադրվող ժամանակակից զենքը և զինամթերքը, չնայած դրանք իրականում հնարավոր է, որ լինեն կեղծ, նմանակում, խաբկանք (օրինակ՝ տպված լինեն 3D տպիչով և այլն): Վերլուծելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել հետևյալ փաստը, որ ծնվել է նոր ֆեյքի տեսակ՝ նկարի տեսքով: Այդպիսի ֆեյքերը սպառողների աչքերում «ներկայանում» են իրականության և ճշմարտացիության ավելի մոտ հնարավորություններով: Տեղեկատվությունը, որը կապված չէ իրականության հետ, անընդհատ լցնում են չդադարող տեղեկատվական հորձանուտը, որտեղ տեղեկատվությունը և իրականությունն իրար հետ չեն խաչվում կամ խաչվում են շատ հազվադեպ: Բազմաթիվ մարդիկ բավական երկար ժամանակ են վատնում այդպիսի արհեստական իրականության հարթությունում՝ խորասուզվելով այդ տեղեկատվական և վիրտուալ աշխարհի անդունդները: Մեզ՝ զինվորականներիս համար սկզբունքորեն պարզ է, թե ինչ է հակառակորդին մոլորության մեջ գցելը[2] և ինչպես դրան հասնել, քանի որ զինված ուժերում դրա ուղղությամբ աշխատում է սպա մասնագետների արդեն մի քանի սերունդ:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկրի զինծառայող պարտավոր է պաշտպանել իր երկիրը, իսկ այդ երկրի քաղաքացին՝ շենացնել այն: Իսկ այդ երկիրը պետք է առաջնահերթ կարողանա ղեկավարել իրեն վերաբերող տեղեկատվության տարածումը, այլ ոչ թե հենց տեղեկատվությունը: Խոսքի ազատությունն ըստ էության պաշտպանում է մարդու ինքնարտահայտման ազատությունը՝ ոչինչ չասելով ճշմարիտի և ստի մասին: Հետզհետե ճշմարիտի խնդիրը դառնում է վստահության հիմնախնդիր, և դա իրականում այդպես է, քանի որ ֆեյքերը բնական ճանապարհով տարածում են նրանք, ովքեր դրանց հավատում են: Տեղեկատվական իրականությունը, վիրտուալ իրականությունը և փաստացի իրականությունը (ռեալը) կազմում են բուրգ, որի գագաթում դրանք պարտադիր չէ, որ համապատասխանեն միմյանց: Պետության համար տեղեկատվական և վիրտուալ տարածությունը կարևոր արժեք է, քանի որ թույլ է տալիս ղեկավարել հասարակական գիտակցության երկու կարևոր բաղկացուցիչները՝ անցյալի և ապագայի վերաբերյալ պատկերացումներով: Վերջինիս դեպքում խոսքը նաև օրվա տեղեկատվական լրահոսի մասին է, որը թույլ է տալիս ուշադրությունը սևեռել մի տեղեկույթի վրա՝ դրանով իսկ «խոչընդոտե-

[1] Օրինակ՝ Հյուսիսային Կորեայի կողմից ամբողջ աշխարհին պարբերաբար ցուցադրվող միջուկային մարտագլխիկների տեսապատկերների «սարսափազդու» տեսաշարերը:
[2] Օրինակ՝ ԶՈՒ–ում իրականացվող մարտավարական, օպերատիվ մարտավարական և ռազմավարական քողարկման միջոցառումները:

լով» (սահմանափակելով) մնացյալը[1]:

«Քաոսային և աղմկաշատ» մեր աշխարհում ու հատկապես մեր ժամանակներում, երբ տեղեկատվական և վիրտուալ հոսքերի ընկալման և մշակման ունակությունները մարդկային հնարավորություններից վեր են, հարկավոր են համապատասխան հուշումներ (ծածկագրեր), որոնք մարդկությանը միշտ ուղեկցել են հնագույն դարերից՝ ասույթների տեսքով, մինչև ժամանակակից հեռուստասերիալները[2]: Մենք բոլորս կարիք ունենք մեր աշխարհընկալման վիրտուալ ուժեղացմանը, քանի որ հաճախ շրջապատված ենք իրադարձություններով, որոնց ընկալումն այդքան էլ հեշտ բան չէ (ընկալման տեսակետից): Իր հերթին, դա դառնում է քողարկված գործողությունների տեսության զարգացման պատճառ, որոնց քանակը վերջին ժամանակներում աննախադեպ աճ է գրանցել: Քողարկված գործողություններն այս առումով դառնում են «տեղեկատվության հաջողված ներմղում» վիրտուալ միջավայր, որը նրան այդքան պակասում էր: Այդ պակասին ի պատասխան՝ անհատ անձինք իրենք են ստեղծում իրենց անհատական վիրտուալ միջավայրը և տարածքները:

Ժամանակակից աշխարհի բարդ լինելը մեր գլխում ծնում է քաոս, իսկ առաջացած քաոսը ելք է փնտրում կոնսպիրոլոգիայի մեջ: Կոնսպիրոլոգիան բացահայտ հարձակվողական տեղեկատվական աջակցման գործողությունների համախումբ է՝ ուղղված ժամանակակից աշխարհակառուցվածքի ներկա տեսքի ապահովմանը: Բնականաբար, դրա արդյունքում մեր ուղեղները չեն կարողանում դիմակայել այն ամենին, ինչ կատարվում է մեր շրջապատում, քանի որ սկսել ենք տեսնել ավելին, բայց քիչ հասկանալ՝ մոտենալով գիտակցված ընկալման ինչ-որ կրիտիկական աստիճանի: Իսկ չկա՞ արդյոք վտանգ, որ մեր ուղեղները չեն կարող դիմանալ այդպիսի աննորմալ ու անմարդկային ծանրաբեռնվածություններին: Համացանցն աշխարհին տվել է ներազդման նոր գործիքակազմ, ցավոք, այդ ներազդման գործիքակազմի տարրերի մեծ մասը մեզ համար աննկատ (թաքնված, գաղտնի) է, և դրանց գործունեությունը բացահայտվում է բավական ուշ: Ծայրահեղ դեպքերում դրանց գործնական կիրառումը մեզ համար ընդհանրապես անհասանելի է, քանի որ դրանք շարժվում են իրենց համար նախանշված գաղտնի սողանցքներով:

Հոկտեմբեր, 2018թ.

---

[1] *Ա.Ղալեյան,* Նորագույն տեղեկատվական մեխանիզմների և մեդիահնարքների միջոցով ԶՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #6 (76) 2017, էջ 19:

[2] Տե՛ս նույն տեղում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԵՐԱԶԴՄԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ

Արմեն Ղալեչյան

Ամփոփագիր

Այսօր աշխարհը լրջորեն պատրաստվում է անդրադարձնել սպասվելիք մոլեգնող նոր ներազդման օպերացիաները (գործողությունները): Ներազդման օպերացիաների շնորհիվ մենք ղեկավարվում ենք ավելի լուրջ և խորքային, քան մեզ թվում է: Ներազդման օպերացիան դասակարգվում է որպես «փափուկ» օպերացիայի ձև, որն իրականացվում է հատուկ ձևերով ու միջոցներով, և սփռված է ժամանակի մեջ: Այդ օպերացիան լավ մտածված և ծրագրված գործողությունների համակարգ է, որում ներգրավված են մեծ քանակությամբ մարդիկ և կառույցներ: Ցավոք, ներազդման օպերացիայի տարրերի մեծ մասը մեզ համար աննկատ (թաքնված, գաղտնի) է, և դրանց գործունեությունը բացահայտվում է բավական ուշ, իսկ դրանց գործնական կիրառումը մեզ համար ընդհանրապես անհասանելի է:

ОПЕРАЦИИ ИНФОРМАЦИОННОГО ВОЗДЕЙСТВИЯ

Армен Галечян

Резюме

Современный мир серьезно готовится отразить грядущие новые операции воздействия. Под влиянием операций воздействия мы воспринимаем все гораздо серьезнее и глубже, чем нам кажется. Операцию воздействия можно классифицировать как «мягкий» вид операции, которая осуществляется специальными способами и методами и распространена в пространстве. Это хорошо продуманная и спрограммированная система действий, в которую вовлечено большое количество людей и структур. К сожалению, большая часть элементов операции воздействия для нас невидима (скрыта, засекречена), и их влияние раскрывается слишком поздно, а их практическое применение для нас вообще недосягаемо.

INFORMATION INFLUENCE OPERATIONS

Armen Ghalechyan

Resume

Today's world is seriously preparing to address the upcoming new impacts (actions). Through the effects of the influence operations, we are controlled more and deeper than it seems to us. The influence actions are classified as a form of soft operation carried out in special ways and means, and is spread over time. Such operation is a well-thought and planned system of actions that involves a large number of people and structures. Unfortunately, most of its impacts are hidden, their activities are discovered very late and their practical application is unknown to us at all.

ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արման Մանասերյան*

Բանալի բառեր՝ մրցակցություն, շուկաների խոշորացում, համակենտրոնացման հսկողություն, մրցակցության պաշտպանություն:

Շուկայական տնտեսվարման համակարգի պայմաններում մրցակցային պայքարի արդյունքում երկրների տնտեսություններում տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ և, որպես կանոն, արձանագրվում են խոշորացման գործընթացներ: Ընդհանուր առմամբ, պետք է նկատի ունենալ, որ ինչպես տնտեսության առանձին ճյուղերում կամ ապրանքային առանձին շուկաներում, այնպես էլ ողջ տնտեսությունում, եթե առկա չեն նոր ընկերությունների մուտքի սահմանափակումներ կամ էլ արդեն իսկ գործող ընկերություններն ազատ են որոշումների կայացման հարցում, խոշորացման գործընթացների բացակայությունը կարող է վկայել մրցակցության խաթարման մասին: Հետևապես, ձևավորված մրցակցային միջավայրի պարագայում խոշոր ընկերությունների առաջանալը և շուկաներում կենտրոնացվածության մակարդակի աստիճանական բարձրացումն ունեն օբյեկտիվ բնույթ և պայմանավորված են ընկերությունների՝ առավելագույն շահույթի ստացման նպատակադրմամբ: Խոշորացման գործընթացները տնտեսության վրա թողնում են ինչպես դրական ազդեցություն, այնպես էլ առաջանում են բացասական հետևանքներ: Որպես դրական կարող են դիտարկվել նորարարությունների համար կատարվող ներդրումները, ապրանքների և ծառայությունների որակական բարելավումները, արտահանման ծավալների աճը, պետության կողմից վարչարարության համար

* Տնտեսագիտության թեկնածու, ՏՄՊՊՀ մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ:

ծախսվող գումարների տնտեսումը և այլն: Մինչդեռ խոշորացման ընդդիմախոսների փաստարկները հիմնականում վերաբերում են զբաղվածության կրճատմանը, եկամուտների անհավասար բաշխմանը, մենաշնորհների առաջացմանը և այլն: Այս առումով, խոշորացման դեմ պետության կողմից միջամտությունները կարող են կատարվել հարկման գործիքակազմի, թույլտվությունների համակարգի, պետական գնումների և մի շարք այլ մեխանիզմների կիրառմամբ: Այսպես, օրինակ, պետության կողմից կարող է ներդրվել պրոգրեսիվ հարկման համակարգ, որի արդյունքում խոշոր ընկերությունների հարկման դրույքաչափերը կբարձրացվեն՝ խոչընդոտելով խոշոր ընկերությունների առաջացմանը: Մեկ այլ օրինակ կարող է լինել այն, որ պետությունը կոնկրետ ոլորտում կարող է սահմանափակել խոշոր տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը տարածքային կամ էլ ժամային առումով: Պետական միջամտության վերը նշված ձևերն, ըստ էության, ուղղված են չեզոքացնելու խոշոր ընկերությունների ունեցած օբյեկտիվ առավելությունները՝ միաժամանակ փոքր ընկերություններին հնարավորություն տալով բարձրացնել շուկայում իրենց մրցունակությունը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նշված կարգավորումների հետևանքով սահմանափակվում է մրցակցությունը շուկաներում, և առաջանում են շուկայական մեխանիզմների խաթարման ռիսկեր: Հետևապես, պետության կողմից նման կարգավորումների իրականացման պարագայում երկարաժամկետ կտրվածքով տնտեսության և հասարակության ակնկալվող օգուտները կարող են չստացվել:

Ֆրանսիայում, օրինակ, մանրածախ առևտրի ոլորտում նկատվող խոշորացման գործընթացների կասեցման ուղղությամբ պետության կողմից կիրառվեցին վարչական սահմանափակումներ, որոնք թեև ուղղված էին մրցակցությունը խորացնելուն, այդուհանդերձ, ունեցան հակառակ ազդեցությունը՝ նպաստելով խոշոր ընկերությունների դիրքի ամրապնդմանը: Այսպես, դեռևս 1980-ական թվականներից մանրածախ առևտրի կենտրոնների, մասնավորապես սուպերմարքեթների ստեղծվելուց հետո փոքր առևտրային օբյեկտները հայտնվեցին անհավասար պայմաններում, և վերջիններս կանգնեցին մանրածախ առևտրի ոլորտից դուրս մղվելու վտանգի առջև: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ֆրանսիայի կառավարությունը փոքր առևտրային օբյեկտներին պաշտպանելու քայլեր ձեռնարկեց՝ մանրածախ առևտրային խոշոր կենտրոնների ստեղծման համար խիստ կարգավորումներ սահմանելով: Ժամանակի ընթացքում այս ամենը հանգեցրեց արդեն իսկ գործող խոշոր առևտրային կենտրոնների հզորացմանը, որոնք

սկսեցին օգտագործել իրենց շուկայական իշխանությունը՝ մատակարարների նկատմամբ ճնշումներ գործադրելու նպատակով: Ստեղծված իրավիճակը կարգավորելու համար Ֆրանսիայի մրցակցության մարմինն իր հերթին, ուսումնասիրությունների արդյունքում, առաջարկներ ներկայացրեց՝ մեղմելու խոշոր առևտրային կենտրոն հիմնադրելու համար կարգավորումները՝ այդպիսով այդ ոլորտում մրցակցությունն աշխուժացնելու և նոր մասնակիցների շուկա մուտք գործելու միջոցով արդեն գործող առևտրային ցանցերի շուկայական իշխանությունը թուլացնելու նպատակով[1]:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ արևմտյան երկրներում առավել կարևորվում է խոշորացման դեմ պայքարի իրականացումը համակենտրոնացման նկատմամբ կատարվող հսկողության միջոցով: Ընդ որում, այս մեխանիզմի միջոցով պետությունները պայքարում են ոչ թե խոշորացումների դեմ առհասարակ՝ դրանք համարելով տնտեսության զարգացման խոչընդոտ, այլ բացառապես մրցակցության հետագա սահմանափակմանը հանգեցնող խոշորացման դեմ: Այսինքն՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ կառավարությունները չպետք է պայքարեն տնտեսական մրցակցության արդյունքում ձևավորված խոշոր ընկերությունների դեմ՝ խոշորացման գործընթացները հետ շրջելու նպատակով, այլ հաշվի առնելով այն, որ նման խոշոր ընկերությունները, որպես կանոն, ունեն գերիշխող դիրք շուկաներում, պետք է խստորեն դիտարկվեն բիզնեսի հնարավոր միաձուլումները, որոնց հետևանքով կարող են մեկտեղվել շուկայում մրցակից հանդիսացող ընկերությունների գործողությունները[2]:

Համակենտրոնացումների նկատմամբ հսկողության իրականացմամբ մրցակցային մարմինները հնարավորություն են ստանում պահպանել շուկայի կառուցվածքը և կանխել շուկայական իշխանության առաջացումը կամ դրա ուժեղացումը, որը կարող է իր հերթին հանգեցնել (նպաստել) գների բարձրացմանը, որակի վատթարացմանը, նորարարությունների կրճատմանը և այլն: Առանց համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող հսկողության մրցակցային մարմինները ստիպված են լինում պայքարել հետևանքների դեմ, որը միշտ չէ, որ ամբողջությամբ հնարավոր է իրականացնել, սակայն պատճառների վերացումը, տվյալ դեպքում՝ շուկայի կառուցվածքի խեղաթյուրման կանխումը, շատ ավելի արդյունավետ է, քանի որ ստեղծվում է համապատասխան միջավայր մրցակցելու համար:

[1] https://www.oecd.org/daf/competition/CompetitionIssuesintheFoodChainIndustry.pdf
[2] EU Competition Law, Alison Jones and Brenda Sufrin, Fifth Edition, Oxford pg. 279-597

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են համակենտրոնացման նկատմամբ իրականացվող հսկողության մեխանիզմները ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտերկրում, հատկապես եվրոպական երկրներում, որտեղ նման կարգավորումների կիրառման առումով առկա է մեծ փորձառություն:

Ներկայում Հայաստանում գործող օրենսդրության համաձայն՝ համակենտրոնացումները կարող են լինել հետևյալ ձևերով.

1. տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների 20% կամ ավելի չափով ձեռքբերումը,
2. տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի 20% կամ ավելի չափով ձեռքբերումը,
3. տնտեսվարող սուբյեկտների միացումը,
4. տնտեսվարող սուբյեկտների միաձուլումը,
5. տնտեսվարող սուբյեկտների միավորումը, որի արդյունքում մեկ տնտեսվարող սուբյեկտ հնարավորություն է ստանում ազդել մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա[1]:

Այն հարցին, թե որ գործարքները մրցակցային մարմինների կողմից դիտարկել համակենտրոնացում, միասնական մոտեցում առկա չէ, և յուրաքանչյուր երկիր ունի իր առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, Հունգարիայում համակենտրոնացումներ են դիտարկվում, եթե գործարքի արդյունքում.

- մեկ կամ մի քանի ընկերություն հսկողության իրականացման հնարավորություն է ստանում նախկինում անկախ կազմակերպությունների նկատմամբ,
- երկու կամ ավելի նախկինում գործող անկախ կազմակերպություններ միաձուլվում են,
- ստեղծվում են համատեղ ձեռնարկություններ:

Ընդ որում, որպես հսկողություն դիտարկվում է ոչ թե 20%-ի չափով փայաբաժնի ձեռքբերումը, ինչպես Հայաստանում է, այլ 50%-ի, որը պայմանավորված է ընկերությունների համար վճռորոշ որոշումների կայացման վրա ազդեցության հնարավորություն ստանալու հանգամանքով[2]:

[1] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 8, http://competition.am/index.php?menu=147&lng=1
[2] https://gettingthedealthrough.com/area/20/jurisdiction/68/merger-control-hungary/

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում համակենտրոնացման գործարքների նշված տեսակներից առավել լայն տարածում ունեն փայաբաժինների ձեռքբերմամբ իրականացվող գործարքները, որոնք վերջին հինգ տարիների կտրվածքով կազմում են ընդհանուր դիտարկված համակենտրոնացման գործերի շուրջ 90%-ը:

Կախված համակենտրանացման գործարքի արդյունքում առաջացող ռիսկերից՝ դրանք ընդունված է բաժանել երեք խմբի.

1. միևնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համակենտրոնացում),
2. որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներ իրացնող ու ձեռք բերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համակենտրոնացում),
3. տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (խառը համակենտրոնացում):

Նկատենք, որ Հայաստանում համակենտրոնացումները ենթակա են հայտարարագրման և մրցակցության մարմնի կողմից ուսումնասիրության ոչ բոլոր դեպքերում, այլ միայն այն դեպքերում, երբ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների և (կամ) հասույթների արժեքները գերազանցում են սահմանված շեմերը, կամ էլ երբ համակենտրոնացման մասնակից ընկերությունն ունի գերիշխող դիրք: Հայաստանում, ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների, հսկողություն է իրականացվում խոշոր ընկերությունների կողմից բոլոր տեսակի ձեռքբերումների նկատմամբ՝ անկախ դրանց մեծությունից: Այսպես, օրինակ, միևնույն շուկայում տեղի ունեցող համակենտրոնացման գործարքների մասով տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են ստանալ մրցակցության մարմնի թույլտվությունը, եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն մեկ միլիարդ դրամ[1]: Մինչդեռ, օրի-

[1] ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110494

նակ, Հունգարիայում գործարքի համար պետք է ստացվի մրցակցային մարմնի թույլտվությունը, եթե համակենտրոնացման բոլոր մասնակիցների շրջանառությունը Հունգարիայում գերազանցում է 48.3 մլն եվրոն և մեկ մասնակցի շրջանառությունը՝ 3.2 մլն եվրոն[1]: Այսինքն, եթե, օրինակ, գործարքի մի կողմը խոշոր ընկերություն է, տվյալ դեպքում՝ 48.3 մլն եվրոն գերազանցող իրացման շրջանառություն ունեցող ընկերություն, իսկ մյուս կողմում փոքր ընկերություն է, տվյալ դեպքում՝ 3.2 մլն եվրոն չգերազանցող իրացման շրջանառություն ունեցող ընկերություն, ապա մրցակցային մարմնի թույլտվության ստացման անհրաժեշտությունը բացակայում է: Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ Հունգարիայում խոշոր տնտեսվարող սուբյեկտներն ազատված են յուրաքանչյուր գործարքի համար մրցակցային մարմին դիմելու պարտավորությունից, ինչը նաև նվազեցնում է պետության կողմից իրականացվող վարչարարությանը վերաբերող ծախսերը: Պետք է նշել, որ նմանօրինակ կարգավորում առկա է նաև Գերմանիայում, Լիտվայում, Լատվիայում, Բելգիայում և մի շարք այլ երկրներում[2]:

Միաժամանակ, ներկայում միջազգային պրակտիկայում առկա է նաև փորձ, երբ մրցակցային մարմինը կատարում է ուսումնասիրություն, երբ գործարքի մասնակիցների շեմերը չեն գերազանցում սահմանված չափերը: Այսպես, Հունգարիայում 2017 թվականից կիրառվում է մի մեխանիզմ, որը թույլ է տալիս մրցակցային մարմնին արդեն իսկ կատարված գործարքը դրան հաջորդող 6 ամսվա ընթացքում ենթարկել ուսումնասիրության: Ընդ որում, տվյալ պարագայում գործարքի իրականացման համար մրցակցային մարմնի թույլտվության ստացման անհրաժեշտություն առկա չէ[3]:

Համակենտրոնացումների նկատմամբ հսկողության առումով հետաքրքրական է նաև Ալբանիայի փորձը: Այսպես, համաձայն սահմանված ընթացակարգի՝ Ալբանիայում, ի թիվս այլ դեպքերի, համակենտրոնացումներ են դիտարկվում ֆիզիկական անձի կողմից ձեռքբերումներն այն դեպքում, երբ նրա հսկողության ներքո արդեն իսկ գտնվում է առնվազն մեկ ընկերություն[4]: Այսինքն, եթե տնտեսվարող սուբյեկտի փայաբաժին ձեռք բերող կողմը չունի այդ կամ որևէ այլ շուկայում գործող ընկերության վրա ազդեցության հնարավորություն, ապա մրցակցային մարմնի կողմից դրա ուսումնասիրության անհրաժեշտությունը բացակայում է: Այս առումով

[1] https://iclg.com/practice-areas/merger-control-laws-and-regulations/hungary
[2] https://iclg.com/practice-areas/merger-control-laws-and-regulations
[3] https://iclg.com/practice-areas/merger-control-laws-and-regulations/hungary
[4] Control of Concentrations, Albanian Experience, Diana Dervishi, Presentarion, Merger Control Investigation, Workshop of Competition Authorities, Albania, Tirana 19-21 June 2018

պետք է նշել, որ մեր երկրում գործարքները դիտարկվում են որպես հայտարարագրման ենթակա համակենտրոնացում, անկախ այն հանգամանքից՝ դրանք ձեռք բերողն ունի այլ ընկերության փայաբաժիններ, թե ոչ:

Մեկ այլ կարևոր տարբերություն, որն ի հայտ է գալիս միջազգային փորձի հետ համեմատության արդյունքում, այն է, որ արտերկրի մրցակցային մարմինները համակենտրոնացման գործերը քննում են երկու փուլով: Մասնավորապես, առաջին փուլի ընթացքում, որի համար սահմանված է ուսումնասիրության իրականացման մեկամսյա ժամկետ, դիտարկվում է հիմնականում մրցակցության սահմանափակման հնարավորությունը, ապրանքային շուկաների ուսումնասիրություն չի իրականացվում, մրցակից ընկերություններից տեղեկատվություն, որպես կանոն, չի պահանջվում: Այն դեպքում, եթե առաջին փուլի ուսումնասիրության արդյունքում մրցակցային մարմինը նկատում է մրցակցության սահմանափակման ռիսկեր, ապա սկսվում է երկրորդ փուլի ուսումնասիրությունը, որի համար սահմանված է եռամսյա ժամկետ: Երկրորդ փուլի ուսումնասիրության համար որպես ազդակ կարող են ծառայել կատարված նախնական ուսումնասիրության արդյունքները, որի համաձայն՝ օրինակ, հորիզոնական շուկաներում գործարքի արդյունքում համատեղ մասնաբաժինը գերազանցում է 20%-ը, իսկ գործարքի արդյունքում աճը՝ 5%-ը, կամ համակենտրոնացման մասնակիցների ունեցած մասնաբաժնին համարժեք մասնաբաժին ունեցող ընկերություն շուկայում առկա չէ, կամ գործարքից հետո հերֆինդալ-հիրշմանի ինդեքսը՝ HHI-ը գտնվում է 1000-2000 միջակայքում, որի պարագայում փոփոխությունը գերազանցում է 250 միավորը, կամ HHI-ը 2000-ից բարձր է, իսկ փոփոխությունը գերազանցում է 150 միավորը և այլն: Ինչ վերաբերում է ոչ հորիզոնական շուկաներում կատարվող գործարքներին, ապա երկրորդ փուլի ուսումնասիրություն կատարվում է, եթե նախնական ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ իրենց գործունեության շուկաներում համակենտրոնացման մասնակիցներից մեկն ունի 30%-ից բարձր, իսկ մյուս 5%-ից բարձր մասնաբաժինը, կամ էլ երբ դեռ շուկայի մասնաբաժինը մեծ չէ, սակայն ընկերություններն ունեն արագ զարգացման հնարավորություններ (*start-up*) և այլն[1]:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած հաջորդ տարբերությունը վերաբերում է կատարվող ուսումնասիրության ժամկետներին: Այսպես, համաձայն բազմաթիվ երկրներում գործող օրենս-

[1] The Management of Phase II Merger cases-experience of the GVH, Attila Dudra, Presentarion, Merger Control Investigation, Workshop of Competition Authorities, Albania, Tirana 19-21 June 2018.

դրության, ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլի ուսումնասիրությունների համար սահմանված ժամկետները կասեցվում են բոլոր այն դեպքերում, երբ մրցակցային մարմինները տեղեկատվություն են պահանջել տնտեսվարող սուբյեկտներից, պետական մարմիններից կամ այլ կառույցներից, սակայն այդ տեղեկատվությունը դեռ չի ստացվել: Գործնականում նշված ժամկետները սահմանված են բացառապես մրցակցային մարմնի համար, և հաճախ ուսումնասիրությունները տևում են շատ ավելի երկար ժամանակ, քան օրենսդրությամբ սահմանված չորս ամիսն է[1]: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն տարբերվում է վերը ներկայացված ընթացակարգից, և մրցակցային մարմինը հաճախ չունի բավարար ժամանակ խնդիրն ամբողջությամբ ուսումնասիրելու համար, քանի որ վարույթների համար սահմանված է առավելագույնը եռամսյա ժամկետ, որը ներառում է նաև մրցակցային մարմնի կողմից ուսումնասիրության համար տեղեկատվության հավաքագրման գործընթացը:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ բազմաթիվ երկրներում համակենտրոնացման գործարքների ուսումնասիրության արդյունքում մրցակցային մարմիններն ունեն երեք լուծման հնարավորություն՝ արգելել գործարքի իրականացումը, թույլատրել գործարքն առանց որևէ սահմանափակման կամ թույլատրել որոշակի պայմաններով: Պայմաններով թույլտվության համակարգը եվրոպական երկրներում ունի լայն կիրառություն և մշտապես դիտարկվում է կատարվող ուսումնասիրությունների ընթացքում: Նշված համակարգը կարող է բաժանվել երկու խմբի.

- Կառուցվածքային (ընկերության վերահսկող բաժնետոմսերն այլ ընկերությանն իրացնելը, որոշակի ստորաբաժանում ընկերությունից առանձնացնելը, ակտիվների վաճառքը և այլն):
- Վարքագծային (մտավոր սեփականության իրավունքի օգտագործում, հումքի հասանելիություն, մատակարարման շղթայի անխափան աշխատանք և այլն): Ընդ որում, այս տեսակն առավել կիրառելի է ուղղահայաց շուկաների պարագայում, երբ հումքի իրացնող ընկերությունը կարող է արտադրող ընկերությունների նկատմամբ կիրառել խտրական մոտեցումներ[2]:

[1] Նույն տեղում:
[2] Remedies, Commitments, Undertakings, Conditions or Obligations, Sabine Zigelski, Presentarion, Merger Control Investigation, Workshop of Competition Authorities, Albania, Tirana 19-21 June 2018.

Միջազգային փորձի ուսումնասիրությունը նաև փաստում է, որ պայմանով թույլտվության համակարգի կիրառումն ապահովվում է այսպես կոչված երաշխավոր կազմակերպության կողմից[1]: Հաշվի առնելով այն, որ համակենտրոնացման գործարքների՝ պայմանով թույլատրման դեպքում պետության կողմից պետք է ծախսվեն լրացուցիչ ռեսուրսներ դրանց նկատմամբ հսկողության իրականացման համար, իսկ մրցակցային մարմնի ռեսուրսները սահմանափակ են, կիրառվում է երաշխավոր կազմակերպության ինստիտուտը, որն անկախ մասնավոր կազմակերպություն է, ընտրվում է մրցակցային մարմնի կողմից և որոշակի վճարի դիմաց ապահովում է գործարքի իրականացումը մրցակցության մարմնի պահանջներին: Ընդ որում, թեև երաշխավորի ընտրությունն իրականացնում է պետությունը՝ ի դեմս մրցակցային մարմնի, այդուհանդերձ, վարձատրությունն իրականացնում են համակենտրոնացման մասնակիցները, այլ ոչ թե պետությունը: Այս առումով պետք է նշել, որ Հայաստանում նման ինստիտուտ օրենսդրությամբ սահմանված չէ, և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) է իրականացնում հսկողություն իր կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ: Կարծում ենք, որ ժամանակի ընթացքում, համակենտրոնացման գործերի ավելացմանը զուգընթաց, անհրաժեշտություն կառաջանա ներդնել նաև այս ինստիտուտը, որի արդյունավետությունը փորձարկվել է բազմաթիվ երկրներում:

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից դիտարկվել են Հանձնաժողովի վերջին տարիներին քննված համակենտրոնացման գործերը, որի արդյունքում պարզվել է, որ դրանցից երկուսի դեպքում մրցակցային մարմինը որոշել է համակենտրոնացումները թույլատրել՝ միաժամանակ սահմանելով պարտադիր կատարման ենթակա պայմաններ մրցակցային միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով[2]: Նշված գործարքներից մեկը կատարվել է ծխախոտի շուկայում, որի վերաբերյալ առկա տեղեկատվության վերլուծության արդյունքում կարող ենք նշել հետևյալը: Ծխախոտի շուկայում գործում են 9 տնտեսվարող սուբյեկտներ, և շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան: Մասնավորապես, շուկայի առաջատար ընկերությունն ունի 44% մասնաբաժին, երկրորդ ընկերությունը՝ 20% մասնաբաժին, իսկ եր-

[1] Նույն տեղում:

[2] http://www.competition.am/index.php?menu=149&lng=1

որդ ընկերությունը՝ 17% մասնաբաժին: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ծխախոտի շուկայում հերֆինդալ-հիրշմանի ինդեքսը կազմում է 2 760 միավոր, ինչը բնորոշ է բարձր կենտրոնացված շուկաներին: Միաժամանակ, շուկայի առանձնահատկություններից է այն, որ ներմուծող և արտադրող տնտեսվարող սուբյեկտները ծխախոտի դիստրիբյուցիային չեն մասնակցում, այլ դա իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները: Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ներկայացված գործարքի համաձայն՝ գործարքի արդյունքում միևնույն անձի հսկողության ներքո կարող էին հայտնվել հենց վերոնշված դիստրիբյուցիոն ընկերություններից երկուսը: Ընդ որում, նշված դիստրիբյուցիոն ընկերություններից յուրաքանչյուրը մասնագիտացված է կոնկրետ ներմուծող ընկերության ծխախոտի մատակարարման գործում, այսինքն՝ նշված ընկերությունները հանդիսանում են մրցակիցներ: Հանձնաժողովի մտավախությունը տվյալ դեպքում եղել է այն, որ գործարքի արդյունքում նշված ընկերությունները կվարեն միասնական քաղաքականություն, որը կարտահայտվեր նաև միասնական գնային քաղաքականության իրականացմամբ: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դիստրիբյուտորական ընկերություններն իրականացնում են միայն մատակարարման գործառույթներ և իրացման քաղաքականության, այդ թվում՝ գների որոշման հետ որևէ առնչություն չունեն: Վերը նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը տվել է թույլտվություն՝ սահմանելով նաև պայման, որի համաձայն՝ ընկերությունները հետագայում պետք է իրականացնեն անկախ տնտեսական քաղաքականություն: Այս թույլտվությունը կարող է դասվել վարքագծային պայմանով թույլտվությունների խմբում, քանի որ վերաբերում է ընկերությունների հետագա վարքագծին՝ համատեղ տնտեսական քաղաքականությունից զերծ մնալուն: Հարկ է նշել նաև, որ մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործարքից հետո ծխախոտի շուկայում գործող նշված ընկերությունները պահպանել են Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջները և վարում են անկախ քաղաքականություն:

Ամփոփելով կարող ենք նշել հետևյալը. նախ՝ ներկայում, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տնտեսությունում տեղի են ունենում խոշորացման գործընթացներ, որը մեծապես պայմանավորված է շուկայական տնտեսակարգի առկայությամբ և նրա անկյունաքար հանդիսացող՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից առավելագույն շահույթի ստաց-

ման սկզբունքի կիրառմամբ: Ընդ որում, տնտեսությունում խոշոր ընկերությունների առկայությունն էապես նպաստում է տնտեսական աճի ձևավորմանը, տնտեսությունում նորարար լուծումների կիրառմանը, արտադրողականության բարձրացմանը և երկրի դիրքավորմանը միջազգային շուկայում: Այսինքն՝ ընդհանուր առմամբ կարիք չկա զսպել խոշոր ընկերությունների առաջացումը կամ ընդլայնումը, քանի որ դրա արդյունքում երկարաժամկետ կտրվածքով սպառողները կշահեն: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն, որ խոշոր ընկերությունների ձևավորման արդյունքում կարող են առաջանալ մրցակցության սահմանափակման ռիսկեր, ընդունված է, որ մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմիններն ուշադրության կենտրոնում պահեն նման դեպքերը: Այս առումով մրցակցային մարմիններն իրավասու են դիտարկել այն գործարքները, որոնք տեղի են ունենում շուկայի մասնակիցների միջև, և որոնց արդյունքում նախկինում միմյանց մրցակից ընկերությունները միավորվում են, ձեռք են բերում միմյանց ակտիվները կամ փայաբաժինները և առաջանում են շուկայում ընդհանուր տնտեսական քաղաքականության իրականացման հնարավորություններ: Սույն հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանում և այլ երկրներում համակենտրոնացման գործարքների նկատմամբ իրականացվող հսկողության առումով չնայած առկա ընդհանրություններին, կան նաև մի շարք տարբերություններ՝ պայմանավորված դիտարկվող գործարքների ընտրության, ընդունված որոշումներով սահմանվող պահանջների, ընդունված որոշումների նկատմամբ հսկողության, կատարվող ուսումնասիրության փուլերի և ժամկետների հատկանիշներով: Կարծում ենք, որ կատարվող ուսումնասիրության արդյունքում քննարկված մոտեցումները կարող են կիրառելի լինել նաև Հայաստանում՝ նպաստելով տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Հոկտեմբեր, 2018թ.

ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արման Մանասերյան

Ամփոփագիր

Շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսակարգերին, որպես կանոն, բնորոշ է խոշոր ընկերությունների առկայությունը: Առհասարակ, տնտեսությունում խոշոր ընկերությունների առաջացումը պետությունների և հասարակությունների կողմից չպետք է դիտարկվի որպես բացասական երևույթ, չնայած այն հանգամանքին, որ դրա հետևանքով կարող են կրճատվել մանր և միջին բիզնեսի եկամուտները և առաջանալ զբաղվածության խնդիրներ: Տնտեսությունում խոշորացման գործընթացները հենց մրցակցային պայքարի արդյունք են, և այն, արհեստականորեն (հարկման գործիքներով, լիցենզավորման մեխանիզմներով և այլ) զսպելու դեպքում, կարող է բերել տնտեսության արդյունավետության և մրցունակության նվազմանը: Տնտեսությունում խոշորացման գործընթացների նկատմամբ իրականացվող հսկողության առումով կարող է արդյունավետ լինել մրցակցային մարմինների կողմից կատարվող հսկողությունը, որն ուղղված է մրցակցության սահմանափակման դեպքերում համակենտրոնացման գործարքների իրականացման արգելմանը: Սույն հոդվածի շրջանակներում քննարկված են ապրանքային շուկաներում խոշորացման արդյունքում առաջացող ռիսկերը և այս ուղղությամբ մրցակցային մարմինների կողմից իրականացվող գործառույթները Հայաստանում և այլ երկրներում:

ПРОЦЕССЫ УКРУПНЕНИЯ В ЭКОНОМИКЕ И ФУНКЦИИ КОНКУРЕНТНЫХ ВЕДОМСТВ

Арман Манасерян

Резюме

Экономика, основанная на рыночных отношениях, обычно характеризуется наличием крупных компаний. В целом появление крупных компаний в экономике не должно рассматриваться как негативное явление со стороны государства и общества, несмотря на то, что доходы малого и среднего бизнеса могут быть сокращены и могут возникнуть проблемы с занятостью населения. Процессы консолидация в экономике являются результатом конкурентной борьбы и при искусственном ограничении (инструменты налогообложения, механизмы лицензирования и т.д.) оно может привести к снижению экономической эффективности

и конкурентоспособности. С точки зрения контроля над процессами укрупнения в экономике, эффективным может быть контроль, осуществляемый конкурентными органами, который направлен на запрещение концентрационных транзакций в случаях ограничения конкуренции. В рамках этой статьи обсуждаются риски, возникающие в результате консолидации на товарных рынках и в этой связи функции конкурентных ведомств в Армении и других странах.

THE PROCESSES OF CONSOLIDATION IN THE ECONOMY AND THE ISSUES OF COMPETITION PROTECTION AUTHORITIES

Arman Manaseryan

Resume

The economy based on market relations is usually characterized by the presence of large companies. In general, the emergence of large companies in the economy should not be seen as a negative phenomenon on the part of the state and society, despite the fact that the incomes of small and medium-sized businesses can be reduced and problems with the employment of the population might emerge. The processes of consolidation in the economy are the result of competition and artificial restraint (instruments of taxation, licensing mechanisms, etc.) may lead to a decrease in economic efficiency and competitiveness. From the viewpoint of control over the processes of consolidation in the economy, effective control can be exercised by the competition authorities aimed at prohibiting transactions in cases of unfair competition. The article discusses the risks arising from the consolidation in commodity markets and, in this regard, the functions of competition authorities in Armenia and other countries.

ԱՐԴՅՈ՞Ք ՀՀ-ՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գայանե Հարությունյան*

Բանալի բառեր ՝էկոլոգիական ռիսկեր, երկրաշարժ, հեղեղումներ, սողանքներ, օրենսդրական դաշտ, էկոլոգիական ռիսկերի ապահովագրություն, էկոլոգիական ռիսկերի կառավարում:

Տեղակայված լինելով Ալպ-հիմալայան գոտում՝ Հայաստանի տարածքը գործնականում 100%-ով գտնվում է սեյսմաակտիվ տարածաշրջանում: Համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման» 1999թ. ընդունված համալիր ծրագրի՝ ՀՀ-ում տարբեր աղետներից առավել մեծ վնաս են հասցրել ուժեղ երկրաշարժերը, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր աղետների մեջ կազմել է 94%, մնացած մասը կազմել են սելավները՝ 3.15%, տրանսպորտային պատահարները՝ 1.5%, սողանքները և փլուզումները՝ 1.2%, ջրհեղեղները՝ 0.15%[1]: Նույն ծրագրի շրջանակներում ներկայացված են ՀՀ սեյսմիկ շրջանացման և Հայաստանի տարածքի սեյսմիկ ռիսկի քարտեզները, որոնց համաձայն՝ առավել սեյսմավտանգավոր քաղաքներն են Երևանը, Գյումրին, Վանաձորը, Գավառը, Իջևանը, Կապանը[2]: Երկրաշարժերի ուժգնությունը հասնում է M = 7.1-ի (գործիքային ժամանակաշրջան) և M ≥ 7.5, օջախների միջին խորությունը կազմում է 10 կմ, բոլոր օջախները տարածականորեն կապված են մինչև 1 սմ/տարի միջին տեղաշարժով ակտիվ խզվածքների հետ, ավերիչ երկրաշարժերի

* ՀՊՏՀ, Բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.:

[1] ՀՀ կառավարության որոշում «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին, N429, 1999 թվական, ք. Երևան, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414

[2] ՀՀ կառավարության որոշում «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին, N429, 1999 թվական, ք. Երևան, կետ 5, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414

տնողությունն անբարենպաստ գրունտային պայմանների դեպքում կարող է հասնել մինչև 1 բոպեի, M ≥ 5.5 ուժգնությամբ երկրաշարժերի կրկնման միջին պարբերականությունը կազմում է 30-40 տարի: Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագրի»[1]՝ ամբողջ Հայաստանի տարածքում տեղի են ունեցել Սպիտակի հայտնի երկրաշարժը 1988թ. և այլ երկրաշարժեր, որոնցից խոշորագույններն են 1679թ. հունիսի 4-ին Գառնիի երկրաշարժը (M=7.0), որի ժամանակ զոհվել է 1228 մարդ և Երևան քաղաքի մոտ 1937թ. հունվարի 7-ին M=5.2 ուժգնությամբ երկրաշարժը: Այնուամենայնիվ, վերջին 300 տարիների ընթացքում Երևան քաղաքում տեղի չի ունեցել աղետաբեր երկրաշարժ, որը կհանգեցներ մարդկային զոհերի: Թերևս, վերջին ավերիչ խոշորագույն՝ 1988թ. Սպիտակի երկրաշարժը հանդիսացավ 25,000 մարդու մահվան և 19,000 մարդու մարմնական վնասվածքների պատճառ՝ լրջորեն ավերելով 517,000 բնակարան և երկրի հյուսիսային մասերին պատճառելով $15-20 մլրդ-ի տնտեսական վնաս: Երկրում հեղեղումները նույնպես լուրջ վնաս են հասցնում: Օրինակ, 2010թ. հեղեղման արդյունքում $10 մլն վնաս հասցվեց[2]: Հայաստանը նաև ենթակա է խոշոր արդյունաբերական և տրանսպորտային աղետների, ինչպիսիք են քիմիական աղետները և ճառագայթային աղետները՝ Մեծամորի ատոմային էլեկտրակայանից, որը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում և Երևանից, որտեղ բնակվում է երկրի բնակչության մեկ երրորդը, ընդամենը 28 կիլոմետր հեռավորության վրա:

Ինչպես տեսնում ենք, էկոլոգիական ռիսկերի հետևանքը կարող է ավերիչ լինել Հայաստանի Հանրապետության համար՝ պատճառելով թե՛ մարդկային զոհեր, թե՛ կործանարար վտանգ ներկայացնելով ամբողջ տնտեսությանը: Նման ռիսկերի սխալ և ոչ ժամանակին կառավարումը կարող է հասցնել այնպիսի հետևանքների, որոնք հաղթահարելու համար երկրից բավական երկար ժամանակահատված կարող է պահանջվել: Համապատասխան միջոցառումների ժամանակին մշակումը համարվում է էկոլոգիական ռիսկերի կառավարման նախապայման: Ռիսկերի նվազեցման միջոցառումներից մեկը ապահովագրությունն է:

[1] Հայաստանի Հանրապետության Փրկարար ծառայություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն (ՓԾ), «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման» ծրագիր, Վերջնական հաշվետվություն, 149 էջ, էջ 1, http://open_jicareport.jica.go.jp/pdf/1000008242.pdf

[2] http://pubdocs.worldbank.org/en/403411452899977644/ARM-NDRMP-Brochure.pdf

Ներկայացնենք, թե ՀՀ-ում էկոլոգիական ռիսկերի կառավարումը և ապահովագրությունն ինչ մակարդակի վրա են գտնվում:

Օրենսդրական դաշտ: Մոտ 20 տարի առաջ՝ 1999թ., Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին որոշումը[1], որտեղ որպես հիմնական նպատակ դրված են սեյսմիկ վտանգի կանխատեսումը, սեյսմիկ ռիսկի գնահատումը և սեյսմիկ ռիսկի նվազեցումը: Սեյսմիկ ռիսկերի նվազեցման կետում, բացի մի շարք միջոցառումներից, ուշադրություն է դարձված ապահովագրությանը: Որոշման մեջ նշված է նաև, որ ծրագրի ընդունումը կնպաստի նաև ապահովագրության զարգացմանը՝ շեշտադրելով երկրաշարժերի դեպքում ապահովագրության համակարգի հիմքի ստեղծման անհրաժեշտությունը՝ գործող օրենսդրական ակտերի կատարելագործման և նոր օրենքների, օրենսդրական և նորմատիվ ակտերի մշակման, տեղեկատվության բազայի և ապահովագրության վերահսկման կազմակերպման, բաժնետիրական ապահովագրական ընկերությունների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: Որպես ծրագրի գործարկման արդյունք՝ նախատեսվում է աղետներից ապահովագրության կառուցվածքի ստեղծում, որի ժամկետային մանրամասները ներկայացված են նույն ծրագրի կատարման ժամանակացույցում: Ծրագրի ընդունումից մոտ 20 տարի է անցել, սակայն ՀՀ-ում այդպես էլ աղետներից ապահովագրության լիարժեք կառուցվածք չի ստեղծվել:

2001թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը[2], որտեղ որպես գերակայություն այլ ուղղությունների հետ մեկտեղ սահմանվել է նաև մեծ և առավել վտանգավոր ռիսկերից (հրդեհից, բնական աղետներից, սեյսմիկ ռիսկերից, ատոմային և էկոլոգիական ռիսկերից) ապահովագրական պաշտպանության համակարգի ձևավորումը: Սահմանվել էր նաև էկոլոգիական ռիսկերի ապա-

[1] ՀՀ կառավարության որոշում «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին, N429, 1999 թվական, ք. Երևան, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մասին», 21 ապրիլի 2001 թվականի, N 335, http://www.irtek.am/views/act.aspx?aid=13270

հովագրության և սեյսմիկ ռիսկերի ապահովագրության ներդրումը: Որոշման ընդունումից անցել է 17 տարի, սակայն էկոլոգիական ռիսկերի պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման վերաբերյալ համապատասխան գործնական միջոցառումներ այդպես էլ չեն անցկացվել:

Տեղին է նշել, որ 2008թ., այսինքն՝ 10 տարի առաջ, Համաշխարհային բանկի (ՀԲ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի Կայուն զարգացման վարչության տնօրեն Փիթեր Թոմսոնը կարևորել է ՀՀ-ում աղետների ապահովագրության համակարգի ներդրումը: Նա նշել է. «...բացի ներդրումային ծրագրերից, ՀԲ-ն կարող է նաև աջակցություն ցուցաբերել հետագայում տարածաշրջանային ապահովագրական համակարգի ստեղծման ուղղությամբ: Այստեղ ՀԲ-ն կցուցաբերի գլոբալ մոտեցում. ապահովագրական սխեմաներ կմշակվեն, օրինակ, կոնկրետ բնական աղետներից՝ ջրհեղեղից, կարկուտից տուժած մշակաբույսերի, բերքի համար: Մյուս ուղղությունը, որը ներառված է ՀԲ աշխատանքների մեջ, շենքերի ամրացումն է և շինարարական ստանդարտների մշակումը, որը հնարավորություն է տալիս մեղմել երկրաշարժի հետևանքները»[1]:

2011թ. «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին փաստաթղթի հավելվածի[2] մեջ նշվում է, որ Հայաստանում, բացի մի շարք հիմնահարցերից, չկարգավորված է մնում էկոլոգիական ապահովագրության հիմնախնդիրը: Շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական գործիքների շարքում շեշտադրվում է բնապահպանական ապահովագրությունը: Իսկ օրենքի մշակման հիմնական ուղղությունների շարքում առանձնացվում է նաև բնապահպանական ռիսկերի ապահովագրման անհրաժեշտության սահմանումը: 2017թ. դրությամբ օրենքը դեռևս նախագծի կարգավիճակում է, իսկ ապահովագրության վերաբերյալ կետեր ներկայացված չեն[3]:

2014թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի[4] (1995թ. օրենքը ուժը կորցրած է ճանաչ-

[1] https://armenpress.am/arm/print/505552/

[2] «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներ»-ին հավանություն տալու մասին, Հավելված ՀՀ կառավարության 2011թ. արձանագրային որոշման, 8 էջ, www.gov.am/tiny_forms/gnf.php?f=TZV-24-04-01.doc

[3] https://www.e-draft.am/projects/264/about

[4] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594

վել) 6-րդ հոդվածի առաջին կետում նշված է, որ գնահատման նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, *նվազեցումը* կամ բացառումը: Սակայն որպես նպատակ սահմանելով նվազեցումը՝ օրենքը ոչինչ չի նշում, օրինակ՝ էկոլոգիական ռիսկերի ապահովագրության՝ որպես ռիսկի նվազեցման առաջնային և հիմնական գործիքի մասին:

Անդրադառնանք ապահովագրության ոլորտում էկոլոգիական ռիսկերի կարգավորման օրենսդրական դաշտին: Ապահովագրությունը ՀՀ-ում կարգավորվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007թ. ընդունված օրենքին համապատասխան: Որպես այդպիսին ապահովագրության առանձին տեսակների վերաբերյալ առանձին օրենքներ կամ օրենսդրական ակտեր մշակված չեն, բացի ԱՊՊԱ պարտադիր ապահովագրատեսակից: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007թ. ընդունված օրենքի 7-րդ հոդվածում պարզապես առանձնացված է «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն» դասը: Բացակայում է նաև առանձին խոշոր ապահովագրության դասերի գծով նորմատիվների (ընդհանուր կապիտալի նվազագույն չափ, երբ ընկերությունը իր վրա է վերցնում անհամեմատ խոշոր ռիսկ, մեկ ստանձնած ռիսկի առավելագույն չափի նորմատիվ և այլն) սահմանումը, ինչը ևս դժվարացնում է խոշոր բնական աղետների ապահովագրության հնարավորությունները: Ստացվում է, որ ՀՀ ապահովագրական օրենսդրական դաշտն էկոլոգիական ռիսկերի կարգավորման բնագավառում լիարժեք չէ:

Հետազոտություններ և վերլուծություններ: Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության վերաբերյալ քիչ չեն նաև կատարված վերլուծությունները և հետազոտությունները: Մասնավորապես՝ «Կլիմայի փոփոխության և առողջապահության ՀՀ ազգային քաղաքականության վերլուծություն» 2016թ. նախագծում[1] առաջարկվում է էկոլոգիական ռիսկերը կառավարել երկու տիպի գործիքներով. 1. էկոհամակարգային ծառայությունների հետ կապված տնտեսական գործիքներ և 2. այլ նորարարական ֆինանսատնտեսական գործիքներ: Վերջինների թվում առաջարկվում է ներառել էկոլոգիական ապահովագրությունը, էկոլոգիական աուդիտը, ինչպես նաև հարկային և բանկային արտոնությունները, որոնք ևս դիտարկվում են

[1] «Կլիմայի փոփոխության և առողջապահության ՀՀ ազգային քաղաքականության վերլուծություն» նախագիծ, 2016թ., 91 էջ, http://aarhus.am/Announcements/verlutsutyun.pdf

նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների համակարգում: Բացի այդ, միջազգային պրակտիկայում հաջողությամբ կիրառվում են տարբեր գործիքների հիբրիդներ (օրինակ՝ էկոլոգիական ապահովագրի առկայության դեպքում տնտեսվարողներին հարկային կամ բանկային արտոնությունների տրամադրում):

«Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությանը և դրա իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին»[1] 2017թ. նախագծի 5-րդ գլխի 18-րդ կետում նշվում է, որ աղետներից ապահովագրական համակարգի գործունեությունը ոչ արդյունավետ է, ինչը թուլացնում է աղետների ռիսկի կառավարման ֆինանսական գործընթացների ճկունությունը՝ հիմնական ծանրաբեռնվածությունը թողնելով պետական և համայնքային բյուջեների վրա, ու հանգեցնում է ֆինանսական կարողությունների նվազեցմանը և բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը: Նախագծում առաջարկվում է աղետներից ապահովագրման արդիական համակարգի ներդրումը՝ որպես ծրագրի կատարողներ սահմանելով ՀՀ ԱԻՆ-ը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, ՀՀ ֆինանսների նախարարությանը, ՀԲ-ին (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններին (համաձայնությամբ), ապահովագրական ընկերություններին (համաձայնությամբ), կատարման ժամկետը սահմանվել է մինչև 2020թ., իսկ ֆինանսական ապահովումն իրականացվելու է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

Ծրագրեր: Հայաստանի Հանրապետությունն էկոլոգիական ռիսկերի կառավարման նպատակով ֆինանսավորում է ստանում միջազգային կառույցներից: Դրանցից մեկը Համաշխարհային բանկի կողմից ՀՀ-ին 2015թ. տրված ֆինանսավորումն էր: Ծրագիրը 2.5 տարի տևողությամբ է, ֆինանսավորումը՝ $1.75 մլն: Ծրագրի հիմնական գործընկերներն են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, համապատասխան պետական մարմինները, Երևանի քաղաքապետարանը և ՀՀ այլ մարզերն ու համայնքները: Ցանկալի կլիներ, որ ծրագրին որպես գործընկեր մասնակցեր նաև ԿԲ-ն: Վերջինիս միջոցով հնարավորություն կընձեռվեր կյանքի կոչել ապահովագրության բնագավառում արդեն իսկ 20 տարի շոշափվող աղետներից ապահովագրության կառուցվածքի ստեղծման նախագիծը:

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=89604

Ինչ վերաբերում է աղետային ռիսկերի ֆինանսավորմանը, ապա «Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002թ. ընդունված ՀՀ օրենքի[1] 8-րդ գլխի հոդված 22-ի համաձայն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումն իրականացնում են համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին: «Պետական բյուջեի մասին» 2018թ. ՀՀ օրենքի[2] մեջ ծախսային հոդվածներում, մասնավորապես՝ «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածում առանձնացված է միայն փրկարար ծառայություններ բաժինը և ոչ մի մանրամասնում չկա աղետների առաջացման դեպքում փոխհատուցումների մասին: Արտակարգ իրավիճակների նախարարության 2018թ. բյուջեում նշված է «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» տողը, որի մեջ ներառվում է «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» կետը, որը կրկին չի մանրամասնում աղետների առաջացման դեպքում փոխհատուցումը: Մինչդեռ, օրինակ՝ Ճապոնիայի պետական բյուջեում հստակ հոդվածով առանձնացված են «Աղետներից վերականգնման, աղետների կանխարգելման և նվազեցման ծրագրերն» իրենց համապատասխան ենթակետերով[3]:

«Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002թ. ընդունված ՀՀ օրենքի 6-րդ գլխի հոդված 16-ի բ կետի համաձայն[4]՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն ստանալ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հետևանքով կրած վնասների փոխհատուցում, սակայն կարգը մանրամասնված չէ, ինչն էլ հոդվածի կետը դարձնում է անհասկանալի:

Աղետային ռիսկերի ֆինանսավորման մի մասը կատարվում է ապահովագրության մեխանիզմի միջոցով: Սակայն հրդեհներից և աղետներից ապահովագրությունը 2017թ. կազմել է երկրի ապահովագրական բիզնեսի ստացված ապահովագրավճարների միայն 8%-ը՝ հանգեցնելով աղետների ռիսկի փոխանցման մեխանիզմների շատ սահմանափակ օգտագործման:

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923
[2] ՀՀ օրենք «Պետական բյուջեի մասին», 2018թ., 1023 էջ, էջ 3, https://www.e-draft.am/projects/447/about
[3] https://www.mof.go.jp/english/budget/budget/fy2017/03.pdf
[4] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923

Եզրակացություններ

1. Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության վերաբերյալ մեխանիզմների ներդրումը ՀՀ-ում առաջնահերթ նպատակներից է եղել դեռևս 1990-ական թվականներից: Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության կառուցվածքի ստեղծման առաջնահերթությունն ունի օրենքի ուժ, սակայն գործնական բնույթի միջոցառումներ այդպես էլ մինչ այժմ չեն իրականացվել:
2. Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության որոշ սխեմաներ ունեն միայն նախագծի կարգավիճակ:
3. Էկոլոգիական ռիսկերի արդյունքում առաջացած հնարավոր հետևանքների վերացման ֆինանսավորումը հստակ ձևակերպված չէ ոչ օրենսդրորեն, ոչ պետական բյուջեում՝ կոնկրետ հոդվածի տեսքով:
4. Էկոլոգիական ռիսկերի նվազեցման ծրագրերում ապահովագրական ընկերություններն առանձնացված չեն որպես առաջնային կատարողներ:
5. Էկոլոգիական ռիսկերի հետևանքների վերացման ֆինանսավորման գործընթացում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը չնչին է, բացի այդ, կարգավորված չէ էկոլոգիական ռիսկերի ապահովագրության գործընթացն առանձին օրենքով կամ օրենսդրական ակտերով:

Ստացվում է, որ ապահովագրական ընկերություններն էկոլոգիական ռիսկերի ֆինանսավորման գործընթացում, ինչպես նաև ֆինանսավորման տարաբնույթ ծրագրերում փաստացի ընդգրկված են, շեշտադրված է նաև ապահովագրության առաջնահերթությունն օրենսդրորեն: Կարելի է ասել, որ ՀՀ-ում էկոլոգիական ռիսկերի ապահովագրության մասշտաբային կառուցվածքի ստեղծման բոլոր նախադրյալներն առկա են:

Հունիս, 2018թ.

ԱՐԴՅՈ՞Ք ՀՀ-ՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գայանե Հարությունյան

Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետությունն աչքի է ընկնում բարձր սեյսմաակտիվությամբ, ինչն իր հերթին նշանակում է երկրաշարժերի և աղետների բարձր հավանականություն: Նման իրավիճակում պետությունը պետք է միշտ պատրաստ լինի աղետային ռիսկերը ճշգրիտ և ժամանակին կառավարելուն: Վերջինս նշանակում է ռիսկի գնահատում, նվազեցում և կանխարգելում:

Հոդվածում մեր կողմից բացահայտվել է, թե Հայաստանի Հանրապետությունը որքանով է պատրաստ աղետային ռիսկերի կառավարմանը կամ նման համակարգի մշակմանը և ներդրմանը: Հիմնախնդիրը դիտարկվել է ապահովագրության տեսանկյունից՝ որպես ռիսկերի նվազեցման կամ կանխարգելման առաջնային գործիք: Բացահայտվել է, թե արդյոք ՀՀ-ում կան էկոլոգիական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրմանը նպաստող գործոններ և պայմաններ: Այս տեսանկյունից ուսումնասիրվել են ոչ միայն էկոլոգիական ռիսկերի կառավարման և ապահովագրության վերաբերյալ օրենքները և օրենսդրական ակտերը, այլև այն ծրագրերն ու նախագծերը, որոնք նպաստում են նման համակարգի մշակմանը:

ИМЕЮТСЯ ЛИ В РА ПРЕДПОСЫЛКИ ДЛЯ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ СТРАХОВАНИЯ ЭКОЛОГИЧЕСКИХ РИСКОВ?

Гаяне Арутюнян

Резюме

Республика Армения отличается высокой сейсмической активностью, что, в свою очередь, означает высокую вероятность землетрясений. В такой ситуации государство всегда должно быть готово к точному и своевременному управлению рисками стихийных бедствий. Последнее означает оценку, снижение и предотвращение риска. Для принятия таких мер государство должно быть финансово и юридически готово к противостоянию. В статье раскрывается, насколько Республика Армения готова управлять рисками стихийных бедствий

или разработать и внедрить такую систему. Проблема рассмотрена с точки зрения страхования как основного средства снижения или предотвращения риска. Выявлено, есть ли факторы и условия, способствующие внедрению в Армении системы страхования экологических рисков. С этой точки зрения изучены не только законы и правила экологического управления рисками и страхования, но и программы и проекты, способствующие развитию такой системы.

ARE THERE PRECONDITIONS FAVORABLE FOR INTRODUCTION OF ENVIRONMENTAL RISKS INSURANCE SYSTEM IN ARMENIA?

Gayane Harutyunyan

Resume

The territory of the Republic of Armenia is characterized by seismic activity, which implies high probability of seismic events and natural disasters. In such situation the government must be always ready to manage disaster risks in a correct and timely manner. This implies risk evaluation, mitigation and prevention.

The article identifies the extent in which the Republic of Armenia is ready for disaster risk management or development and introduction of such system. The problem is reviewed from the viewpoint of insurance as a primary tool for risk mitigation or prevention. It is determined whether there are preconditions favorable for introduction of environmental risks insurance system in Armenia. From this perspective not only the laws and regulations pertinent to environmental risk management and insurance are studied, but also the programs and projects that contribute to development of such system.

ՍԱԼԱՖԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ/ՎԱՀԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Գայանե Չոբանյան*

Բանալի բառեր ՝ Ադրբեջան, վահաբականություն, սալաֆիականություն, իսլամ, ծայրահեղական գաղափարներ, ջիհադ, մոջահեդ։

Ադրբեջանի պաշտոնական քաղաքականությունն ուղղված է յուրահատուկ «ազգային իսլամի» ձևավորմանը, որտեղ փորձ է արվում հարթեցնել իսլամական երկու ուղղությունների՝ շիայականության և սուննիականության միջև առկա տարաձայնությունները՝ ընդգծելով իսլամի ազգային ինքնությունը պայմանավորող կարևոր գործառույթը, հետևաբար վերջին ժամանակաշրջանում բուռն թափ ստացած իսլամական վերածննդի գործընթացը սկսել է դիտարկվել որպես քաղաքական սպառնալիք։

«Ավանդական» իսլամական կառույցներին զուգահեռ՝ երկրում հաստատվել և ակտիվ գործունեություն են ծավալում «ոչ ավանդական» օտարերկրյա իսլամական կառույցներն ու կազմակերպությունները՝ վերաձևելով Ադրբեջանի կրոնական դաշտը[1]։ Ադրբեջանում քաղաքական ընդդիմության փաստացի բացակայությունը, սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունը, երկրում տիրող ավտորիտար ռեժիմի ամենաթողությունը և այս ամենն արցախյան խնդրի շուրջ պատերազմական իրադրությամբ կոծկելը, հայատյացության վրա խարսխված պետական գաղափարախոսության սնան-

---

* Թուրքագետ։

[1] Իսլամական շարժումների «ավանդական» (*enenevi dini cereyanlar*) և «ոչ ավանդական» (*qeyri-enenevi dini cereyanlar*) տարանջատումը լայնորեն կիրառվում է Ադրբեջանի իշխանությունների կողմից։ «Ավանդական» իսլամը «ոչ քաղաքական», «Ադրբեջանում առաջացած», «դրսից չներկրված» կրոնական կառույցներն են, որոնք հաճախ ներկայացնում են իսլամի և նախաիսլամական հավատալիքների սինթեզ, մինչդեռ «ոչ ավանդական» (առանց սուննիական կամ շիայական տարանջատման) են համարվում բոլոր «քաղաքականացված», «ապակայունացնող» և «արտաքին ուժերի կողմից ներկրված» կառույցները, տե՛ս *Bashirov G.,* Islamic discourses in Azerbaijan: the securitization of “non-traditional religious movements”, Central Asian survey, vol. 37, Routlage, London and New York, 2018, p. 38:

կությունը հանդիսացան այն ազդակները, որոնք պարարտ հող նախապատրաստեցին իսլամական կառույցների՝ որպես ոչ միայն գաղափարական ապավենի, այլև քաղաքական այլընտրանքային ուժի հանդես գալու համար: Հասարակության լայն շերտեր սկսեցին հարել այս կամ այն կրոնական համայնքին՝ իրենց խնդիրներին լուծում տալու, քաղաքական ընդդիմադիր հայացքներն արտահայտելու և կանաչ դրոշի ներքո միավորվելու համար: Ինչպես նշում է Ադրբեջանի երրորդ նախագահ Հեյդար Ալիևի նախկին խորհրդական Էլդար Նամազովը, «երկրում հաստատված բռնատիրական ռեժիմն է պատասխանատու Ադրբեջանում ծայրահեղական իսլամի առաջացման համար: Կառավարությունը ճնշում է գործադրում ժողովրդավարության, ընդդիմության նկատմամբ: Այժմ մեծ ճեղքվածք է Ադրբեջանում, իսկ քաղաքական իսլամը փորձում է լցնել այն»[1]:

Սույն հոդվածում կդիտարկենք պաշտոնական կրոնական կառույցներին զուգահեռ երկրում հաստատված օտարերկրյա իսլամական հոսանքներից առավել մեծ վտանգ ներկայացնող սալաֆիականության/վահաբականության ազդեցությունն ու գործունեությունն Ադրբեջանում:

Օտարերկրյա իսլամական կառույցների տարածման ընդհանուր նախադրյալները

Անկախության սկզբնական տարիներին Ադրբեջանում իսլամականության աստիճանը բավական ցածր էր, և թեև բնակչության ճնշող մեծամասնությունն իրեն համարում էր մուսուլման՝ նույնացնելով այդ հասկացությունն ազգային-մշակութային պատկանելության հետ, այն չէր տիրապետում կրոնական տարրական գիտելիքների և անգամ հստակ պատկերացում չուներ սուննի և շիա ուղղությունների միջև առկա տարբերությունների մասին: Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած գաղափարական վակուումը լցնելու գործառույթը մասնակիորեն դրվեց ազգային ինքնության, ավանդույթի, մշակույթի կարևոր տարր հանդիսացող իսլամական գաղափարների վրա: Ադրբեջանցիների շրջանում նկատվեց մինչխորհրդային իսլամական մշակութային ժառանգությանը վերադառնալու և իսլամական քաղաքակրթության մասնիկը կազմելու ձգտում: Սակայն պաշտոնական կրոնական կառույցները, որոնք ինչպես խորհրդային իշխանության տարի-

[1] *Allnutt L.,* Azerbaijan: The Struggle to Shape Islam," Radio Free Europe/Radio Liberty, http://www.rferl.org/featuresarticle/2007/11/641B2569-4360-4114-8A89-592C68EC2101.html, 31 November 2007, մեջբերված է *Geybullayeva A.,* Is Azerbaijna becoming a hub of radical Islam?, file:///D:/Girk%20Azerb/Radical%20Islam%20in%20Azerbaijan.pdf

ներին, այնպես էլ նորանկախ Ադրբեջանում հանդիսանում էին զանգվածների վրա հսկողություն իրականացնելու պետական գործիք, չէին վայելում բնակչության վստահությունը և չէին էլ կարող բավարար կրոնական գիտելիքներ ու կրթություն ապահովել իսլամական գաղափարների նկատմամբ բնակչության աճող հետաքրքրասիրության համար: Արտաքին և ներքաղաքական դաշտում Ադրբեջանի իշխանությունների կողմից ստեղծած մի շարք իրադրություններ վճռորոշ դեր խաղացին պաշտոնական իսլամական կառույցների ազդեցության թուլացման և ոչ ավանդական, ծայրահեղական իսլամական հոսանքների տարածման համար:

Ներքաղաքական դաշտում առավել կարևոր գործոններից էին 1990-ականների սկզբին երկրում տիրող քաղաքական քաոսը (ինչն արտահայտվում էր տարբեր քաղաքական խմբավորումների միջև իշխանության համար մղվող պայքարով, արցախյան հակամարտությունն էլ այդ խմբերի համար դիտարկվում էր զուտ որպես քաղաքական դավադրությունների գործիք), պետական կառույցների կոռումպացվածության բարձր մակարդակը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, հասարակության համախմբման գաղափարական ապավենի բացակայությունը: Արտաքին գործոններից էին արցախյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի ղեկավարության կողմից իսլամական ծայրահեղական օտարերկրյա կառույցների ներգրավումը հայերի դեմ պայքարում, իսլամական ահաբեկչական միջազգային կառույցներին Ադրբեջանում ապաստարան տրամադրելը, ռուս-չեչենական պատերազմներին, Պակիստանի, Աֆղանստանի, Սիրիայի, Իրաքի ռազմական գործողություններին ադրբեջանական կողմի մասնակցությունը: Արդյունքում՝ իսլամական մի շարք երկրներ Ադրբեջանում իրենց ազդեցությունը տարածելու համար դիմեցին իսլամական գործոնի «փափուկ ուժի» գործառույթին և Ադրբեջանի համար «ոչ ավանդական» իսլամական տարբեր կառույցների միջոցով ներթափանցեցին հասարակական-քաղաքական դաշտ: Սուննիական հոսանքները (մասնավորապես՝ արաբական երկրներից, Թուրքիայից, Հյուսիսային Կովկասից) տարածվեցին ավանդապես սուննիադավան բնակչություն ունեցող Ադրբեջանի հյուսիսային և արևմտյան շրջաններում, որտեղի բնակչության մեծամասնությունը տեղաբնիկ հյուսիսկովկասյան ժողովուրդներ են (լազեր, ավարներ, ծախուրներ, ուդիներ, խինալուգներ, բուդուղներ, կրիզներ), իսկ շիայական հոսանքները (մասնավորապես՝ Իրանից, Իրաքից)՝ իրանական ծագում ունեցող ժողովուրդների (թալիշներ, թաթեր, քրդեր) բնակության շրջաններում, Իրանին սահմանակից հարավային հատվածում և Ապշերոնյան թերակղզում:

Սալաֆիականության/վահաբականության տարածումն Ադրբեջանում

Օտարերկրյա ծայրահեղական իսլամական կազմակերպությունների միջոցով Ադրբեջան ներթափանցած ամենավտանգավոր կրոնական ուղղությունը համարվում է արաբական երկրներից, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից, ինչպես նաև Պակիստանից և Հյուսիսային Կովկասից ներթափանցած սալաֆիական ուղղություններից մեկը՝ վահաբականությունը: Սալաֆիականությունը իսլամի սուննիական ուղղության շրջանակներում առաջացած արմատական կրոնական ուղղություն է, որի անվանումը ծագել է արաբերեն «աս-սալաֆ աս-սալիհ» (ուղղահավատ նախնիներ) արտահայտությունից կամ ուղղակի «սալաֆ»՝ նախնի բառից: Այն հանդես է գալիս իսլամում ցանկացած արդիականացման դեմ և ձգտում է վերադառնալ Մուհամեդ մարգարեի ժամանակաշրջանում գործող սկզբնական կրոնական օրենքներին և արժեքներին: Սալաֆիական շարժման դրսևորումներից է վահաբական ծայրահեղական կրոնական շարժումը, որի անվանումը ծագել է *«իսլամի վերածնմանն» ուղղված XVIIIդ. Մուհամադ իբն Աբդ ալ-Վահաբիի* (1703–1792թթ.) *գլխավորությամբ առաջացած ծայրահեղական կրոնական շարժման անունից: Այս շարժման վրա իրենց ազդեցությունն են ունեցել խարիջիների և ծայրահեղ արմատական հանբալիական մազհաբի գաղափարները:* Ներկայում սալաֆիականություն և վահաբականություն եզրույթները հաճախ նույնացվում են, հատկապես Ադրբեջանում, հետևաբար սույն հոդվածում այս երկու եզրույթներն օգտագործվում են որպես հոմանիշներ[1]:

Վահաբականությունն արտահանող հիմնական երկիրն է համարվում Սաուդյան Արաբիան, որտեղ այն հանդիսանում է պաշտոնական գաղափարախոսություն: 1962թ. Սաուդյան Արաբիայի կողմից հիմնադրվեց Իսլամական աշխարհի լիգա (ԻԱԼ) ոչ պետական կազմակերպությունը՝ ամբողջ աշխարհում վահաբականության գաղափարների տարածման նպատակով[2], ինչն ուղղված է տարբեր երկրներում ոչ պետական կրոնական-քաղաքական կազմակերպությունների միջոցով միջազգային թատերաբեմում Սաուդյան Արաբիայի ազդեցության ուժեղացմանը: ԻԱԼ-ի միջոցով հովանավորվում են

[1] Քանի որ վահաբականություն տերմինն ասոցացվում է բացառապես բացասական երևույթների՝ ահաբեկչության, ծայրահեղ իսլամականության, ռազմական ջիհադականության հետ, արմատական ուղղության հետևորդները գերադասում են իրենց անվանել սալաֆիականներ, միաստվածականներ կամ ուղղակի մուսուլմաններ:

[2] *Кепель Ж.,* Джихад: Экспансия и закат исламизма, Ладомир, 2004, с. 56.

այնպիսի իսլամական ծայրահեղական կազմակերպություններ, ինչպիսիք են Փրկության իսլամական ճակատը (Ալժիր), «Նահդա» (Թունիս) և «Համաս» շարժումները (Պաղեստին), «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը (Եգիպտոսում, Սիրիայում, Հորդանանում, Սուդանում գործող մասնաճյուղերը)[1], իսկ վերջին տասնամյակում՝ հյուսիսկովկասյան և ադրբեջանական ծայրահեղական իսլամական կազմակերպությունները:

ԽՍՀՄ փլուզումից հետո այն սկսեց տարածվել հետխորհրդային երկրներում, մասնավորապես՝ Ադրբեջանում: Սակայն ադրբեջանցիների առաջին շփումները սալաֆիական իսլամական գաղափարների հետ տեղի ունեցան դեռևս 1980-ական թվականներին, երբ ադրբեջանցի մուսուլմանների շրջանում իսլամի՝ որպես իրենց մշակութային բաղադրիչի նկատմամբ հետքրքրությունն ավելի աճեց՝ «վերակառուցման» քաղաքականության ալիքին զուգահեռ: Կրոնի վերաբերյալ բավարար գիտելիքների և կրոնական գրականության բացակայության պայմաններում արաբական և աֆրիկյան երկրներից Ադրբեջանում սովորող ուսանողների հետ շփումները տեղացի մուսուլմանների համար իսլամի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն ստանալու ուղիներից մեկն էին[2]: Սալաֆիական քարոզչության փոքրիկ կենտրոն էին հատկապես Ադրբեջանի պետական բժշկական և նավթային ակադեմիայի ուսանողական հանրակացարանները, որտեղ ուսում ստանալու համար Խորհրդային Միություն եկած արաբ ուսանողներն ադրբեջանցիներին սովորեցնում էին Ղուրան, սուննա և իսլամական օրենք[3]: Օտարերկրյա մուսուլման ուսանողների, սուննի ադրբեջանցիների, թաթարների, լեզգիների համար սալաֆիական գաղափարների տարածման կենտրոն և հավաքատեղի էր հանդիսանում խորհրդային Բաքվի միակ սուննիական Էջդերբեյ մզկիթը, որը ոչ պաշտոնապես կոչվում է նաև Կապույտ մզկիթ կամ Թաթարական մզկիթ: Այս մզկիթի հետևորդներն էլ կատարեցին իսլամական գրականության առաջին թարգմանությունները, հրատարակեցին առաջին սալաֆիական գրքույկները: Այսպիսի ուսանողներից մեկի՝ Աբու Ումար Սալիմ ալ-Ղազիի գործունեությունը մեծ ազդեցություն ունեցավ Ադրբեջանում վահաբական գաղափարների տարածման

[1] *Добаев И.,* Политические институты исламского мира: идеология и практика, Центр системных региональных исследований и прогнозирования ИППК при РГУ, Ростов-на-Дону, 2001, https://studfiles.net/preview/1907540/page:3/

[2] *Sattarov R.,* Islam, state and ociety in independent Azerbaijan. Between historical legacy and post-Soviet reality with special reference to Baku and its environs, Germany, 2009, p. 146.

[3] *Gasimov K.,* Examining Salafism in Azerbaijan. Transnational connections and local context, Religion and soft power in the South Caucasus, edited by Jödicke A.,London, 2017, p. 109.

և արմատավորման համար: Մինչև 1998թ., երբ օտարերկրյա իսլամական ազդեցության դեմ պայքարի նպատակով Ադրբեջանի իշխանություններն արտաքսեցին նրան երկրից, Սալիմը համարվում էր Ադրբեջանում պաշտոնական սալաֆիականության առաջնորդը: Նա քարոզում էր Ադրբեջանի տարբեր շրջաններում, աջակցում էր ադրբեջանցի ուսանողներին իսլամական հաստատություններում կրթություն ստանալու հարցում, արաբական տարբեր երկրներից հրավիրում էր մարդկանց, ովքեր ֆինանսավորում էին իսլամական կրթական ծրագրերը, մզկիթների կառուցումը, կազմակերպում էր հայտնի սալաֆիական շեյխերի այցն Ադրբեջան[1]: 1990-ականներին Ադրբեջանում սալաֆիական ակտիվ քարոզչությամբ էր զբաղվում նաև թունիսցի Աբու Թարիքը, որը քուվեյթյան բարեգործական Ջամիյաթ իհյա աթ-թուրաթ ալ-իսլամի (Իսլամական ժառանգության վերածնման միություն) կազմակերպության ակտիվիստներից էր:

Անկախության և հատկապես Հեյդար Ալիևի իշխանության սկզբնական տարիները (պաշտոնավարել է 1993-2003թթ.) նշանավորվեցին իսլամական աշխարհի հետ հարաբերություններ կառուցելու պաշտոնական քաղաքականությամբ, որի հիմքը հանդիսացավ իսլամական համերաշխության գաղափարախոսությունը[2]: 1993թ. Հեյդար Ալիևը Մոսկվա կատարած պաշտոնական այցի ժամանակ արաբական բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներին կոչ արեց օգնություն ցուցաբերել արցախյան պատերազմից տուժած փախստականներին և հրավիրեց այցելել Ադրբեջան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար: 15 արաբական կազմակերպության ներկայացուցիչներ եկան և հաստատվեցին Ադրբեջանում[3]: Արդյունքում՝ իսլամական բարեգործական միջազգային կազմակերպությունների միջոցով խաղաղ ճանապարհով Ադրբեջանում տարածվեց սալաֆիականությունը/վահաբականությունը: Արաբական բարեգործական կազմակերպություններից Ադրբեջանում առավել ակտիվ գործունեություն էին ծավալում Ջամիյաթ իհյա աթ-թուրաթ ալ-իսլամի (Իսլամական ժառանգության վերածնման միություն), Ռաբիթա ալ-ալամ ալ-իսլամի

[1] Նույն տեղում, էջ 109:

[2] Անկախության առաջին տարիներին Ադրբեջանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Թուրքիայի, Իրանի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, ԱՄԷ-ի, Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Պակիստանի հետ, առաջին միջազգային կազմակերպությունը, որին անդամագրվել է Ադրբեջանի Հանրապետությունը 1991թ. Իսլամական կոնֆերանս կազմակերպությունն էր (հետագայում Իսլամական համագործակցություն կազմակերպություն), 1992թ. անդամակցել է Տնտեսական համագործակցության կազմակերպությանը:

[3] *Goyushov A., Rovshanoglu K.,* A brief history of Salafism in Azerbaijan, Baku research institute, https://bakuresearchinstitute.org/a-brief-history-of-salafism-in-azerbaijan/

(Համաշխարհային իսլամական լիգա), Գեյաթ Ալ-Իգասա Ալ Իսլամիյա Ալ-Ալամիյա (Իսլամական օգնության միջազգային կազմակերպություն), Գեյաթ Ալ-Գաուս վալ-Մուսաադա լի Մուսլիմի Ալ-Քաուքազ (Կովկասի մուսուլմանների օգնության և աջակցության կազմակերպություն), Ալ-Խարամեյն (Երկու սրբավայրեր) կազմակերպությունները[1]: Բարեգործական կազմակերպությունների գործունեության թիրախ են դառնում մեծ մասամբ սոցիալապես անապահով խավերի ներկայացուցիչները, փախստականները, որոնց սոցիալ-տնտեսական խնդիրներն առ այսօր չեն ստացել լուծում: Հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում կրթական համակարգի միջոցով վահաբական գաղափարների ներդրմանը, դրամաշնորհներ են տրամադրվում Ադրբեջանի քաղաքացիներին՝ կրոնական բարձրագույն հաստատություններում անվճար ուսում ստանալու համար, որոնք, վերադառնալով հայրենիք, դառնում են սալաֆիական քարոզիչներ: Գլխավոր կրթական կենտրոնը Սաուդյան Արաբիայում Մեդինայի իսլամական համալսարանն էր, որի շրջանավարտները հետագայում դարձան սալաֆիականության տեղական գլխավոր քարոզիչները[2]: Արդյունքում՝ այս ամենի սպառողները և նրանց ընտանիքի անդամները նյութական և գաղափարական կախվածության մեջ են ընկնում տվյալ կազմակերպություններից և դառնում վահաբական գաղափարների ինքնակամ տարածողներ: Օտարերկրյա բարեգործական կազմակերպություններից առավել ազդեցիկը 1978թ. Իսլամական աշխարհի լիգայի շրջանակներում ստեղծված ոչ կառավարական մարդասիրական Իսլամական օգնության միջազգային կազմակերպությունն էր (կրճատ «Ալ-Իգաս»), որի գլխավոր կենտրոնը գտնվում է Ջիդդեում (Սաուդյան Արաբիա): «Ալ-Իգաս»-ը աշխարհի ամենախոշոր իսլամական բարեգործական կազմակերպությունն է և պաշտոնապես ստեղծվել էր բնական աղետների զոհերին, աղետային շրջանների փախստականներին, զինված կոնֆլիկտի արդյունքում տուժածներին հումանիտար օգնություն տրամադրելու համար, ինչպես նաև տարբեր երկրներում (Աֆղանստան, Ադրբեջան, Բոսնիա, Տաջիկստան, Չեչնիա, Դաղստան և այլն) մզկիթների, դպրոցների կառուցումը

[1] *Юнусов А.,* Ислам в Азербайджане, Баку, 2004, с. 260.

[2] Մեդինայի իսլամական համալսարանի ադրբեջանցի շրջանավարտների ընդհանուր թիվը 86 է, որոնցից են Ադրբեջանի սալաֆիական համայնքի այնպիսի առաջատար կրոնական գործիչներ, ինչպիսիք են Գամեթ Սուլեյմանովը, Ալիխան Մուսաևը, Ադիլ Ռաջաբովը, Ռամիլ Սուլթանովը, Աբդուռահիմ Մուրադլին և այլք, տե՛ս *Goyushov A., Rovshanoglu K.,* A brief history of Salafism in Azerbaijan, Baku research institute, https://bakuresearchinstitute.org/a-brief-history-of-salafism-in-azerbaijan/

հովանավորելու նպատակով: Սակայն իրականում «Ալ-Իգաս»-ի ռեսուրսների մեծ մասը հատկացվում է ամբողջ աշխարհում գործող ծայրահեղական իսլամական խմբավորումների ֆինանսավորմանը: 1993-1995թթ. սաուդյան բարեգործական «Նիջաթ» («Փրկություն») կազմակերպությունն Ադրբեջանին հատկացրել է $4.6 մլն-ին համարժեք օգնություն: 1993թ. այն ֆինանսավորել է Բարդա և Սումգայիթ քաղաքներում ադրբեջանցի փախստականների համար կացարանների կառուցումը[1]: Ֆինանսական մեծ ներդրումները հնարավորություն էին տալիս հիմնել կրոնական դպրոցներ, բժշկական հաստատություններ, Ղուրանի և արաբերենի ուսուցման դասընթացներ, անվճար տրամադրել կրոնական գրականություն: 1990-ականների սկզբին Ադրբեջանում ակտիվ էին նաև ԱՄԷ-ում գործող Դար ալ Բիռ (Բարեպաշտության տուն) և քուվեյթյան Իհյա ալ-թուրաթ ալ-Իսլամի (Իսլամական ժառանգության վերածնունդ) կազմակերպությունները: Առաջին կազմակերպությունը զբաղվում էր հիմնականում որբանոցների ֆինանսավորմամբ և ընդհանուր առմամբ օգնություն է տրամադրել 900 երեխայի, իսկ երկրորդը՝ մզկիթների կառուցմամբ՝ ֆինանսավորելով Ադրբեջանի տարբեր շրջաններում 61 մզկիթի շինարարություն[2]: Որոշ աղբյուրների հավաստմամբ, քուվեյթյան կազմակերպությունները 1990-ականներին Ադրբեջանում կառուցել և վերանորոգել են ընդհանուր հաշվով 73 մզկիթ[3]: Մինչև 2003թ. օտարերկրյա ֆինանսավորմամբ Ադրբեջանում կառուցվել է 65 նոր մզկիթ, որոնք ղեկավարվում էին սալաֆիների կողմից[4]: Դրանցից ամենամեծը քուվեյթցի միլիոնատեր Մուհամադ իբն Բուդեյայի ֆինանսավորմամբ կառուցված Բաքվի Ջումա մզկիթն էր, որը բնակչության շրջանում հայտնի էր որպես Աբու Բաքր մզկիթ և հետագայում դարձավ Ադրբեջանի վահաբականների կենտրոնը[5], իսկ նրա իմամ Գամեթ Սուլեյմանովը՝ վահաբականների ոչ պաշտոնական առաջնորդ: Մինչ շիայական կամ սուննիական մզկիթները ուրբաթօրյա աղոթքին սովորա-

[1] Տե՛ս *Qasımlı M.,* Azərbaycan respublikasının xarici siyasətinin (1991-2003), Baki, 2015, s. 296-301:
[2] *Sattarov R.,* Islam, state, and society in independent Azerbaijan. Between historical legacy and post -Soviet reality with special reference to Baku and its environs, Germany, 2009, p. 146.
[3] *Məmmədli N.,* Azərbaycanda Islam və Gənclik, https://bakuresearchinstitute.org/az/islam-and-youth-in-azerbaijan/
[4] *Valiyev A.,* Islamic movements in Azerbiajna, May 17, 2018, http://mesbar.org/islamic-movements-in-azerbaijan/
[5] Մինչև Աբու Բաքր մզկիթի կառուցումը վահաբականների կենտրոն էր համարվում Բաքու քաղաքի հին հատվածում գտնվող «Լեզգիական» անունով հայտնի XII դարի մզկիթը: Ադրբեջանի կառավարությունը 1995թ. այն հանձնեց լեզգիական «Սամուր» ազգային կենտրոնին, որն էլ այն հանձնեց իր հայրենակից վահաբականների վերահսկողությանը:

բար կարողանում էին գրավել մոտավորապես 300 հավատացյալի, Աբու Բաքր մզկիթի այցելուների թիվը հասնում էր 5000-7000-ի[1,2]:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, երբ բացահայտվեց որոշ բարեգործական կազմակերպությունների կապն ահաբեկչական խմբավորումների հետ և հատկապես նրանց ադրբեջանական մասնաճյուղերի ակտիվ ներգրավվածությունն ահաբեկչական խոշոր գործողություններում, Ադրբեջանի ղեկավարությունը՝ հակաահաբեկչական պայքարի համատեքստում, սահմանափակեց և արգելեց որոշ արաբական իսլամական կազմակերպությունների ու հիմնադրամների գործունեությունը երկրում: Դրանից հետո միայն մի քանի արաբական բարեգործական կազմակերպություններ շարունակեցին իրենց գործունեությունն Ադրբեջանում, որոնցից ներկայում ամենաազդեցիկը քուվեյթյան Լաջնաթու մուսլիմի Ասիյա (Ասիայի մուսուլմանների կոմիտե) կազմակերպությունն է:

Լեզգիական գործոնը

Վահաբականությունը կարողացավ ամրապնդել իր դիրքերն Ադրբեջանում՝ տարածվելով հատկապես Ռուսաստանին սահմանակից հյուսիսային շրջաններում, որտեղի բնակչության ճնշող մեծամասնությունը տեղաբնիկ ժողովուրդներ՝ լեզգիներ, ավարներ, ծախուրներ և չեչեն գաղթականներ էին[3]: Այն, որ վահաբական գաղափարներն արձագանք գտան հիմնականում դաղստանյան լեզուներին պատկանող տեղաբնիկ ժողովուրդների շրջանում, պատահական չէր, քանզի նրանց ճնշող մեծամասնությունը սուննիադավան էր և ռազմատենչ վահաբականությունը դիտարկվում էր միջոց՝ դիմակայելու Ադրբեջանի ձուլողական քաղաքականությանը՝ պահպանելով ազգային ինքնությունը, լեզուն, մշակույթը և կրոնը: Կարելի է ասել՝ Ադրբեջանի հյուսիսկովկասյան ժողովուրդների շրջանում ազգայնականությունը զարթոնք էր ապրում կրոնական գաղափարների տարածմանը զուգահեռ:

[1] Interview with Imam of Abu Bakr mosque, Kavkazskiy Vestnik, Accessed May 24, 2004, www.kvestnik.org, մեջբերված է Valiyev A., Azerbaijan: Islam in a post-Soviet republic, Middel East Review on International Affaires, Vol 9, No. 4, Decmber 2005, http://www.rubincenter.org/meria/2005/12/valiyev%20pdf.pdf

[2] 2008թ. օգոստոսի 17-ին Ջումա մզկիթում տեղի ունեցավ ահաբեկչական հարձակում, որի արդյունքում 2 մարդ զոհվեց, 18-ը վիրավորվեց: Պաշտոնական հետաքննությունն ահաբեկչությունը վերագրեց «Անտառային եղբայրներ» սալաֆիական ծայրահեղական ռազմական միավորմանը և, ելնելով անվտանգության նկատառումներից, կառավարության որոշմամբ մզկիթը փակվեց:

[3] Տե՛ս *Юнусов А.,* Исламская палитра Азербайджана, Баку, 2012, стр. 9.

Հատկապես լեզգիները[1], որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո միջպետական սահմանով մասնատվել էին երկու հատվածի (նրանց մի մասը բնակվում է Ադրբեջանի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում, մյուսը՝ Դաղստանում), օգտագործում էին ընդհանուր վահաբական կրոնական հիմնաքարը՝ Հյուսիսային Կովկասում բնակվող իրենց ազգակիցների հետ միավորվելու և միացյալ Լեզգիստան հիմնելու համար: 1990-ականների սկզբին Ադրբեջանում սկսեց գործունեություն ծավալել լեզգիական ազգային «Սադվալ» (Միություն) շարժումը, որը պայքարում էր սկզբնական փուլում՝ Դաղստանի և Ադրբեջանի տարածքներում լեզգիական ինքնավարությունների, իսկ հետագայում՝ անկախ Լեզգիստան պետություն ստեղծելու համար: Երբ 1996թ. Ռուսաստանի մուսուլմանների միության անդամ Ասուլ Քասիմովը իրեն հռչակեց բոլոր լեզգիների իմամ, ադրբեջանցիների և լեզգիների միջև առկա ազգային լարվածությունը սրվեց՝ ընդունելով «ճշմարիտ հավատի» համար պայքարի դիմագիծ: Շաքի-Զաքաթալայի շրջանում 1990-ականների կեսից սկսեց գործել թյուրքական ահաբեկչական «Գարա չուբուգ» կազմակերպությունը, որի հիմնական թիրախը լեզգիական, ավարական և ծախուրական ազգային կազմակերպությունների ակտիվիստներն են: Կազմակերպությունը համարվում է ընդհատակյա, սակայն գործունեության մեթոդները կասկած չեն հարուցում, որ այն գործում է պետական հովանավորությամբ[2]: Կազմակերպության անդամները բռնություն, առևանգում, սպանություն են իրականացնում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ, հրահրում են իրավապահ մարմինների հետ բախումներ, և այս գործողություններն Ադրբեջանի իրավապահ մարմինների կողմից մնում են անպատիժ:

Չնայած ադրբեջանական իշխանություններին հաջողվեց ժամանակի ընթացքում չեզոքացնել լեզգիական ազգայնական շարժումը, արգելվեց «Սադվալ»-ի գործունեությունը երկրում՝ իսլամիստական ծայրահեղականների, հայ «ահաբեկիչների» հետ համագործակցելու մեղադրանքի հիման վրա, սակայն այսօր էլ լեզգիական քաղաքական օրակարգը չի կորցրել նշանակությունը: Ադրբեջանի իշխանությունները մինչ օրս լեզգիական

[1] Լեզգիները հիմնականում բնակվում են Քուսարի, Խաչմազի, Ղուբայի, Գաբալայի (Կուտկաշեն), Զաքաթալայի, Իսմայիլի, Գոյչայի շրջաններում, նաև Բաքվի մերձակայքում: 2009թ. Ադրբեջանի պաշտոնական տվյալների համաձայն, երկրում բնակվում է 180.3 հազար լեզգի, սակայն ըստ լեզգիական ազգային «Սամուր» շարժման՝ լեզգիների իրական թիվն Ադրբեջանում կազմում է 550.000-600.000, իսկ Դաղստանում՝ մոտ 350.000: Նրանց լեզուն պատկանում է կովկասյան լեզուների դաղստանյան ճյուղի լեզգիական ենթաճյուղին: Դավանում են իսլամի սունի ուղղությունը (շաֆիական մազհաբ):

[2] *Мелик-Шахназарян Л.,* Этнополитика Азербайджана, Ереван, с. 56.

խնդրի լուծումը տեսնում են ուժային մեթոդների մեջ: Ասվածի ապացույցն է լեզգիական շրջաններում ժամանակ առ ժամանակ կրոնական գործիչների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրագրողների, մտավորականների ձերբակալությունների փաստը: Լեզգի հասարակական-քաղաքական գործիչներն ադրբեջանական իշխանություններին, որպես կանոն, մեղադրում են մայրենի լեզուն սովորելու հետ կապված անհաղթահարելի դժվարությունների և լեզգիական շրջաններում սոցիալական տարաբնույթ խնդիրների առկայության մեջ[1]:

Ջիհադի մարտիկների դերը վահաբականության տարածման գործում

Ջիհադի մարտիկների միջոցով վահաբականության տարածումն Ադրբեջանում տեղի ունեցավ երեք փուլով՝ 1. արցախյան հակամարտության տարիների ընթացքում (1991-1994թթ.), 2. առաջին ռուս-չեչենական պատերազմի ընթացքում (1994-1996թթ.), 3. երկրորդ ռուս-չեչենական պատերազմի ընթացքում (1999-2000թթ.):

Խորհրդային Միության փլուզումից հետո Դաղստանում և Չեչնիայում վահաբականները սկսել էին բավական ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքական զարգացումներում, անգամ կարողացել էին Դաղստանի Կարամախի, Չոբանմախի և Քադար գյուղերում, իսկ Չեչնիայում՝ Ուրուս-Մարտանի շրջանում, ստեղծել «անկախ իսլամական տարածք»՝ փոքրիկ «վահաբական» պետություն[2]: Այս շրջաններից էլ 1990-ականների սկզբին Ադրբեջան ներթափանցեցին ռազմական վահաբականության քարոզիչները: Սկզբնական փուլում վահաբական գաղափարները լայն տարածում չգտան ադրբեջանցիների շրջանում, քանզի Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը հարում էր իսլամի շիա ուղղությանը, իսկ որպես զարգացման ուղի նախընտրելի էր թուրքական աշխարհիկ մոդելը, որում իսլամը դիտարկվում էր զուտ որպես թյուրքական ինքնության տարր: Սակայն 1993-ից սկսած՝ վահաբականների համար Ադրբեջանում ստեղծվեցին բարենպաստ պայմաններ, և նրանք սկսեցին ընդարձակել իրենց ազդեցության աշխարհագրությունը՝ հյուսիսային շրջաններից հասնելով Ապշերոնյան թերակղզի: Երբ թյուրքիզմի մոլի ջատագով Աբուլֆազ Էլչիբեյը

[1] *Փաշայան Ա.,* Իսլամական արմատականության դրսևորումներ Ադրբեջանում, 25.12.2008, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=478

[2] *Рощин М.,* Фундаментализм в Дагестане и Чечне, http://magazines.russ.ru/oz/2003/5/2003_5_62.html

իշխանությունը հանձնեց հավասարակշիռ քաղաքականության կողմնակից Հեյդար Ալիևին, իսլամի քաղաքական գործառույթը սկսեց լայնորեն օգտագործվել ինչպես երկրի ներսում՝ հասարակական համախմբման, այնպես էլ իսլամական երկրների ռազմական, ֆինանսական, քաղաքական օժանդակությունն ապահովելու նպատակով: Ադրբեջանի իշխանության կողմից սուննիական ուղղության տարբեր կառույցների, ներառյալ՝ վահաբականների գործունեությունը նաև դիտարկվում էր որպես իրանական շիայական կրոնական կառույցներին հակազդելու միջոց, որոնք նույնպես բարեգործական տարբեր կազմակերպությունների ծածկի ներքո սողոսկել էին Ադրբեջան՝ այն դիտարկելով իսլամական հեղափոխության արտահանման առաջին թիրախներից մեկը:

Վահաբական մարտիկների մեծ հոսք սկսվեց հատկապես արցախյան պատերազմի տարիներին, երբ Աֆղանստանից, Պակիստանից, Թուրքիայից, Չեչնիայից վարձկան մոջահեդները հավաքվեցին Ադրբեջանում՝ հայերի դեմ պայքարի կարգախոսով: Ադրբեջանի իշխանություններն ազգային-քաղաքական խնդիրների վրա խարսխված արցախյան հակամարտությանը փորձում էին հաղորդել կրոնական երանգ՝ նպատակ ունենալով ներգրավել իսլամական աշխարհի «ջիհադի մարտիկներին»: Ինչպես նշում է միջազգային ահաբեկչության գծով փորձագետ Ռոհան Գունարատնան (*Rohan Gunaratna*), Խորհրդային Միության փլուզումից հետո «Ալ-Քաիդա» կազմակերպությունն առաջինը Բաքվում հիմնեց իր մասնաճյուղը, որն աջակցում էր ադրբեջանցի մոջահեդներին Լեռնային Ղարաբաղի վիճելի անկլավի համար քրիստոնյա հայերի դեմ 1988-1994թթ. վարած պատերազմական գործողություններում[1]: Պակիստանի, Սաուդյան Արաբիայի, Սուդանի, Թուրքիայի ազգային անվտանգության ծառայությունների հովանավորությամբ արաբ, չեչեն, աֆղան մոջահեդները վերապատրաստում էին ստանում «Ալ-Քաիդայի» հատուկ ճամբարներում՝ Արցախի, հետագայում՝ Չեչնիայի, Բոսնիայի, Տաջիկստանի, Ուզբեկստանի հակամարտություններին մասնակցելու նպատակով: 1992թ. Ադրբեջանի և Չեչնիայի նախագահների միջև ձեռք բերված ռազմական համագործակցության արդյունքում չեչեն գրոհայինները՝ հայտնի ահաբեկիչներ Շամիլ Բասաևի, Սալման Ռադուևի, Ալ-Խաթաբի գլխավորությամբ, Արցախի տարբեր շրջաններում մասնակցել են հայերի դեմ ռազմական գործողություններին[2]: Ինչպես նշում

[1] Տե՛ս *Gunaratna R.,* Inside Al Qaeda: Global network of terror, New York, 2002, p. 134.
[2] Մանրամասն տե՛ս *Չոբանյան Գ.,* Իսլամական վարձկանները Ղարաբաղյան պատերազմում, «Վեմ» համահայկական հանդես, թիվ 3(43), հուլիս-սեպտեմբեր, 2013, էջ 164-165:

է Մերձավոր Արևելքի և ահաբեկչության գծով փորձագետ Ջոն Քենթ Քուլին (*John Kent Cooly*), մինչև 1994թ. ամառը չեչեն մոջահեդների թիվն արցախյան ռազմաճակատում հասել է 2500-ի, որոնց մեծ մասը տեղակայված էր սահմանին կից՝ հարավային ճակատում[1]: Իսկ Ռուսաստանի արտաքին հետախուզական ծառայության տեղեկությունների համաձայն, 1993թ. սեպտեմբերին 1500 աֆղան մարտիկներ են մուտք գործել Ադրբեջան[2]: Արդյունքում՝ արցախյան ռազմաճակատում կրելով պարտություններ՝ մոջահեդների խմբավորումները 1994թ. զորացրվեցին և տեղափոխվեցին տարածաշրջանային հակամարտությունների այլ կիզակետեր, իսկ նրանց որոշ մասն էլ, մնալով Ադրբեջանում, նպաստեց մաքսանենգության, թմրանյութերի վաճառքի, անօրինական գործողությունների աճին ու ծայրահեղական վահաբական գաղափարների տարածմանը՝ երկիրը դարձնելով միջազգային ահաբեկչական կառույցների ճանապարհային հանգույցներից մեկը[3]: Չեչենական պատերազմների ժամանակ Աֆղանստանից, Պակիստանից, Բոսնիայից, Մերձավոր Արևելքի երկրներից մոջահեդների ջոկատները, մեծաքանակ ռազմամթերքը և հումանիտար օգնությունը Հյուսիսային Կովկաս ներթափանցում էին հիմնականում Ադրբեջանի տարածքով: «Չեչենական ջիհադի» հովանավորները ֆինանսական փոխանցումների մեծ մասն իրականացնում էին Թուրքիայի ազգային անվտանգության և ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղի միջոցով[4], ինչում նշանակալից դեր է խաղացել հատկապես կազմակերպության ադրբեջանական ճյուղի ղեկավար Իսքենդեր Համիդովը: Ադրբեջանի բազմաթիվ քաղաքացիներ ռազմական վերապատրաստում էին անցնում մոջահեդների պատրաստման համար Չեչնիայում հիմնված Սաիդ իբն Աբու-Վաքաս ռազմական կենտրոնում, որը գտնվում էր «Մուսուլման եղբայրներ» միջազգային իսլամական կազմակերպության հովանու ներքո[5]: Անգամ 1995թ. սկզբին Չեչնիայի իսլամիստական հրամանատարները հայտարարեցին, որ «ադրբեջանցիները և կովկասցի այլ կամավորներ լեռներում գտնվող վերապատրաստման ճամբարներում սպասում են իրենց

[1] *Cooley J. K.,* Unholy Wars: Afganistan, America and International Terrorizm, London (new edition), 2000, p. 180.
[2] Նույն տեղում:
[3] Արդեն 1990-ականների կեսից Ադրբեջանում գործում էին «Ալ-Քաիդա» (Հիմք), «Ալ-Ջիհադ» (Սրբազան պատերազմ), «Ջամաա ալ-իսլամիա» (Իսլամական միություն), «Ջեյշուլ-լահ» (Ալլահի բանակ), «Հիզբ ուլ-Թահրիր» (Ազատագրման կուսակցություն), «Անտառային եղբայրներ» և այլ ահաբեկչական կազմակերպություններ:
[4] Տե՛ս *Cooly J. K.,* նշվ. աշխ., էջ 156:
[5] Տե՛ս *Кузьминов А.,* Граница на замке. Чечня готовится к агрессии? Совершенно секретно, 1998, N 2.

հերթին՝ հարձակում իրականացնելու ռուսական թշնամու և վրացական ռազմական ստորաբաժանումների վրա, եթե նրանք փորձեն միջամտել»[1]:

Ոչ միայն ադրբեջանցի մոջահեդները չեչենական պատերազմներից հետո վերադարձան Ադրբեջան, այլև նրանց հետ միասին եկան բազմաթիվ չեչեն փախստականներ: Ռուսական ռազմական ուժերը փորձում էին երկրից դուրս հանել սալաֆիական կողմնորոշում ունեցող չեչեն ապստամբներին դեպի հարևան Վրաստան և Ադրբեջան, 1999-2000թթ. Ադրբեջանում ապաստանեց 8000 վահաբական չեչեն փախստական[2]:

Ադրբեջանի ազգային անվտանգության նախկին նախարար Էլդար Մահմուդովը 2006թ. իր հայտարարության մեջ նշել էր, որ եթե մինչև սեպտեմբերի 11-ը Ադրբեջանը ահաբեկիչների համար միայն տարանցիկ երկիր էր, ապա հակաահաբեկչական կոալիցիայի անդամ դառնալուց հետո ահաբեկիչները սկսել են թիրախավորել նաև Ադրբեջանը[3]: Սակայն Ադրբեջանը ահաբեկչության թիրախ երկիր հանդիսանալուց առաջ նախ՝ ահաբեկչություն արտահանող երկիր է: Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարության հաղորդած տեղեկատվության համաձայն, Ադրբեջանի մոտավորապես 300 քաղաքացի ուսում է ստացել Հյուսիսային Կովկասի վահաբական կենտրոններում, իսկ 1999-2003թթ. երկրի իշխանությունները դատապարտել են ավելի քան 70 տեղացի վահաբականների՝ Չեչնիայում ռազմական գործողություններին մասնակցելու համար[4]: Վերջին տարիներին տարբեր երկրներում ջիհադի դրոշի ներքո տեղի ունեցող ահաբեկչական գործողություններին մասնակից Ադրբեջանի քաղաքացիների թիվն աճել է: 2013թ. ապացուցվեց Սիրիայում և Իրաքում ահաբեկչական գործունեություն իրականացնող տարբեր ռազմական իսլամիստական խմբավորումների կազմում ադրբեջանցի ջիհադականների ներգրավվածության փաստը[5]: Սկզբնական շրջանում ադրբեջանցի ահաբեկիչների «արտահոսքը» տեղի էր ունենում Ադրբեջանի իշխանությունների թողտվու-

[1] *Bodansky Y.,* Chechnya. The mujahedin factor, http://www.freeman.org/m_online/bodansky/chechnya.htm

[2] *Valiyev A.,* Azerbaijan: Islam in a post-Soviet republic, Middel East Review on International Affaires, Vol 9, No. 4, Decmber 2005, http://www.rubincenter.org/meria/2005/12/valiyev%20pdf.pdf

[3] *Valiyev A.,* Foreign terrorist groups and rise of home-growen radicalism in Azerbaijan, HUMSEC Journal, Issue 2, p. 101, https://www.researchgate.net/publication/52010785_Foreign_Terrorist_Groups_and_Rise_of_Home-_grown_Radicalism_in_Azerbaijan

[4] *Юнусов А.,* Азербайджан в начале XXI века: Конфликты и потенциальные угрозы, Баку, с. 117.

[5] Ադրբեջանի քաղաքացիները Սիրիայի և Իրաքի ռազմական գործողություններին մասնակցում էին «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար» (Ադրբեջանական ջամաա), Իսլամական պետություն («Ջունդուլլահ», «Խատաբ», «Աբու Քամիլ»), «Ջաբհաթ ալ-Նուսրա» ահաբեկչական կազմակերպությունների կազմի մեջ մտնող տարբեր իսլամական կառույցների կազմում: Մանրամասն տե՛ս *Գրիգորյան Ս.,* Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, 2016, էջ 173-180:

թյամբ, սակայն 2014-ից ի վեր, երբ լրատվամիջոցները և միջազգային տարբեր կառույցներ իրենց ուշադրությունը սևեռեցին Սիրիայի, Իրաքի ռազմական գործողություններին ադրբեջանցի մոջահեդների և նրանց ընտանիքների մասնակցության փաստի վրա, և, միևնույն ժամանակ, ջիհադական մարտիկների խմբերը սկսեցին վերադառնալ Ադրբեջան՝ կանգնեցնելով երկիրը իսլամական ծայրահեղականության լուրջ սպառնալիքի առջև, իշխանությունները դիմեցին պատժիչ և կանխարգելիչ գործողությունների[1]: 2014թ. մայիսին, Ադրբեջանի ոստիկանության տվյալների համաձայն, 104 քաղաքացի է լքել երկիրը՝ Սիրիայի ռազմական գործողություններին մասնակցելու համար, որոնցից 60-ը հետագայում մահացել է, 30-ը հետ է վերադարձել և ձերբակալվել իրավապահ մարմինների կողմից[2]: Կովկասի տարածաշրջանի վերլուծաբան Դավիդ Լոնարդոյի (*David Lonardo*) 2016թ. հաշվարկով՝ ավելի քան 800 ադրբեջանցի է մասնակցել Սիրիայի և Իրաքի ռազմական գործողություններին, և շուրջ 200-ը սպանվել է այնտեղ[3]: Ադրբեջանի պաշտոնական տեղեկատվության համաձայն, 2017թ. սեպտեմբերին մոտ 80 ադրբեջանցի պատասխանատվության է ենթարկվել Սիրիայում և Իրաքում ահաբեկչական խմբավորումների շարքերում ջիհադական պայքարին մասնակցելու համար, 151 ահաբեկիչների կողմնակից էլ զրկվել է ադրբեջանական քաղաքացիությունից[4]: Խոսուն է նաև այն փաստը, որ իրենց խմբերով Սիրիա և Իրաք են մեկնել նաև արցախյան, աֆղանական, չեչենական պատերազմներին մասնակցած զինված խմբավորումները (դրանցից հատկապես ակտիվ էր «Ղարաբաղի պարտիզաններ» կոչվող ջիհադական խմբավորումը): Նրանց համացանցային ուղերձները՝ անհավատներին ոչնչացնելու դիմաց երկրային և նյութական վարձատրություն ստանալու խոստումներով, ոգեշնչում են երկրի սոցիալ-մշակութային կյանքից վտարված, ծանր դրության մեջ գտնվող Ադրբեջանի քաղաքացիներին, որոնք անգամ իրենց կանանց, մանկահասակ երեխաների հետ

[1] Կառավարությունն ընդունեց օրենք, որով արգելվում է Ադրբեջանի քաղաքացիներին արտերկրում մասնակցել անօրինական ռազմական գործողություններին (2014թ. մարտ), սկսվեցին Սիրիայից, Իրաքից վերադարձած ադրբեջանցիների և տեղական իսլամական խմբավորումների անդամների լայնածավալ ձերբակալություններ, Կովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ շեյխ-ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն ընդունեց Սիրիայում ջիհադին մասնակցելու դեմ ֆեթվա, մանրամասն տե ս Radiclism and Jihadism in Azrbaijan, October 10, 2017, http://hrwf.eu/radicalism-and-jihadism-in-azerbaijan/?print=pdf

[2] The clear banner: The forgotten fighters: Azerbaijani foreign fighters in Syria and Iraq, February 2, 2015, https://jihadology.net/2015/02/02/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/

[3] *Lonardo D.,* The Islamic State and the connections to historical networks of Jihadism in Azerbaijan. *Caucasus Survey, 4*(3), 2016, p. 239.

[4] В Азербайджане арестованы 80 человек за участие на войне в Сирии и Ираке, 12.09.2017, https://www.meydan.tv/ru/site/news/25085/

դառնում են իսլամիստական ծայրահեղական գաղափարների հետևորդներ և ներգրավվում են «սրբազան պատերազմին»: Այս բոլոր գործընթացները նպաստում են Ադրբեջանում ծայրահեղական վահաբական գաղափարների տարածմանը և ահաբեկչական կազմակերպությունների բջիջների ամրապնդմանը, որոնք սպառնալիք են ինչպես Ադրբեջանի կայունությանը, այնպես էլ տարածաշրջանային անվտանգությանը:

Սալաֆիականության ներկայիս կարգավիճակն Ադրբեջանում

Ներկայում սալաֆիականությունը տարածված է ինչպես Ադրբեջանի հյուսիսային սուննիադավան բնիկ ժողովուրդների բնակության շրջաններում (Զաքաթալա, Բալաքան, Գուբա, Գուսար, Խաչմազ շրջաններում), Եվլախի, Բարդայի, Աղջաբադի շրջաններում, որտեղ 1990-ականներին արաբական բարեգործական կազմակերպությունների կողմից կառուցվել են վրանային ճամբարներ՝ արցախյան պատերազմի փախստականների համար, այնպես էլ Բաքու, Սումգայիթ քաղաքներում և այս քաղաքների արվարձաններում (ինչպես, օրինակ՝ Գաբուստանում, Ջեյրանբաթանում, Մուշֆիգաբադում): Դժվար է նշել սալաֆիական ուղղության հետևորդների ճշգրիտ թվաքանակն Ադրբեջանում, քանզի վերջին տասնամյակում կառավարության կողմից նրանց նկատմամբ կիրառվող ճնշումները[1] ստիպում են բացահայտ չցուցադրել իրենց պատկանելությունը սալաֆիական համայնքին, ինչպես նաև սալաֆիական բազմաթիվ մզկիթների փակումից հետո հետևորդներն իրենց գործունեությունը տեղափոխեցին համացանցային հարթակ[2] և սկսե-

[1] 2009-2013թթ. Ադրբեջանի իշխանությունների հրահանգով փակվել է 14 սալաֆիական մզկիթ, ձերբակալվել են ավելի քան 300 կրոնական շարժումների առաջնորդներ, աստվածաբաններ, լրագրողներ, 2009թ. կրոնական ազատության վերաբերյալ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, առավել բարդացվեցին կրոնական կազմակերպությունների գրանցման չափանիշները, կրոնական գործիչներին արգելվեց մասնակցել նախագահական և խորհրդարանական ընտրություններին, անգամ դառնալ կուսակցության անդամ, պետական շինություններից հեռացվեցին բոլոր կրոնական սիմվոլները, արգելվեցին կրոնական շարժումների քարոզչությունը և գործունեությունը, իսլամական արարողակարգերը հասարակայնորեն ցուցադրելը (ինչը ներառում է երկար մորուք պահելու, գլխաշոր կրելու հավատացյալների իրավունքը), արգելվեց ազանի կանչը, համացանցում, հեռուստածրագրերում հոգևորական երգերի հեռարձակումը, առանց պետական հատուկ թույլտվության հոգևոր գրականության, ձայնասկավառակների վաճառքը, մանրամասն տե՛ս *Ter-Matevosyan V., Minasyan N.,* Praying under restrictions: Islam, identity and social change in Azerbaijan, Europe-Asia studies, Routlage, London and New York, 2017.

[2] Սալաֆիական տարբեր համայնքների համացանցային հիմնական աղբյուրներն են՝ http://selefxeber.az/, https://abubakr-mescidi.com/, https://www.youtube.com/channel/UCr5T4t-3PetpQ1BJ-VqNJsw, https://www.youtube.com/channel/UClSqdMbs6itErCvTZ-IFhog/featured, http://as-sahih.com, https://www.youtube.com/channel/UCFcni7NGJS9aitV7_ftsoXA, https://www.youtube.com/user/burhanaznet/feed, https://www.youtube.com/user/yasharsuleymanli և այլն, որոնց միջոցով իրականացվում են սալաֆիական քարոզչություն, կրթական ծրագրեր, քննարկումներ և համայնքի անդամների համալրում:

ցին հաճախել սուննիական մզկիթներ, որտեղ թուրքական ազդեցություն ունեցող սուննիական համայնքի բազմաթիվ հետևորդների կարողացան շրջել իրենց կողմը[1]: Տարբեր մասնագետների կարծիքով՝ նրանց թիվն Ադրբեջանում տատանվում է 20.000-ից մինչև 100.000-ի սահմաններում[2]:

Որո՞նք են սալաֆիականության/վահաբականության տարածման նախադրյալները:

Պետք է հաշվի առնել այն փաստը, որ վահաբականությունն Ադրբեջանում, հարմարվելով տեղական միջավայրին, կրել է վերափոխումներ, և այսօր այն չի կարելի նույնացնել Սաուդյան Արաբիայի պաշտոնական գաղափարախոսությունը հանդիսացող կրոնաքաղաքական հոսանքի հետ: Վահաբականության քարոզչությունն ադրբեջանցիների համար գայթակղիչ է մի շարք պատճառներով. առաջին հերթին այն այլընտրանք է պետական համակարգի մաս հանդիսացող պաշտոնական իսլամական կառույցների ներկայացուցիչներին՝ հանդես գալով անօրինականությունների, չարաշահումների, իսլամական աղավաղված արարողակարգերի, սովորույթների դեմ[3], երկրորդ՝ քարոզում է ճշմարիտ հավատի շուրջ իսլամական միասնություն, ինչը լուծում է սուննի-շիա ուղղությունների միջև բաժանվածության խնդիրը և կարող է հանդիսանալ ազգային միասնության հիմք, երրորդ՝ առաջարկում է ներկայիս անվերահսկելի քաղաքական համակարգին իսլամական ավանդույթների և օրենքների վրա հիմնված այլընտ-

[1] Բաքվի պետական համալսարանի Իլահիյաթ մզկիթը, Գարաչուխուրի, Մուշֆիգաբադի, Մեհդիաբադի, Ջեյրանբաթանի, Գազախլար մզկիթները, որոնք մեծ մասամբ գտնվում էին Թուրքիայի ազդեցության տակ, անցան սալաֆիական ազդեցության ներքո, մանրամասն տե՛ս *Goyushov A., Rovshanoglu K.,* A brief history of Salafism in Azerbaijan, Baku research institute, https://bakuresearchinstitute.org/a-brief-history-of-salafism-in-azerbaijan/

[2] Ըստ Կրոնական հարցերով պետական կոմիտեի մասնագետների՝ սալաֆիականների թիվն Ադրբեջանում տատանվում է 20.000-50.000-ի սահմաններում (*Gasimov K.,* Examining Salafism in Azerbaijan. Transnational connections and local context, Religion and soft power in the South caucasus, edited by Jödicke A., London, 2017, p. 113), ադրբեջանցի հետազոտող Այդընն Ալիզադեն նշում է 70.000 թիվը (http://qaynarinfo.az/az/azerbaycanda-ne-qeder-vehabi-var-resmi-aiqlama/), սալաֆիական համայնքի ներկայացուցիչները նշում են 80.000 թիվը, իսկ ադրբեջանցի հետազոտողներ Այթան Գոյուշևի և Քանան Ռովշանօղլուի հաշվարկներով՝ նրանց թիվը տատանվում է 80.000-100.000-ի սահմաններում (*Goyushov A., Rovshanoglu K.,* A brief history of Salafism in Azerbaijan, Baku research institute, https://bakuresearchinstitute.org/a-brief-history-of-salafism-in-azerbaijan/):

[3] Չնայած Ադրբեջանի բնակչության մեծամասնությունն իրեն համարում է մուսուլման, նրանց մեծ մասը չի հետևում կրոնական արարողակարգերին, այլ, որպես մշակութային ժառանգության հիշողություն, ավելի շատ այցելում է ժողովրդական սրբավայրեր՝ փիրեր, ինչպես նաև «սրբերի» գերեզմաններ, որտեղ մատուցում են նվիրատվություններ, զոհեր, իսկ պաշտոնական հոգևորականությունը չի կանխարգելում այս գործընթացը, ինչն ապահովում է նրանց ֆինանսապես: Սալաֆիական հետևորդները նախ և առաջ պայքարում են այս սովորույթների դեմ՝ հաճախ հիմնահատակ քանդելով սրբատեղիները՝ համարելով դրանք իսլամին հակառակ:

բանքային համակարգ՝ հանդես գալով հասարակության սոցիալապես և քաղաքականապես ճնշված ու անտեսված հատվածի շահերի պաշտպանի դիրքերից, չորրորդ՝ հնարավորություն է տալիս ստեղծել մի «ազատ գոտի», որտեղ կարող են տեղի ունենալ իշխանության կողմից կաղապարված հասկացություններից դուրս քննարկումներ, հարցադրումներ և առաջադրվել խնդիրների հեռահար լուծումներ, հինգերորդ՝ դատապարտում է կառավարության ձախողված «մեղմ» քաղաքականությունն արցախյան խնդրի շուրջ՝ համարելով արցախյան պատերազմը ջիհադ, հետևաբար այդ խնդրի միակ լուծումն էլ՝ զենքի ուժը: Սակայն «վահաբական» հասկացությունն Ադրբեջանի իշխանությունների և կառավարամետ լրատվամիջոցների քարոզչության արդյունքում քաղաքական-հասարակական դաշտի ներկայացուցիչների մեծամասնության կողմից ավելի շատ ընկալվում է ոչ թե որպես իսլամական ուղղության հետևորդ, այլ որպես բացասական երանգ կրող հասկացություն՝ հաճախ ընդդիմադիր հայացքներ կրող կրոնական կամ քաղաքական ներկայացուցչին պիտակավորելու եզրույթ: Առավել վիրավորական նրանց անվանում են նաև «սաքալլար» («մորուքավորներ»), «քարասաքալլար» («սևամորուսներ»)[1]: Վերոնշյալի ապացույցն է այն, որ շիայադավան շրջաններում հաճախ սոցիալ-տնտեսական հակաօրինականությունների դեմ պայքարի հիման վրա հակակառավարական բողոքի ցույցերն Ադրբեջանի իշխանությունների կողմից որակվում են որպես պետության աշխարհիկ հիմքերը սասանող և ազգային անվտանգությանը լուրջ սպառնալիք հանդիսացող վահաբական ահաբեկչական գործողություններ: Ադրբեջանի ներկայիս կառավարությունն իր անօրինական իշխանութունը և գործունեությունը հիմնավորելու, ինչպես նաև հավանական քաղաքական ընդդիմության ձևավորումը բացառելու համար մշտապես կարիք ունի ներքին և արտաքին թշնամիների ու նրանցից բխող սպառնալիքների, որից առաջինի դերը 2000-ականներից սկսած ստանձնել է երկրի աշխարհիկությանը և կայունությանը սպառնալիք հանդիսացող իսլամիստական վտանգը: «Կրոնը մեր սրտերում է և չպետք է լինի մեր փողոցներում», այսպես է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ձևակերպել իշխանությունների դիրքը կրոնական խնդրի հետ կապված[2]: Կրոնական գաղափարախոսությամբ ոգեշնչված հասարակա-

[1] Տե՛ս *Юнусов А.,* Ислам в Азербайджане, 2004, Баку, с. 251.

[2] *Sobhani R.,* "Post-Soviet Modernity", The Washington Times, Auguset 7, 2009, մեջբերված է Ismayilov M., A Resacralization of public space and the future of (political) Islam in Azerbaijan: Quo vadis? CAP papers 186 (Fellows papers series), May, 2017, p. 3, https://app.box.com/s/g3ih5u39ig62bot95jei7ntqcutoh1l9

կան որևէ ակտիվություն ներկայացվում է արտաքին ուժերի ազդեցությամբ իսլամիստական ահաբեկչության ներթափանցում, ինչն ուղղված է հասարակության տարբեր շերտերի մոբիլիզացիան կանխելուն և քաղաքական դաշտում նրանց գործունեությունը սահմանափակելուն: Սակայն սալաֆիական համայնքի հետևորդներն իրենց չեն համարում վահաբականներ, իսկ շարժումն էլ՝ վահաբականություն, քանզի, ինչպես նշում են հավատացյալներից ոմանք, «վահաբականություն» տերմինը ճիշտ չէ այն պատճառով, որ չունի ոչ մի հիմնավորում Ղուրանում, այլ գոյություն ունի միայն «իսլամ» հասկացությունը: Հետևաբար, նրանք «իրական իսլամի», «մաքուր իսլամի», «Ղուրանի վրա հիմնված իսլամի» հետևորդներն են, ոչ թե վահաբականներ: Աբու Բաքր համայնքի իմամ Գամեթ Սուլեյմանովի կարծիքով, ինչպես ԱՄՆ-ում, երբ ցանկանում էին որևէ թիրախ ոչնչացնել, անվանում էին «Ռուսամա», կամ Ռուսաստանում՝ Չեչնիա, այնպես էլ Ադրբեջանում օգտագործում են «վահաբականություն» բառը, ինչը մեծ քաղաքական խաղ է[1]:

Ադրբեջանի սալաֆիներին ընդհանրական կերպով կարելի է բաժանել երկու խմբի՝ ապառազմականացված սալաֆիներ և ծայրահեղական՝ ռազմականացված սալաֆիներ: Առաջին խմբի գործունեությունը սահմանափակվում է աղոթքներով, քննարկումներով, ներքաղաքական գործունեությամբ, իսկ ռազմականացված սալաֆիները, հաճախ օգնություն ստանալով արտերկրից, մաս են կազմում համաշխարհային իսլամական ահաբեկչական համակարգի, և եթե նախկինում իրենց ռազմական պոտենցիալը սպառում էին Չեչնիայի, Իրաքի, Աֆղանստանի, Սիրիայի ռազմական գործողություններում, ապա այժմ լուրջ սպառնալիք են Ադրբեջանի ազգային անվտանգության համար: Սալաֆիական այս երկու խմբերը հակամարտության մեջ են միմյանց հետ: Ոչ ռազմականացված սալաֆիներն ընդունում են Ադրբեջանի ներկայիս իշխանությունների օրինականությունը, ուղղակիորեն ներգրավված չեն քաղաքական գործընթացների մեջ և կոչ են անում Ադրբեջանի քաղաքացիներին չմասնակցել այլ երկրների ռազմական գործողություններին, ինչպես նաև խուսափել ընդհարումներից պաշտոնական սուննիական և շիայական համայնքների հետ, մինչդեռ սալաֆիների ռազմականացված թևը հանդես է գալիս թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում ջիհադին մասնակցելու կոչերով:

Կարելի է ասել, որ մինչև «արաբական գարունը» Ադրբեջանում մեծ

[1] Տե՛ս *Bedford S.,* Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context, (Ph. D.), (Stockholm University), 2009, p. 130-131, https://www.diva-portal.org/smash/get/diva2:676750/FULLTEXT01.pdf

համբավ և դերակատարություն ուներ սալաֆիական համայնքի կենտրոն համարվող Աբու Բաքր մզկիթի իմամ Գամեթ Սուլեյմանովը, որը կրոնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրներ արծարծող յուրահատուկ քարոզների շնորհիվ շատերի համար ներկայիս իշխանություններին այլընտրանքային առաջնորդ էր համարվում: Սակայն նրա և Աբու Բաքր համայնքից առանձնացած Ալիխան Մուսաևի ու Ադիլ Ռաջաբովի միջև պայքարը՝ հիմնված սալաֆիական գաղափարախոսության ծայրահեղական և չափավոր ընկալումների տարբերությունների վրա, առավել պառակտեց սալաֆիական համայնքը և նվազեցրեց Սուլեյմանովի վարկանիշը հետևորդների շրջանում, ինչին նպաստեց նաև նրա հակակառավարական սուր քննադատություններից անցումը կառավարամետ մեղմ հայացքների: Միմյանց նկատմամբ առավելության հասնելու համար նրանք համագործակցում էին իսլամական պաշտոնական կառույցների հետ[1]՝ մեկը մյուսին մեղադրելով ջիհադական ծայրահեղական գաղափարների տարածման, սալաֆիական գաղափարներին հավատարիմ չլինելու, կառավարամետ դիրքորոշման համար և այլն: Սակայն իրականում այդ պայքարն ընթանում է սալաֆիական համայնքի առաջնորդի դերը ստանձնելու և արտաքին ու ներքին ֆինանսական աղբյուրները տնօրինելու խնդրի շուրջ:

Ադրբեջանի ղեկավարությունն ամեն կերպ նպաստում է սալաֆիական համայնքի պառակտվածությանը, որը վախ ունի իսլամական հզոր գաղափարախոսության շուրջ համախմբված քաղաքական ուժի պոտենցիալից: Սակայն պետության կողմից իրականացվող լայնածավալ ճնշումներն ու հալածանքները հակառակ ազդեցությունն են ունենում համայնքի վրա՝ ավելացնելով կողմնակիցների թիվը և ստիպելով դիմել առավել կտրուկ գործողությունների: Իշխող վարչակարգից հասարակության աճող դժգոհությանը զուգահեռ՝ քաղաքական ընդդիմության փաստացի բացակայության պայմաններում կրոնական գաղափարախոսությամբ համախմբված հասարակական խմբավորումներն ապագայում կարող են որոշիչ դեր խաղալ Ադրբեջանի ներքաղաքական դաշտում՝ սպառնալիք հանդիսանալով երկրի բռնատիրական վարչակազմին: Ներքաղաքական վտանգից խուսափելու և ալիևյան կլանի իշխանությունը պահպանելու համար հավանական է, որ Ադրբեջանի իշխանությունները երկրում տարածում գտած ռազմականացված իսլամական խմբերի և միջազգային ջիհադի մարտիկների ներուժը, ինչ-

[1] Գամեթ Սուլեյմանովը վայելում էր Կովկասի մուսուլմանների վարչության ղեկավար շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի հովանավորությունը, իսկ Ալիխան Մուսաևը՝ Կրոնական ասոցիացիաների հարցերով պետական կոմիտեի նախկին նախագահ Ռաֆիգ Ալիևի:

պես 1990-ականներին, այնպես էլ այժմ ուղղորդեն Արցախի Հանրապետության հետ ռազմական գործողությունների հարթակ:

Հոկտեմբեր, 2018թ.

ՍԱԼԱՖԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ/ՎԱՀԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Գայանե Չոբանյան

Ամփոփագիր

Ադրբեջանի անկախացումից հետո երկրի իշխանությունների հովանավորությամբ օտարերկրյա բարեգործական կազմակերպությունները և միջազգային ահաբեկչական իսլամիստական խմբավորումները հաստատվեցին Ադրբեջանում: Քաղաքական ազդեցություն ձեռք բերելու նպատակով նրանք օգտագործեցին իսլամական գաղափարախոսության «փափուկ ուժի» գործառույթը՝ ներմուծելով սալաֆիական/վահաբական ուսմունքն Ադրբեջան, որը որոշ ժամանակահատված անց սոցիալ-տնտեսական խնդիրներից իր գործունեության ոլորտը տեղափոխեց քաղաքական դաշտ: Այսօր Ադրբեջանը կանգնել է ինչպես իսլամիստական կառույցների ահաբեկչական, այնպես էլ չափավոր իսլամական ընդդիմության հավանական ձևավորման վտանգի առջև: Ելնելով քաղաքական նկատառումներից՝ «ոչ ավանդական» իսլամական կառույցներն Ադրբեջանի ղեկավարության կողմից ուղղակիորեն որակվում են ապակայունացնող, ծայրահեղական, ահաբեկչական, «վահաբական»: Երկրում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որ ցանկացած հակակառավարական, սոցիալ-տնտեսական բնույթի բողոքի դրսևորում որակվում է որպես երկրի աշխարհիկ հիմքերը սասանող ծայրահեղական իսլամական կառույցների անօրինական գործունեություն: Դեռևս արցախյան պատերազմից Ադրբեջանում հաստատված «միջազգային ջիհադի» մարտիկների խմբավորումները, կրոնական գաղափարախոսությամբ համախմբված հասարակական միավորումները լուրջ սպառնալիք են ստեղծում Ադրբեջանի իշխող վարչակազմի համար, որոնք ապագայում կարող են ապակայունացնող գործոն հանդիսանալ ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային հավասարակշռության համար:

САЛАФИЗМ/ВАХХАБИЗМ В АЗЕРБАЙДЖАНЕ

Гаяне Чобанян

Резюме

После обретения независимости и во многом благодаря поддержке властей в Азербайджане обосновались международные исламские благотворительные организации и террористические группировки. В целях обретения политического влияния ими был использован фактор мягкой силы исламской идеологии. В

Азербайджане было внедрено учение салафизма/ваххабизма, которое, спустя некоторое время, перенаправило свою деятельность из социально-экономической сферы в политическую. Сегодня Азербайджан стоит перед угрозой образования не только умеренной исламской оппозиции, но и террористических группировок. Исходя из политических соображений, «нетрадиционные» исламские учреждения стали квалифицироваться властями Азербайджана как деструктивные, радикальные, террористические и «ваххабитские». В стране сложилась такая обстановка, при которой любые антиправительственные, социально-экономические протесты рассматриваются как незаконная деятельность радикальных исламистских учреждений, целью которых является разрушение светских основ Азербайджана. Обосновавшиеся со времён начала Арцахской войны группировки боевиков «международного джихада», а также объединённые религиозной идеологией общественные организации, создают серьезную угрозу для властей. В будущем они могут послужить деструктивным фактором как для внутреннего, так и для регионального равновесия.

SALAFISM/WAHHABISM IN AZERBAIJAN

Gayane Chobanyan

Resume

After Azerbaijan gained independence, foreign charity organizations and international terrorist Islamist groups were established in the country with the support of Azerbaijan's authorities. In order to gain political influence on Azerbaijan they have used the “soft power” of Islamic ideology by expanding the teachings of Salafism/ Wahhabism to Azerbaijan. After some time these groups have moved their activities from the socio-economic sector to the political arena. Today Azerbaijan faces a threat of the possible formation of not only moderate Islamic opposition, but also terrorist groups. Out of political considerations “non-traditional” Islamic institutions are qualified as deconstructive, radical, terrorist or “Wahhabi” structures by the government of Azerbaijan. A situation has developed in the country when any anti-governmental or socio-economic protests are considered illegal activities of radical Islamist structures whose aim is to destroy Azerbaijan’s secular basis. Militant groups of “international jihad” that have set up in Azerbaijan since the beginning of Artsakh war, create serious dangers for the government of Azerbaijan. In the future they can have destructive factor both for domestic and regional balance.

ՆԵՈԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Լևոն Ռուխկյան*

Բանալի բառեր՝ նեոազատականություն, տեսական նեոազատականություն, կոլոքվիում, քեյնսականություն, նեոկոնսերվատիզմ:

Նեոազատականություն հասկացության և գաղափարական հիմքերի ճիշտ ընկալման նպատակով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ «նեոազատականություն» եզրույթի ծագման պատմական ակունքներին, ինչպես նաև այն գիտական դպրոցների գործունեությանը, որոնց շրջանակներում էլ այս ֆենոմենի համար ապահովվել է տեսական և գործնական զարգացում: Ինչ վերաբերում է «նեոազատականություն» եզրույթին, ապա տվյալ բառի առաջին գործածումը կապվում է ֆրանսիացի գաղափարախոս և տնտեսագետ Չարլզ Գայդի անվան հետ, որն ուսումնասիրվող եզրույթն օգտագործել է 1898թ. տպագրված իր հոդվածներից մեկում, որտեղ բանակռվի մեջ էր մտել «այսպես կոչված նեոազատական» իտալացի տնտեսագետ Մաֆեո Պանտալեոնիի հետ[1]:

Ժամանակակից իմաստով այս տերմինն առաջին անգամ օգտագործվել է 1925թ. շվեյցարացի տնտեսագետ Հանս Հոնեգերի «Տնտեսական գաղափարների միտումները» գրքում: Տնտեսական մտքի զարգացման՝ իր ժամանակներին ներհատուկ միտումների քննության արդյունքում Հ.Հոնեգերը կիրառել է «տեսական նեոազատականություն» արտահայտությունը, որի ներքո նկատի ուներ հայեցակարգ, որն առաջ էր քաշում մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման գաղափարը որպես այլընտրանք սոցիալիզմի և բոլշևիզմի էթատիստական գաղափարներին[2]:

---

* Հայ-ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ:

[1] *Thorsen D.E.,* Lie A., What is Neoliberalism? URL: http://folk.uio.no/daget/neoliberalism.pdf

[2] *Walpen B.,* Die offenenFeinde und ihreGesellschaft. EinehegemonietheoretischeStudiezur Mont PнlerinSociety.Hamburg: VSA-Verlag. 2004. P. 68.

Ուսումնասիրվող եզրույթն առաջին անգամ հասարակական հնչեղություն ստացավ և օգտագործվեց նոր գաղափարական-քաղաքական ուղղության մատնանշման նպատակով 1938թ. օգոստոսի 26-30-ն ընկած ժամանակահատվածում Փարիզում կայացած միջազգային կոնֆերանսի շրջանակներում: Կոնֆերանսը կազմակերպվել էր ֆրանսիացի փիլիսոփա, քաղաքագետ և տնտեսագետ Լուի Ռուժիեի նախաձեռնությամբ, որը կոնֆերանսին մասնակցության հրավեր էր ուղարկել ազատական գիտնականների և հասարակական գործիչների Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Բրիտանիայից, Ավստրիայից, Գերմանիայից, Բելգիայից, Իսպանիայից: Կոլոքվիումին մասնակցեց ընդհանուր առմամբ 26 մարդ:

Կոնֆերանսի օրակարգի կենտրոնական կետն ամերիկացի հայտնի քաղաքական լրագրող և գրող Ուոլթեր Լիպմանի «Հասարակության բարեկեցության սկզբունքների ուսումնասիրություն» (անգլ.՝ «*An Inquiry into the Principles of the Good Society*», 1937թ., թարգմանվել է ֆրանսերեն 1938թ.) գրքի քննարկումն էր: Այստեղից էլ ամրագրվել է կոնֆերանսի անվանումը՝ «Լիպմանի կոլոքվիում»[1]:

Կոլոքվիումի ժամանակ քննության առնվեցին այնպիսի մեթոդոլոգիական հարցեր. ինչպիսիք են.

- ազատականության էպիսթեմոլոգիական ստատուս՝ գաղափարախոսություն և քաղաքականություն,
- «ազատություն» հասկացության նշանակությունը՝ պոզիտիվիստական և նեգատիվիստական հայեցակարգեր,
- վստահություն առ այն, որ հնարավոր է հասնել շուկայական օպտիմալ հավասարակշռության,
- անձնական ազատության փոխգործակցությունը մասնավոր սեփականության և սոցիալական արդարության հետ մեկ համակարգում,
- պետական ինտերվենցիալիզմի ընդունումը կամ մերժումը և այլն:

Կոլոքվիումի ընթացքում որոշում ընդունվեց ստեղծել Ազատականության ռենովացիայի մշտական միջազգային հետազոտական կենտրոն, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Փարիզում: Դրա մասնաճյուղերը գործարկվել են Ժնևում՝ Ռեպկեի նախագահությամբ, Լոնդոնում՝ Հայեկի նախագահությամբ և Նյու Յորքում՝ Լիպմանի նախագահությամբ: Այսպիսով, ուսումնասիրվող կոլոքվիումը հիմք դրեց նեոազատական գիտական-

[1] *Audier S.,* Le Colloque Lippmann.Aux origines du nйoliberalisme.Latresne: Йditions “Le bord de l’eau”, 2008. 355 p.

հետազոտական կենտրոնների ինտերնացիոնալ ցանցի ստեղծմանը, ինչի արդյունքում նեոազատականությունը վերածվեց միջազգային գաղափարական-քաղաքական շարժման:

Ներկայացվածից անմիջապես հետո նեոազատականությունը քննարկումների լայն ալիք բարձրացրեց, ինչն էլ հիմք դարձավ այն բանի, որ «նեոազատականություն» եզրույթը շատ արագ դարձավ տեսական ռեֆլեքսիայի առարկա: Նեոազատականությունն առաջին անգամ գիտական ուսումնասիրության առարկա դարձավ ֆրանսիացի գիտնական Գաետանո Պիրոյի աշխատության մեջ, որն անվանվել էր «*Neo-liberalisme, neo-corporatisme, neo-socialisme» (Paris, Gallimard*, 1939):

Նեոազատականության վերաբերյալ ժամանակակից գաղափարական-քաղաքական պատկերացումներն առանձնացվում են ըստ հայեցակարգային տեսական դրույթների և մեկնաբանությունների միանգամայն լայն շրջանակով: «Նեոազատականություն» հասկացությունն ուսումնասիրող հեղինակների մի խումբ՝ Ս.Պ. Զոլոտարևը[1], Ա.Վ. Պոպովան[2], Վ.Վ. Շաբելնիկը[3] և այլք, գտնում են, որ նեոազատականությունը XVII-XIX դարերի դասական լիբերալիզմի էվոլյուցիոն ժամանակակից մակարդակն է: Նշված հեղինակներն իրենց տեսակետը մեկնաբանում են այն հանգամանքով, որ 20 -րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին առաջ եկան տարբեր գաղափարական հոսանքներ, որոնց համար որպես գաղափարական հիմք ծառայում էին ազատական մտքի ամեն հնարավոր մոդիֆիկացիաները՝ սկսած սոցիալ ազատականությունից, քեյնսականությունից մինչև նեոկոնսերվատիզմ:

Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում մենք եկանք այն եզրահանգման, որ կարելի է առանձնացնել նեոազատականության սահմանման հինգ հիմնական մոտեցում:

Առաջին մոտեցման համաձայն՝ նեոազատականությունը կարելի է մեկնաբանել որպես ազատական մտքի զարգացման նորագույն փուլ, որը կոչված է ապահովել փոխգործակցությունը դասական ազատական մտքի և սոցիալիստական գաղափարախոսության տարրերի միջև՝ ստեղծելով

[1] *Золотарев С.П.*, Идеология либерализма как фактор трансформаций российской государственности: теория и практика: автореф. дис. … д-ра филос. Наук: 09.00.11 / Золотарев Сергей Петрович, Краснодар, 2012, 42 с.

[2] *Попова А.В.,* Теоретико-правовое исследование неолиберальной политико-правовой доктрины в России (конец XIX - начало XX вв.): автореф. дис. … д-ра юрид. наук: 12.00.01 / Попова Анна Владиславовна, М., 2014, 48 с.

[3] *Шабельник В.В.,* Неолиберализм и неоконсерватизм в российском и зарубежном политическом дискурсе: автореф. дис. … канд. полит.наук: 23.00.02 / Шабельник Виктор Владимирович, СПб., 2006, 184 с.

ընդհանրական սկզբունքներ, մասնավորապես սոցիալական պետության, իրավական սոցիալիզմի և սոցիալական համերաշխության կամ միաբանության միջև: Այսպիսի մոտեցումը հիմք է ծառայել ազատական մտքի այնպիսի ներկայացուցիչների գաղափարների մեկնաբանման համար, որպիսիք են Ս.Ի. Գեսսենը, Բ.Ա. Կիստյակովսկին, Պ.Ի. Նովգորոդցևը, Մ.Ի. Տուգան-Բարանովսկին և այլք[1]: Իր դոկտորական ատենախոսության մեջ Ա.Վ. Պոպովան ընդգծում է, որ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին նեոլիբերալները միտված էին կամրջել լիբերալիզմը և սոցիալ-դեմոկրատիզմը: Աշխատության մեջ հեղինակը գալիս է եզրահանգման, որ, ի վերջո, ռուս նեոլիբերալները կարողացան ստեղծել բաց քաղաքացիական հասարակության և սոցիալ-իրավական պետության տեսական մոդել[2]: Այս մոտեցման համատեքստում եզրահանգում ենք, որ նեոազատականությունը մեկնաբանվում է որպես դրական քայլ հօգուտ սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության զարգացման:

Երկրորդ մոտեցումը մեթոդոլոգիական տեսանկյունից բավական սերտ կապակցված է առաջին մոտեցմանն այն մասով, որ փորձ է արվում ապահովել փոխգործակցություն ազատական արժեքների և սոցիալական կողմնորոշում ունեցող պետության, շուկայի պետական կարգավորման գաղափարների միջև: Սույն մոտեցմամբ նեոազատականությունը կապվում է քեյնսականության հետ[3], վերջինն էլ իր հերթին 20-րդ դարի առաջին կեսից մեզ հայտնի տնտեսագետ Ջ.Մ. Քեյնսի մոտեցումն է առ այն, որ մրցակցության և պետական կարգավորման միջև պետք է ապահովել արդյունավետ փոխհարաբերակցություն[4]:

Երրորդ մոտեցման համաձայն՝ «նեոազատականությունը» մեկնաբանվում է սկզբունքորեն այլընտրանքային գաղափարների միջոցով: Առաջին դեպքում այն մեկնաբանվում է հասարակության կառավարման կենտրոնացված պետական սոցիալիստական տեսությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ շուկայական հարաբերությունների պետական կարգավորման քեյնսական գաղափարախոսությամբ[5]: Այսպիսի մոտեցմամբ հանդես են

[1] *Попова А.В.,* Неолиберальная модель государственного общественного устройства России на рубеже XIX-XX веков. М., Юрлитинформ, 2012, 232 с.
[2] *Попова А.В.,* Теоретико-правовое исследование неолиберальной политико-правовой доктрины в России (конец XIX - начало XX вв.): автореф. дис. … д-ра юрид. наук: 12.00.01 / Попова Анна Владиславовна, М., 2014, 48 с.
[3] Նույն տեղում:
[4] Неолиберализм // Погорелый Е.Д., Филиппов К.В., Фесенко В.Ю., Политологический словарь-справочник, Ростов н/Д: Феникс, 2010, 318 с.
[5] *Беляков А., Матвейчев О.*, Большая актуальная политическая энциклопедия, М., Эксмо, 2009, 412 с.

եկել Ա.Բելյակովը, Օ.Մատվեյչևը: Մոտեցման քննության արդյունքում փաստենք, որ «նեոազատականություն» եզրույթի ներքո այս մոտեցման ներկայացուցիչները ենթադրում են ազատ մրցակցության, արդյունավետ շուկայական ձեռնարկատիրության տեսությունները, շուկայակենտրոն պետական քաղաքականությունը, մարքեթինգի սկզբունքների գործառնումը հասարակական կյանքի տարբեր ասպեկտներում: Դ.Հարվիի խոսքերով՝ «նեոազատականությունն առաջին հերթին քաղաքատնտեսական տեսություն է, որի դրույթները լայն կիրառություն ունեն գործնականում: Այս տեսության համաձայն, անհատը կարող է հասնել բարեկեցության՝ կիրարկելով իր ձեռնարկատիրական հնարավորություններն ազատ շուկայավարման պայմաններում, որոշ ինստիտուցիոնալ սահմանափակումներով: Այս համատեքստում պետության դերը միտված է այդօրինակ ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծմանը և պահպանմանը»[1]: Այս մոտեցման համակարգում «նեոազատականությունը» մեկնաբանվում է նաև որպես հասարակական հարաբերությունների կոմերցիալիզացիայի և տոտալ մարքեթիզացիայի փիլիսոփայություն և ռազմավարություն: Ըստ Փոլ Թրենորի՝ նեոլիբերալիզմը փիլիսոփայություն է, որն աշխարհը դիտարկում է որպես շուկայի մետաֆոր[2]: Այս տեսության վերաբերյալ իրենց կարծիքներով բավական հայտնի են Ֆրիդրիխ ֆոն Հայեկը[3] և Միլտոն Ֆրիդմանը[4], որոնց աշխատություններին դեռևս կանդրադառնանք:

Չորրորդ մոտեցման համաձայն՝ նեոազատականությունը «համաշխարհային տնտեսական ուսմունք է» և միաժամանակ «Վաշինգտոնյան կոնսենսուսի» ռազմավարություն[5], որը միտված է զարգացող երկրների տնտեսությունների ռադիկալ բարեփոխումների՝ տնտեսական հարաբերությունների մասնավորեցման կամ պրիվատիզացիայի, մարքեթիզացիայի և մոնետիզացիայի ուղղությամբ, ինչը պայմանավորված է վերազգային կորպորացիաների տնտեսական գերակայությամբ:

Ըստ հինգերորդ մոտեցման՝ նեոազատականությունը կապիտալիզմի

[1] *Харви Д.,* Краткая история неолиберализма. Актуальное прочтение, М., Поколение, 2007, с. 10.
[2] *Тренор П.,* Неолиберализм: происхождение, теория, определение.
URL: http://web.inter.nl.net/users/ Paul.Treanor/neoliberalism.html
[3] *Боно Д.* Фридрих фон Хайек, крестный отец ультралиберализма.
URL: http://www.voltairenet.org/ article133511.html
[4] *Каримов А.В.,* Неолиберализм Милтона Фридмана как учение о свободе // Социально-экономические явления и процессы, 2013. Выпуск 3 (049), с.184-189.
[5] *Williamson J.,* The Washington Consensus Revisited. WashingtonD.C.: 1997 URL: https://inef.uni-due.de/PolitikOn/Williamson.pdf; *Давыдов В.М., Бобровников А.В., Теперман В.А.,* Феномен финансовой глобализации, М., ИЛА РАН, 2000, 204 с.

զարգացման ժամանակակից մակարդակն է՝ կապված առանց բացառությունների բոլոր հասարակական հարաբերությունների համաշխարհային տրանսֆորմացիայի և հանրային գիտակցության՝ նոր աշխարհընկալման և անհատականության կայացման բոլոր ձևերի հետ[1]: Այս տեսությամբ են բացատրվում մասնագիտական գրականության մեջ հանդիպող այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «համաշխարհային նեոազատականություն»[2], «նեոազատական համաշխարհայնացում» և «նեոազատական համաշխարհային նախագիծ»[3], «նեոազատականության դարաշրջան»[4], «նեոազատական հեղափոխություն»[5], «նեոազատական հանգույց»[6], «նեոազատական լուծ»[7] և այլն:

Նեոազատականության վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաև Ա.Ենգոյանը: Վերջինս փաստել է, որ ազատականության նոր տեսակի կայացումն իրականացել է միմյանց հակասող տարբեր ուղղություններով: Մի կողմից՝ նկատելի են հավասարությունը և արդարությունը, պետության կարգավորող դերի ռացիոնալիզացիան, լիբերալ-ռեֆորմիզմի գերակայությունը կամ սոցիալ-լիբերալիզմը, որը քաղաքական առումով արդեն թույլ էր: Մյուս կողմից՝ զարգանում էին հակաքեյնսական հայեցակարգեր, որոնք բացառում էին պետության միջամտությունը տնտեսությանը, վերջինիս ակտիվ մասնակցությունը սոցիալական կյանքին[8]:

Քննության առնված տեսություններից յուրաքանչյուրն արտացոլում է նեոազատականության հիմնարար հայտանիշները որպես տնտեսագիտության տեսության և պրակտիկայի, ինչպես նաև քաղաքական փիլիսոփայության և համաշխարհայնացման դարաշրջանի քաղաքական գաղափարախոսության առավել ազդեցիկ հոսանք: Այս համատեքստում մենք հնարավոր ենք համարում ներկայացված երրորդ, չորրորդ և հինգերորդ մոտե-

[1] *Бетто Ф.,* Неолиберализм: новая фаза капитализма.
URL: http://scepsis.net/library/id_2298.html; Хомски Н. Неолиберализм и глобальный порядок.
[2] *Hursh, D.W., Henderson, J.A.*, Contesting global neoliberalism and creating alternative futures. // Studies in the Cultural Politics of Education. 2011. № 32(2), P. 171-185.
[3] *Мосейкин Ю.Н.,* Неолиберальный глобальный проект // Журнал экономической теории, 2009, № 2, с. 200-206.
[4] *Thorsen D.E.,*Lie A. What is Neoliberalism? URL: http://folk.uio.no/daget/neoliberalism.pdf
[5] *Giroux H.,* On Resisting the Neoliberal Revolution. URL:
http://billmoyers.com/2014/02/21/henry-giroux-on-resisting-the-neoliberal-revolution/.
[6] *Ждановская А.А.,* Куда ведут Россию МВФ, Всемирный Банк и ВТО? Кн. 1. Механизмы создания зависимости, М., Ленанд, 2015, 256 с.; *Ждановская А.А.,* Куда ведут Россию МВФ, Всемирный Банк и ВТО? Кн. 2. Россия в неолиберальной петле, М., Ленанд, 2015, 264 с.
[7] *Иоффе И.,* Неолиберальное иго (рецензия на выход русского издания книги Дэвида Харви «Краткая история неолиберализма») URL: http://left.ru/2006/18/ioffe152.phtml
[8] *Енгоян А.П.,* Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Ер., 2011, с. 158.

ցումները միավորել մեկ մոդելում և առաջարկում ենք նեոազատականության հետևյալ սահմանումը. «Նեոազատականությունը գերակա գաղափարական-քաղաքական հոսանք էր համաշխարհայնացման ժամանակաշրջանում, որը նպատակամղված էր հասարակական հարաբերությունների վերափոխմանը վերազգային կորպորացիաների շահերի համատեքստում մարքեթինգային պարադիգմի համակողմանի ընկալման ապահովման և Վաշինգտոնյան կոնսենսուսի դրույթների իրացման միջոցով»: Վերջին միտքը հնարավոր է, քանի որ նշված կոնսենսուսը դրել է պետության դերը նվազագույնի հասցնելու խնդիրներ:

Մեր կարծիքով, «նեոազատականություն» եզրույթի մեկնաբանման առաջին և երկրորդ մոտեցումները մեթոդոլոգիական տեսանկյունից ընդունելի չեն, քանի որ գաղափարական տեսանկյունից (պետության ֆենոմեն, պետական սոցիալական քաղաքականության փոխհարաբերակցություն և այլն) հակասում են մինչ այդ գոյություն ունեցող ընկալումներին և քեյնսականության հիմնական մոտեցումներին: Կարծում ենք, որ այդ երկու մոտեցումներում տրված մեկնաբանություններին համապատասխանող եզրույթը «նոր լիբերալիզմն է»: Բացի այդ, բազմաթիվ հեղինակներ[1] այս եզրույթն են կիրարկում ազատականության տեսության և սոցիալական պետության հայեցակարգի միասնականացման հիմքում:

Նոյեմբեր, 2018թ.

ՆԵՈԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Լևոն Ռուխկյան

Ամփոփագիր

Հոդվածում անդրադարձ է կատարվում նեոազատականություն հասկացությանն ու նրա սահմանումներին տարբեր գիտնականների կողմից: Նեոազատականության վերաբերյալ ժամանակակից գաղափարական-քաղաքական պատկերացումները ներկայացվում են լայն շրջանակով՝ ըստ հայեցակարգային տեսական դրույթների և մեկնաբանությունների: Հոդվածում քննության առնված տեսություններից յուրաքանչյուրն արտացոլում է նեոազատականության հիմնարար հայտանիշները որպես տնտեսագիտության տեսության և

[1] *Сиземская И., Новикова Л.,* Новый либерализм в России // Общественные науки и современность, 1993. № 5, с. 132-140.

պրակտիկայի, ինչպես նաև քաղաքական փիլիսոփայության և համաշխարհայնացման դարաշրջանի քաղաքական գաղափարախոսության առավել ազդեցիկ հոսանք:

ПОНЯТИЕ НЕОЛИБЕРАЛИЗМ И ЕГО ИДЕЙНЫЕ ОСНОВЫ

Левон Рухкян

Резюме

В статье рассматривается понятие «неолиберализм» и его определения, даваемые разными учеными. Современные идеологическо-политические представления о неолиберализме представляются в широком спектре, обусловленном разными концептуальными постулатами и трактовками. Каждая из рассматриваемых в статье теорий отражает фундаментальные свойства неолиберализма как экономической теории и практики, а также политической философии и наиболее влиятельного течения политической идеологии в эпоху глобализации.

THE CONCEPT AND IDEOLOGICAL FOUNDATIONS OF NEOLIBERALISM

Levon Rukhkyan

Resume

The article reviews the concept of neoliberalism and its definitions by various scholars. The modern ideological and political perceptions about neoliberalism are presented in a wide framework, according to the conceptual theoretical tenets and interpretations. Each of the theories examined in the article reflects the fundamental characteristics pf neoliberalism as economics theory and practice, as well as the most powerful movement in the political philosophy and ideology of the globalization era.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 10 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.12.2018թ.
Թիվ 6 (82), 2018թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում